




840

L III-5.









# ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ Ա. Մ Ս Ա. Գ Ի Ը

№ 7 1895

**S A H L B U**

1895 № 7

ԵՐԱՐԴԱՐԴ ՏԱՐԻ

Lipkin

1	ՓԱՓԱԶԵՍԱՆ, Վ.	915	Թաթեն հաճովքներ (պատմւածք):
2	ՊԼԵՇՎԵՏԻՒՑ—ԱՐՄԵՆԻ.	923	Ձեր կենացը (բանաստեղծ.):
3	ՓԱՓԱԶԵՍԱՆ, Վ.	924	Ավիշա (պարսկական պոէմա):
4	ԾԱՏՈՒՐԵՍԱՆ, ԱԼԵՔՍԱՆԴՐ	929	Դարձնեալ սիրոյ կեանք (բանաստ.):
5	"	930	Կայջեր (բանաստեղծ.):
6	ԲԱՇԻՆՉԱՂԵՍԱՆ, ԴԷՈՐԴ	931	Ալրացի իւանէ (պատմւածք):
7	ՇԱՆԹ	944	Խնչպէս մէզը (բանաստեղծ.):
8	"	945	Սևերու մէջ (բանաստեղծ.):
9	ԴԵՄԻՐՃԵՍԱՆ, ԴԵՐԵՆԻԿ	947	Մ.-ին (բանաստեղծ.):
10	ՍԵՅԼԱՆ	948	Տաճկա-Հալաստանի ազգաբնակութիւնները:
11	ՏԵՐ-ՄԿՐՏՉԵՍԱՆ, ԴԱԼՈՒՏ	962	Դարագաշ. «Քննակի. պատմ. հայոց:
12	ԱՐԱՍԻԱՆԵՍԱՆՑ, ԱԼԵՏԻՔ	979	Ժամանակակից տեսութիւն.—Հայկական խնդրի նորագոյն զարգացումը. Յօդւած հինգերորդ. Բանտերը և բանուարկեալ ծնները. Զանազան լուրեր:
13	ԽԱՐԵ	1028	


#### ՏԵՂ ԿԱՎՈՐ և ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

© 1991 by U

ՏԱՐԱՆԴԱ: Ա. Պ. ԱՅՍԻՆՎԵՐՅԻ

Типографія М. Д. Ротніанна, Гол. пр., д. № 41.

1895



# ՄԱՀԻ Ճ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍՏՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

№ 7 1895

ՅՈՒԼԻՍ

1895 № 7

ԵՕԲԵՐԱՐԴ ՏԱՐԻ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊՈՐՈՆ Մ. Դ. Ա-ՕՏԻՒԵԱՆՑԻ

Տիպոգրաֆія М. Д. Ротиніанца, Гол. пр. լ. № 41.

1895

Дозволено цензурою. Тифлисъ, 15 Июня, 1895 г.

## ԹԵԹԵՒ ՀԱՃՈՅՔՆԵՐ

(Մի թիւրքահայ եպիսկոպոսի նամակից)

Վ. ՓԱՓԱՉԵԱՆԻ

...Ուզում՝ ես որ քեզ մի բնորոշ դէպք պատմեմ քրդերի բարբարոսութիւններից, որդիս Պատմեմ, բայց երեսդ չծածկես ամօթից, երբ այդ պատմածից հայի սորկական, գծուծ վիճակը պատկերանայ առջեղ. Ախ, որդիս, դարերի ընթացքում, հարիւրաւոր հանգամանքներ այնքան են ճնշել թշւառ ժողովրդին, այնքան են ճզմել, որ մարդ նրանց մէջ հազիւ է կարողանում արժանաւորութիւն տեսնել... թշւառ են, թշւառ, այսքանը քեզ կ'ասեմ և քեզ մի իրողութիւն է որ կը պատմեմ...

«Հայոց-ձորում» մանգալուս ժամանակ, մի երեկոյ զիշերեցի Խորդում գիւղը: Գիւղացիններից ամենահարուստը հիւրասիրեց ինձ: Ընթրիքից յետոյ փափադ յայտնեցի գնալ բացօղեայ Լոնջայի տեղը և քիչ խօսակցել հաւաքւած գիւղացինների հետ: Բայց աշնանային մի անձրև էր սկսել և սպառնում էր սաստկանալ:

Ստիպւեցինք մանել Լոնջայի ախոռը: Այնտեղ սկսեց մի խօսակցութիւն, որ յաճախ համեմում էր երգերով: Տերունինները և քահանան շըջապատեցին ինձ, երիտասարդները սկսեցին մելամազձոս լէլէններ կանչել. մի դժգոհն լոյս լուսաւորում էր ախոռը: Մելամազձոս էր նաև սրնդի ձայնը որ խառնում էր մութ անկիւնում որոճող կովերի բառաշների հետ:

Անձրւը սաստկանում էր և ծեծում ախոռի տանիքը, երթիկիցն էլ կաթիններ էին ներս թափում և ժժրջում գետինը։ Մենք նստել էինք մի տեսակ սաքիւյի վրայ, որը յատկապէս շինւած է լինում Հայաստանի ախոռներում, ձմեռւայ նիստերի համար։ Սխոռի հոռը անտանելի էր, բայց ևս վազուց սովորել էի զիմանալ։

Երգում էին, խօսակցում. ինձ խնդրեցին մի բան պատմել Ս. զրքից և խօսակցութեան քաղցը տեղումն էր, երբ ախոռի դրուը ուժգնութեամբ բացւեց և մի զիւղացի հեալով ներս ընկաւ։ Ամէնքը կիսովին բարձրացան տեսնելու նրան։

—Թելոն զիւղի մէջն է, ասաց եկողը մօտենալով —Գասպարենց տանը...

Ես հրաժարւում եմ զիւղացոց յուղումը նկարագրելուց։ Ծերունիները սկսեցին հաւաչներ արձակել, երիտասարդները խումբ կազմեցին և ռէսը շարած չը գիտէր ինչ անել։ Այդ բոլորը ինձ անհասկանալի էին։

—Վերջապէս կ'ասէք ին, և եղել, հարցրի ես.

Սխոռը սկսեց զատարկել. ռէսը դուրս գնաց, երգուասարդները հետեւեցին նրան, իսկ քահանանան աշխատեց բացադրել ինձ եղածը։

Թելոն Հայոց-Զորի մի յայտնի քիւրդ ցեղապետ էր, որ ձանձրութեան հիւանդութիւն ունէր. իր ձանձրութիւնը փարատելու համար նա սիրում էր անդադար հայոց զիւղերը մոնել և զիւղացիների գլխին զանազան արջացին կատակներ անելով զւարձանալ։ Մարդասպան չէր, չէր էլ թալանում, բայց այնպիսի հրէշացին խաղեր էր խաղում, որ զիւղացիք, թէեւ վարժւած այդ խաղերին, նրա ամէն երեկու ժամանակ դողում էին աւելի քան մի կողոպտողից կամ մարդասպանից։

—Ելի ով զիտէ ինչ խաղեր պիտի հանէ Գասպարի գլխին, վերջացրեց քահանան մի խոր ախ քաշելով։

—Մեռնիմ քըզի, սրբազան, զիմեց ինձ մի ծերունի —մի ճարչէք կարող անել՝ մեզ այդտեսակ անօրէններից ազատելու համար։

—Մենակ է զալիս միշտ, հարցրի ես.

—Մենակ, զոշեց քահանանան —վեց ձիաւոր ունի հետը, ոսքից մինչև գլուխ լս զինւած։

— Ո՞ր ցեղի ցեղապետն է:

— Զալալցոց. կատղած շների մի խումբ է, յարեց ծերունին — 500 հոդի են և թաղաւորների պէս են ապրում... մեր ունեցած ներով... Կառավարութիւնը անցեալ օրերը եկաւ մեր վերջին դանակն անգամ հաւաքեց, իսկ զրանց ոչ մի զէնքին էլ չդիպաւ... ախ, ախ, որ մէկն ասեմ, սրբազն.

— Այն ժամանակ ի՞նչու չէք գանգատում վալիին:

— Ե՛հ, սրբազն, շարունակեց մի ուրիշ ծերունի — տաս անգամ ենք գանգատուել գիտես ինչ է ասում մեզ վալին.

« — Ի՞նչ է թելօի արածը, ասում է նա — սպանում է ձեզ. — ոչ. թալանում է — ոչ, ձեր կնիկներն է խումբ, ձեր եկեղեցիները պղծում է. — ոչ. էլ ի՞նչ էք ուզում ուրեմն. մի բարի ու զւարճասէր մարդ է երեսում այդ քիւրդը, որ մի քիչ էլ խենթ է... գնացէք, գնացէք, ի՞նչ անհանդարու ժողովուրդ էք եղել, մարդ հանամք էլ չէ կարող անել... — ահա, սրբազն, վալիի ասածը... Էհ, բայց, միթէ կարծում ես որ կառավարութեան պաշտօնեաները Թելօներից լաւ են:

Ես յուզել էի. մարդ զիւրազգած է լինում Հայաստանի մէջ. քիչ էք մնում լաց լինեի լսելով ծերունու տխուր և դոզդոզուն գանգատուր:

— Այն, սրբազն, քըզիկ զուրբան — շարունակեց նա մի լուսութիւնից յետոյ — մենք ստիպւած ենք այդ բոլորը տանել, մեզ մի կտոր զէնք չեն թողնում, իսկ այդ շներն այնքան զէնք ունին, որ տէրութիւնն ինքն էլ չունի...

Ես ցանկութիւն յացոնիցի գնալ Կասպարինց տուն և ամեն ինչ տեսնել. չգիտեմ ինչու. միթէ կարծում էի թէ պիտի կարողանամ մեղմացնել աւազակի սիրուր. Աստուծոյ խօսքերը ունին այնքան ոչք այլպիսի սրիկաների ձեռքից մեր թշւառ եղբայրներին ազատելու համար...

— Աման, սրբազն, արգելեց ինձ քահանան — մի գնալ. Թելօն կրօնաւոր — բան չի իմանում. անցեալ տարի այս մօրուքիցս էր որ բռնեց և գիւղի մէջ տեղում գետնի վրայ քարշ տւեց...

— Ուզում եմ տեսնել, պնդեցի ես — այնպիսի մի տեղ չի լինիլ, որից ես կարողանամ տեսնել և չտեսնել:

Հիւրընկալս ծոծրակը քորեց, քիչ մտածեց, յետոց վերկացաւ և ասաց.

— Որ այդպէս է, գնանք. բայց, Աստուծոյ սիրուն, Սրբազն, հանգիստ կաց տեղումդ, թէ չէ Թելօի շները մեզ բոլորովին կը կոտորեն մէկ-մէկ:

Կտուրից կտուր տուաջնորդեց նա ինձ Գասպարենց տան մօտ, մի փոքրիկ քանդւածքից ներս մտաւ մի մառանի պէս տեղ, յետոց զղուշութեամբ բաց արաւ մի ծակ և ասաց աղաչանքով.

— Թէ մեռնիմ, Որբազան, ձայն հանես:

Բացւած ճեղքից ճրադի լոյսը ներս թափանցեց. հիւրընկալս դոզպողալով աշխատում էր թելօիս արանքներից ինքն էլ ներս նայել:

Ես մօաեցայ ճեղքին և սկսեցի նայել:

Ներսում—մի կլոր մեծ խրճիթի մէջ—ուր դրւած կար զիւզացու ունեցած-չունեցածը—կանգնել էր մի բարձրահասակ քիւրդ՝ անձրեից լաւ թրջւած: Մի անկիւնում կուչ էին եկել մի կին և մի քանի մանուկներ, իսկ տանուտէրը դողդողալով, աչքը քիւրդին յառած՝ սովասում էր մի զոհի պէս: Խեղճ մարդը մեռեալի պէս դունաթափ՝ դողում էր, գաղտագողի անհանգիստ ախնարկներ ձգում կնոջ վրայ և երբեմն էլ զռան նայում, թէև լաւ գիտէր որ այնտեղ, բացի Թելօին ընկերացող վեց քիւրդերից, ոչ ոք չէր լինիլ:

Սինեակի մէջ տեղում զիզւած վառւում էր մի խարոցի. նրա բոցը մինչեւ բաց երթիկն էր բարձրանում:

— Լաւ կրակ, մռմռում էր քիւրդը—այժմ պէտք է հագուստներս չորացնել:

Ասաց և մի առ մի հանից վրայից հագուստը. յետոց միակ սպիտակեղէնով անցաւ տանտիկնոջ առջեկց, որը գոզնոցով դէմքը ծածկել էր, եկաւ կանգնեց զիւրդացու առջեւ և, մի չարանենգ ժպիտ դէմքին, ասաց խստութեամբ.

— Գեաւուր, նստելու աթոռ չունիս:

Տանուտէրը նրան պարզեց մի խարխուլ նստարան:

— Փուհ, բացականչեց Թելօն նստարանը ձեռք առնելով—այս աթոռը կը դիմանամ Թելօին:

Եւ օդի մէջ տատանելով աթոռը, այնպէս ուժգնութեամբ

Նետեց դէպի մութ անկիւնը, որ այնուեղ եղած երկու կարասներ ջարդեցին ու նրանց միջի ջուրն ու թանը միմեանց խառնւելով առավելներ կազմեցին ու սկսեցին դէպի թռնիրն հոսել:

—Ել ուրիշ աժոռ—աւելի լաւը—չունի՞ս գեաւուր:

—Զիայ աղա... թոթովեց տանուտէրը մեռածի պէս:

—Անշնորհք են այս գեաւուրները, մռմռաց քիւրդը—ուրեմն ես ինչի վրայ նստեմ:

Սչքը չորս կողմը յառեց, փորձեց ցորենի տուլրակը խարոյկի մօտ քաշել. չկարողացաւ, յետոյ յանկարծ կանգ առաւ, չարամտութեամբ ժաղուց, ծանր քայլերով տանուտիրոջ մօտեցաւ և ծիծաղելով առաց.

—Գեաւուր, չէ որ Թելօն քո հիւրն է, մի բան գտիր, որ Թելօն նստի նրա վրայ և հագուստները չորացնէ:

—Ոչինչ չունիմ, աղան:

—Անքաղաքավարի ես... հիւրի համար ամեն բան յանձն կ'առնեն, այ, մօտեցիր կրակին քեզ ասեմ:

Տանուտէրը մօտեցաւ:

—Հիմա, ասաց քիւրդը միշտ ժաղութով—ձեռքերդ երկուսն էլ գետնին դիր:

Տանուտէրը շփոթւած նրա երեսին նայեց:

—Դիր, գեաւուր, զոչեց քիւրդը խփելով նորա ծոծրակին: Հազիւ թէ տանուտէրը հնազանդւել էր, որ քիւրդը մի ոսահւնով թռաւ նրա մէջքի վրայ և քրքըջալով ասաց.

—Տեսար աժոռ... հանդիսաւ կաց մինչև հագուստու չորացնեմ:

Ազգակս նա նստած տանուիրոջ մէջքի վրայ սկսեց մի առ մի չորացնել թաց հագուստները:

Կէս ժամ տեսեց այդ գործողութիւնը, մարդ—նստարանը անդադար ձեռքերը կամ ոտները կքում էր. այդպիսի դէպիքում Թելօն ոտերով ուժդին հարւածներ էր տալիս նրա փորին կամ գըլ խին և գոռում էր սպառնալից.

—Հը՛լ՛... շարժուն նստարան չեմ սիրում...

Երբ գործողութիւնը վերջացաւ, քիւրդը ելաւ իւր նստարանի վրայից, թոյլ տւեց նստարանին հանգստանալու և—

— Ենորհակալ եմ ասաց—բաւական հանգիստ մէջք ունիս...  
Յետոյ հազար շորերն և կերակուր պահանջեց։ Նրան ձւաձեղ  
տւին։ Խաղաղեց, ոտքի ելաւ, հրացանը առաւ և դառնալով տան-  
տիրոջ՝ գոչեց՝

— Գեաւուր, ձի չունիս, զուրսը շատ ցեխ է, անձրեն էլ գա-  
լիս է հեղեղի պէս։

— Ո՛չ, աղա, պատասխանեց գիւղացին հւալով։

— Իսկ էշ կամ ջմրի։

— Չունիմ...։

— Անշնորհք, անշնորհք... ուրեմն հիւրդ պէտք է ուքով գնայ...  
մի ձի գտիր ինձ, հիւրասիրութիւն չես իմանում, գաս իմ տունս՝  
քեզ տաս հատ ձի կը տամ հեծնելու... մի՛ հեծանելիք գոյիր...։

— Արտեղից գտնեմ, աղա։

Գիւրդը նորէն չարամնութեամբ ժպտեց։

— Իսկ սանձ, ձիու կամ էշի սանձ էլ չունիս։

— Մի հատ կայ։

— Գնա բեր ինձ։

Տանուտէրը ախոռը մտաւ և այնուեղից քիշ յետոյ զուրս բե-  
րեց մի էշի սանձ։ Քիւրդը առաւ սանձը, քննեց, լարեց, յետոյ  
ժպտելով գիւղացուն դարձաւ և ասաց։

— Սկի գայլերի հանդիպել ես...։

Գիւղացին ոչինչ չհասկացաւ, զարմացած նրան նայեց։

— Պատասխանի՛ր, գեաւուր, զուաց քիւրդը—Թելօն չի սիրում  
որ լռեն, երբ հարցնում է։

— Զեմ հասկանում, աղա, կմկմաց գիւղացին։

— Չես հասկանում իմ լեզուն, անհաւատ... Թելօի լեզուն  
ամենքը պիտի հասկանան. ես ասում եմ թէ, սկի գայլերի հան-  
դիպել ես դաշտումը կամ լեռներում։

— Հանդիպել եմ։

— Ի՞նչ միջոց ես գործ դրել նրանցից ազատւելու համար։

Գիւղացին հասկացաւ։

— Եան նման չորս ձեռքերիս վրայ կանգնել, ասաց նա—ետևի  
ոտքովս պոչ եմ ձեւացրել և գլխիս փափախովը շան դլուխ...։

— Յետո՞յ, ծիծաղեց քիւրդը։

— Հաջելով նրանց վրայ եմ յարձակւել և փախցրել... <sup>1)</sup>:

— Ապա, ասաց քիւրդը — մեկ արա ահսնեմ:

Գիւղացին նորէն երկու ձեռքերը գետին դրաւ և ծնկները ծալեց. Թելօն ժպտելով մօտեցաւ նրան, ձեռքը բռնած լարւած սանձը արագութեամբ նորա բերանը ձգեց, թռաւ մէջքի վրայ, մի բարձրածայն ծիծաղ արճակեց և գոչեց.

— Տեսար, գեաւներ, տեսար թէ Թելօն ինչպէս կարող է հեծանելիք դանել... դէհ, առաջ գնա և ինձ տար մինչեւ մեր գիւղը:

Գիւղացին ապշած մնացել էր, տեղիցը չէր շարժւում:

— Դէհ, գեաւներ, ինձ մի սպասեցնիլ, գոչեց քիւրդը և սկսեց հրացանի կոթովը ծեծել գիւղացուն, որը չորս ձեռքերի վրայ և այդ բեռան տակ ճնշւած՝ քացլեց դէպի դուռը...

Զկարողացայ դիմանալ, ձեռքս պարզեցի մի երեակայական զէնք խլելու, վեր թռայ, ուզեցի յարձակւել, գուսալ... բայց մի ձեռք փակեց բերանս և զգացի որ ինձ գուրս քաշեցին: Ուզեցի աղաղակել... անձրեւլ սաստիկ հոսում էր, զլիարկս ընկաւ... հինգ բռպէից յետոյ ինձ քարշ տւին քահանայի տունը զրէթէ կիսամեռ վիճակի մէջ:

Մի սոսկալի գիշեր էր որ անցաւ:

Միւս օրը ինձ պատմեցին որ գիւղացիք հետեւ էին Թելօին և իր հեծանելիքին մինչեւ գիւղից դուրս. քիւրդը ճանապարհին իր ատրճանակի կոթով ստիպել էր գիւղացուն՝ առաջ գնալ այդ ցեխոտ և քարոտ ճանապարհի միջով... վերջ ՚ի վերջոյ գիւղացին ուշքից է գնում. Թելօն թողնում է նրան, հրացանի կոթով մի քանի հարւածներ էլ տալիս և ծիծաղելով հեռանում:

Հետեւող գիւղացիները վերցնում են Գասպարին և գիւղը բերում: Երազ էր թւում ինձ այդ բոլորը:

Մեկնեցի Խորդումից: Տաս օր յետոյ Վանում առիթ ունեցայ փաշացին տեսնելու, և երբ յուզմամբ պատմեցի նրան այդ բոլորը, նա լսեց ինձ, յետոյ յանկարծ սկսեց զժի պէս ծիծաղել.

Վայ, զիտեմ, զիտեմ, ասաց նա—վայ չարաճնի Թելօ... ես լսել էի որ նա մի շատ կատակաբան քիւրդ է... Ասուած վկայ,

<sup>1)</sup> Գիւղացիք, գալիք հանդիպելիս՝ լաճախ ալդպիսով ազատւում են:

նա մեզնից բաղկաւոր է, կարողանում է գոնէ հաճոյքներ վացելել:  
Կարմրեցի բարկութիւնից:

—Ինչպէս, դոչեցի ես—հաճոյք...զրանց դուք հաճոյքներ էք  
անւանում:

Փաշան ինձ նայեց և անշուշտ կամենալով քիչ մեղմացնել  
արտայաջառութիւնը, աւելացրեց ժպտելով՝

—Թեթև հաճոյքներ, էֆէնդըմ, ՚ի հարկէ, երեխայական հա-  
ճոյքներ...

## ՁԵՐ ԿԵՆԱՑԸ

ՊԼԷՇՋԵԽԵԽԻց Ազատ Թարգմ. Արսէնի

Զեր կենացը, ազնիւ արդար վեհ հոգիներ,  
Որոնց կեանքն է գաղափարի կռիւ մշտական,  
Աշխարհի սէր չէ յաղթում ձեր ճշմարտութեան,  
Եւ պաշտած չէք երբէք արծաթ ու սուտ կուռքեր;  
Զեր կենացը, որ սիրում էք ազգ, հայրենիք—  
Նւիրած էք ձեզ ձեր ազգին ծառայելուն,  
Եւ անտրառունջ գնում էք ուրախ ջերմ եռանդով  
Աշխատութեան, անձնուրացման ճանապարհով—  
Զեր կենացն եմ առաջարկում այս նոր տարուն:

Ի յիշատակ մահով խլւած այն քաջերի,  
Որոնք մեզ միշտ պարտքի հրաւէր էին կարդրում,  
Խելքի մէջ միտք, սրտի մէջ սէր յարուցանում  
Առ գեղեցիկն, ճշմարիտն և առ բարին:  
Մաղթենք նոցա հոգիներին. յաւէրժ լինիք:  
Ապարդիւն չէր նոցա կեանքը բազմավաստակ.  
Նոցա՝ մեր մէջ վառած լոյսը մուժ խաւարում  
Մեզ յոյս տալով իբր ուղեցոյց ասող էր փայլում:  
Ի յիշատակ նոցա լինի այս լի բաժակ:

## Ա Յ Ի Շ Ա

(Պարսկական պօչմա)

Վ. ՓԱՓԱԶԵԱՆԻ

Լսում են պատմիչնն Կկղած, նստոտած զանազան անկիւններում՝ ականջ են դնում: Պատմիչը յուզւած է: Նստում է նա, կանգնում, բարձրացնում է ձեռքի փայտը: Եւ նրա ձայնը դողդում է, կերկերում:

Նա պատմում է:

«Պէտք է որ գեղեցիկ լինի մարգարէի դրախտը—ասում է նա, բայց գեղեցիկ է նաև Նիրազի հովիտը:»

Որքան առատ են այնաեղ վարդի թփերը, նրանց շուրջը պտոյս գործող սոխակները. որքան քաղցր՝ նրանց դաշլացլիկները: Որքան սողոսկող վճիռ առւակներ կան այնտեղ. հովիտն ակոսող և խորհրդաւոր միայնութեան մէջ ընկղմած բլրակները քանի քանի շքեղ անկիւններ ունին...

Պարզւում է ահա լայն հովիտ, զարդարւած է երփներանգ ծաղիկներով, քծաւորւած՝ վարդի թփիկներով: Հողալին բլրակների մի խումբ դէպի դաշտն է խոնարհւել, մէջքը ցից լեռներին տւել: Կուրծքը կաթնահամ՝ ջրերի մէջ թաթախել և ստորոտը շքեղ անտառներով զարդարել:

Վարդի և սոխակի երկիր, սիրելու և երազելու անկիւններ, ծաղիկների հոսող բացւող վացրեր, արդեօք քո ծոցումը չէր, որ տաշջին մարդը սիրեց... և տանջւեց...»

Այդ սքանչելի թլրակների մէջ էր, որ տարիներից ՚ի վեր, վտակների հոսելուց՝ կազմել էր Թոքնաբադ գետը և Թոքնաբադը, երկար գնալ-հոգնելուց յետոյ՝ ձևացրել էր մի շքեղ աւազան:

Տարիներից ՚ի վեր ջրերը մի ծոց էին գտել, գումարւել ու կուտակւել, հրաւիրել ընկերներին, իրենց մեղմ կարկաչիւնով գրաւել ու մեծացրել էին շրջանը և կանչել աւազանի մօտ սոխակներին, որոնք հովոի վարդերի սիրուց տոգորւած, նրանց փշերից ձակչւած, սովորել էին դալ և հովանալ այդ ջրերի մէջ:

Դաշտի թռչունները, սուլացող քամին բերին իրենց թռերով վարդի սերմեր, փռեցին աւազանի շուրջը. վտակները կշապըին նրանց իրենց ցատկուող կաթիլներով և քիչ յետոյ վարդէ մի պսակ էր, որ կազմել էր աւազանի շուրջը. պսակ, ուր հաւաքւում էին սիրատար սոխակները, ուր սիրում էին և տանջւում սիրուց:

Լցւում էր աւազանը, կեանք տալիս շրջակայքին: գետը սահում գնում էր նրա երեսի վրայից. սոխակները երգում, թռերով բաղկացած նրա ջրերի մակերեսովթը և խաղում նրա վէտ-վէտ ալիքների հետ:

Դեռ ոչ մի մարդ չէր խանդարել այդ լուիկ անկիւնը իր պիղծողվ, կործանիչ շնչով:

Բնակւում էին հովիատում լեռանց ոգիներ: Զքնաղ հիւրիներ էին նրանք: Մի աննման էլ թագուհի ունէին:

Նայեցէք գիշերով լեցուն լուսնին, ցերեկով՝ շքեղ արևին: Մտէք մարզարէի գրախարը խուզարկէք, Քրիստոսի արքայութիւնը տակն ու վրայ արէք. բնութեան գեղեցկութիւնները ՚ի մի ձուլեցէք: բայց բոլորի մէջ ոչինչ չէք գոնիլ նման՝ Այիշայի վառ գեղեցկութեան:

Նրա աշխոյժի առջև սառցակոյտ էր հալւում և սոխակները յաճախ նրան մի աննման վարդ կարծելով՝ պար էին բանում նրա շուրջը, օդը լցնում իրենց բոցավառ սրաից բղխած խանդոտ դայլայով:

Ամէն ինչ խոնարհում, հալւում էր Այիշայի գեղի առջև.

բնութիւնը ողջ ապուշ կտրած՝ արձանանում էր, երբ Այիշան նրա միջովն անցնում էր...

Այդպէս էր նա, որ սիրում էր երբեմն դուրս գնալ, իր գեղի առջև խոնարհւած սրտեր տեսնել և զւարճանալ: Յաճախ միայնակ պտոյտ էր գործում Նիրազի հովտում, թափանցում մինչև ամենախուլ անկիւնը:

Եւ ահա մի օր դէմ առ դէմ եկաւ աւազանին: Կանգ առաւ: Զմայելի ոչինչ չկար շատ. բայց որքան խոր էր նրա յատակը և արգեօք որքան հետաքրքիր կը լինէր թափանցել նրա մէջ, տեսնել ջրակոյտի մի առատ հոսանք:

Երկար ժամանակ էր որ նա վառ ու բռւռն հոսանքներ չէր տեսել: Բայց նա սիրում էր այդ—վառ դոյներ, արտայալութիւններ...

Տեսնել օրինակ մի կրակ, որ մի քանի րոպէի մէջ բռւռն կերպով լափում է մի մեծ շէնք: Բոցը սուր լեզւակներ կազմած՝ սուրում է դէս ու դէն: Վառում են քարեր, փլում պատերը, հալում. դղրգում է դետինը, փոշին ու կրակը խառն՝ փոթորկի պէս կործանում են ամեն ինչ և ապա, մի րոպէից յետոյ... էլ ոչինչ: Վերջանում է ամեն ինչ: Կրակից մնում է միայն մի կոյտ, որ թէկ ալլպում է, թէկ դեռ փայլում, բայց հանգիստ է, ցողնած և կիսամեռ... շուտով կը մեռնի, այլ ևս ոչինչ հետաքրքիր բան չունի իր մէջ:

Գեղեցիկ հիւրին մոտածում էր այդ բոլորը: Աւազանի միակերպ ալիքներն էր դիտում. ձանձրալի դառաւ հոսանքը, այդ միակերպ շարժումը:

Չփորձել արգեօք մի ծակ բանալ ներքեսից, լայնացնել նրան, յետոյ թողնել որ թումբը տակից մաշսի, փլչի. ջուրը հոսի, գետինը բռնչայ, փրփրի, ցատկուի, փոշու սիւնեակներ կազմի, անհամար շատրւաններ ձևացնի. ողողի ամեն ինչ, վշշայ, ոռնայ, սուլի ու գոռայ...

Որքան մեծ տեսարան կը լինէր այդ:

Եւ փնտռեց նա մի անկիւն, ուր փուխր լինէր հողը: Իջաւ և փորեց: Տենդային յուզումով պեղում էր նա: Սոխակները զգալով կործանումը՝ ճշում՝ էին, վարդի թփիները արմասներով դողում:

Քանի փորում էր, այնքան հանդարտում էր նա: Ռոպէներ եղաւ, որ նա կանգ առաւ: Այն միտքը որ գուցէ հետեանքը վատ լինէր—երբեմն կասեցնում էր նրան: Արդեօք արածը չէր կործանիլ, չէր ոչնչացնիլ ամբողջ աւագանը:

Բայց ոչ—մոտածեց նա—ինչ պիտի լինի: Մի քանի ժամ բուռն հոսանք, յետոյ ամեն ինչ կը վերջանար. հոսող վաակները էլի կը լիցնէին նրան: Կը փակէր նորից անցքը, ջրերը էլի մի անգամ կը լցւէին և կը սարսէր նրա պատերը նորանոր յուղմունքներից:

Խակ աւագանը շատ լիքն էր. ինչ որ լիքն է, նա դատարկւելու էլ պատրաստ է: Վաղուց նա արդէն կոծում էր իր յատակը և մի անցք փնտռում՝ ժողոված խանդը դուրս տալու:

Պատերը կակզել էին. հեղուկը հոսել էր ուզում: կաշկանդւած ոյժը ազատութիւն էր փնտռում: Կ'ուզենար նա հոսել, հոսել, զգւելով ու ցողելով ամեն ինչ, ժարմելով արեգին, խնդալով կեանքին...

Պեղում էր Այիշան: Ճշում էին սոխակները, ցնցւում վարդերը:

Ահա յուզեցին ջրերը. հա կազմի եց յորձանք, դողաց աւագանը, սարսեցին պատերը: Լուռում էր մի խուլ մումուց, որ հետէ աղմուկի էր փոխւում:

Այիշան զունատում էր. աղմուկի փոխւող մումուցը նրան վախ պատճառեց: Ջրերի շարժումը, որ զղրդեցնում էր իր շրջանակը, պահ մի կասեցը եց նրան: Նա կանգ առաւ—հա քաշւեց:

...Բայց որքան հրաշալի կը լինէր տեսարանը, եթէ հոսանքը մէկէն ի մէկ դուրս ցայտէր: Հոկայական մի շատրւան, որ հովանարածե կը տարածւէր դէպ առաջ, կը թրջէր—կ'ողողէր ամեն ինչ և խուլ մւնչիւնը՝ դաշտը կը թնդացնէր:

Արքան սիրուն տեսարան կը լինէր այդ:

Տեսնել թէ ինչպէս աւագանի մէջանդը գոգանում է, ջրերը միմեանց ծեծելով կենդրոնանում են մի շրջանի մէջ, արագութեամբ պտոյտ գործում, դնում են, վիժում, ոստոստում, ցայտում...

Եւ յուզւում էր նրա կուրծքը. բուռն ցանկութիւնը դողացնում նրան: Պեղելու էլ պէտք չկար. ջրերը միմեանց հրելով, լայնացնում էին բացւածքը, պեղում ու վիժում:

Մի հարւած ևս... և նա ետ ցատկեց:

Մի ահեղ մանչիւն ու մի մեծ շաղրւան, այնքան արագութեամբ յաջորդեցին՝ միմեանց, որ կարող էին մի բերդ կործանել:

Դղրդում էին լեռներ, ողոզւում է գաշար: Յորձանք էր կազմը և խաօսն էր սկսում; մի կաթիլ անգամ հանդարտ չէր մնում: Ամենքը միմեանց բաղխում, իրար հրմշակում և ճեղքւած անցքիցը դուրս էին թուչում:

Այիշան սաւեց: Հզօր աեսարանը քարացրնց նրան: Խակ ջրերն մռնչում էին, վիժում ու վիժում: գաշան էլ նրանց ծծում—անյետացնում էր և թշւառ աւազանը կաթ կաթ գատարիւում:

Մի քանի րոպէ—էլ ոչինչ չմնաց, եթէ ոչ՝ մի սառն ու տխուր, անգոյն թացութիւն:

Այիշայի առջեւ կանգնած էր նրա հաճոյքի զոհը, որ իր վերջին կաթիլներն էր քամում... մի՛շտ ցատկատող, միշտ էլ յուզւած՝ վճիռ կաթիլներ:

Ու վուլ եկան տւագանի սկառերը. Թոքնտթաղը ետ քաշւեց, վարդերը տխրագին՝ կռացան և արտասւաթաթախ՝ մեռան փլատակների վրայ...

Այն օրից Շիրազը, կորցրեց իր ջուրը. գետը չորացաւ, հովիտը մերկացաւ, սոխակները լռեցին, վարդերն էլ նրանց սէր չը դրդուեցին...

---

Այս էր որ պատմեց պարսիկ պատմիչը, երբ ես մօտեցած՝ լսում էի նրան:

Եւ երբ վերջացրեց, խոնարհեց դլուխը: Եւ խիստ տխուր էր նա, դունաթափ, նկուն...

Պատմիչ, թշւառ պատմիչ, դու չէիր արդեօք հաճոյքի այդ զոհը, քո սիրուը չէր արդեօք Շիրազի հովտի փլած աւազանը...

# ԴԱՐՁԵԱՌ՝ ՄԻՐՈՅ ԿԵԱՆՔ...

(ՆԱՀՐ \*\*\*-ՀԱ)

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՇԱՏՈԽԵՍԱՆԻ

Դարձեամլ սիրոյ կեանք... երջանիկ օրեր...  
Ախ, ինչպէս սիրողս տրոփում է ուժգին.  
Ուր էլ նայում եմ ժըպտում է ինձ սէր,  
Սիրոյ է փոխել աշխարհն իմ աչքին:

Արև, արշալոյս, ջինջ երկնակամար,  
Ազրիւր ու գետակ, հովիտ ու անտառ,  
Թուչուններ օդում, ծաղիկներ գաշտում -  
Բոլորն էլ ինձ սէր, սէր են աւետում:

Եւ դառն անցեալի ձնշող ցաւերից  
Տառապող երգիչս՝ կեանք առած նորից,  
Որպէս վանդակից աղատուած թուչուն,  
Օրհնում եմ ես կեանք, երկինք, բնութիւն...

Օրհնում եմ և քիզ, իմ անդին լնկեր,  
Դու քնքոյշ ծաղիկ իմ սիրոյ դարնան.  
Ախ, եթէ քո այդ նազելի պատկեր  
Փայլէր ինձ կեանքում մինչեւ գերեզման...

5 Հունիսի 1895թ.

Կիսլովորով:

## ԿԱՅՆԵՐ

(Ն մանողութիւնն)

ԱԼՔԲՍԱՆԴՐ ՇԱՏՈՒՐԵԱՆԻ

Երբ է արձակ, լայն դաշտերում  
Արտը ծաղկում, կեանքը եւում—  
Երբ թափում են գարնանաբեր  
Զով անձրեի փայլուն շիթեր:

Երբ է սրտի լուռ խորանում  
Զերմ զգացմունք բոցավառում—  
Երբ լնկնում են սրտի խորքեր  
Վառ իդէալի փայլուն կայծեր...

11 մայիսի 1895 թ.  
Մոսկա:

# ՎՐԱՑԻ ԻՒԱՆԵ

(Պատմւածք)

ԳՅՈՒՐԳ ԲԱՇԻՆՁԱՂԵԱՆԻ

Աշունք էր: Այգեկութը սկսւել էր: Սպիտակ խաղողը կարմրել էր, իսկ կարմիրը սևացել: Այգեպան իւանէն սրտատրով սպասում էր ցանկալի օրւան: Ցանկալի օրը երեք օրից յետոյ պէտք է լինէր: Այդ օրը պէտք է որոշւէր նրա վիճակը, այսինքն պէտք է խաղողը քաղին, քամէին և կարասները լցնէին:

Վրացի իւանէն, որ մասնագիտութեամբ այգեպան էր, հեռացել էր իր ծննդավայր Շաշիան դիւզից և Ս. գիւղաքաղաքում պայմանաւորւել էր մի այգետիրոջ հետ հետևեալ կերպով: Իւանէն ամբողջ տարի պէտք է այգի մշակէր, իր աշխատանքը աջնոեղ պէտք է դնէր և վերջը Աստուծոյ տւած բերքի կէսը ինքը պէտք է ստանար: Իր աշխատանքի վարձատրութիւնը այսպէս էր որոշւած:

Աշունքից սկսած մինչեւ միւս աշունքը իւանէն իր քրոշինքը այդ այգիի մէջ թափեց: Ընտանիքից հեռացած, հեռու օտարութեան մէջ, ամեն տեսակ զւարձութիւններից զրկւած ամբողջ մի տարի համբերութեամբ անցկացրեց: Այգիի միջից մի բոպէ անգամ չէր հեռանում: Խնամում էր խաղողի որթերը, ինչպէս խնամում են մարդիկ իրանց զաւակներին: Ցերեկով հանդիսատ չէր առնում, դիշերներն էլ օրինաւոր քուն չկար նրա համար: Առաւօտից մինչեւ երեկոյ պտտում էր այգիի շուրջը և փայտէ մի ինչ որ գործիք ճրճուցնելով քշում էր թռչուններին: Մի երկու տեղ էլ խրուխլակներ էր սարքել դարձեալ թռչուններին երկիւղ տալու համար: Գիշերներն էլ հրացանը ձեռքին ման էր գալիս այգու մի ծագրից

դէպի միւս ծայրը և փշապատ չափարները զննելով մերթ գոռում գոչում էր, մերթ հրացան արձակում, գողերին երկիւղ ներշնչելու համար: Խւանչն աշխատասէր էր Վրացի գիւղացիների մէջ էլ շատ կան աշխատասէրներ: Այզետէրից նա ստանում էր շաբաթը մի անգամ հաց: Ստացած ցամաք հացը բաւականանում էր եօթօր, և նա գոհ էր իր վիճակից: Խաղողը խնայում էր ուտելու: Եաւ յաճախ մոտաբերում էր իր կնոջը, երեք փոքրիկ երեխաներին, որոնցից ամենամեծը ուժուարեկան էր: Պատկերացնում էր աչքի առաջ նրանց թշւառ գրութիւնը և ծանր հողոց հանում: Զգիտէր հաստատ՝ առողջ են թէ ոչ, կամ կուշտ են թէ քաղցած: Այստեսակ մոտառնջութիւնը սաստկանում էր մանաւանդ գիշեր համնելուն պէս, երբ պառկում էր խոտերով ծածկ ած խրճիթի մէջ մի րոպէ հանգիստ տալու համար իր հոգնած մարմնին: Դարձեալ վեր էր ցատկում տեղից, գուրս էր վազում խրճիթի միջից և բարձրաձայն աղաղակում: Կորեք այստեղից, միք մօտենայ չափարին, լաւ գիտացէք որ հրացանիս մէջ հինգ գնդակ կայ: Այստեսակ բառեր կրկնում էր մի քանի անդամ իրար յետուից և երբ փարատում էր տիսուր մոքերը, նորից վերագառնում էր խրճիթը: Նրա տրամադրութիւնը շուտով լաւանում էր: Յետոյ երեակալում էր թէ ինչպէս շուտով այզեկութ կը լինի, բերքի կէսը ինքը կը ստանայ, գինի կը ծախէ, փողով քսակը կը լցնէ և ուրախ-ուրախ տուն կ'երթաց կնոջ համար լաւ չժի գերիացու կ'առնէ, երեխաների համար էլ մի-մի զոյգ կօշիկներ կ'առնէ, խուրջինի մէջ ամեն տեսուկ բարիքներ կը զարսէ և հոգելիա գէլիա, պատարձալի մգելիա երդելով՝ ճանապարհ կ'լնինի դէպի Շաշիան գիւղը: Արդէն որոշել էր հանապարհ ընկնել լուսաբացին և երեկոյեան գեռ արեւ մայր չմոտած պէտք է տուն համնի, քանի որ շատ էլ հեռու չէ, ընդամենը 37 վերստ է: Այսպիսի մասածմունքների միջոցին ժպտում էր, ծիծաղում էր և երգում:

—«Ամեն բան վերջացած է» խօսում էր նա ինքն իր հետ, «կարսները լւացի, նաւը մաքրեցի, քթոցներն էլ պատրաստել եմ, գաղը չէ միւս օր կը սկսենք քաղել, բայց աղին պէտք է ասեմ, որ երեխաներին ներս չթողնէ, զրանք մեզ շատ կը խանգարեն. բացի այդ՝ խաղողը կը փչացնեն»:

Այս քաղցր մտածմունքի մէջ էր, երբ բարձր զանգակառանից հնեց տասեերկու անգամ՝ «մէծ զանդի» ձայնը: Իւանէն խկոյն ներս մտաւ խրճիթը, հանեց խուրջինի միջից հացը և դիմոց դէպի աղբիւրը, որ գտնւում էր խրճիթից ոչ հետու: Թրջեց ջրի մէջ չորացած հացը, քաղեց այստեղ և եթ կանաչեղէն, թափ տւեց մի քանի անգամ և ոտքի կանգնած սկսեց ճաշել: Ճաշը վերջացնելուց յետոց աղբիւրից մեծ ախորժակով ջուր խմեց և պիլիք ասելով և չուխի փեշով բեղերը սրբելով, վերադարձաւ խրճիթը:

Այնտեղից դուրս բերեց խուրջինը, որի մէջ վերջացել էր եօթօրւայ պաշարը, խնամքով դուրս թափեց փշրանքները և կախստւեց խրճիթի սիւնից: «Երեկոյեան թաժա հաց կը բերեմ» մոտածելով մօտեցաւ խաղողի որթերին և մի խոշոր ոխկոյզ ափի մէջ առնելով՝ արտասանեց «օրհնուիս դու, օրհնուիս»:

---

Բնութեան մէջ տիրեց անսովոր լուռվթիւն: Հորիզոնում երեւցան մռացը ամսկի խոշոր կուտակներ, որոնք դանդաղութեամբ սկսեցին բարձրոնալ: Երկնակամարի կէսը շուտով խաւարեց, իսկ երկիրը լուռաւորւեց տարօրինակ լոյսով: Օդի մէջ խոնաւութեան հոռ տիրեց: Արևը կարծես դադարեց տաքութիւն արձակել: Մնջունը, որ զեղձի ծառից կապած էր զղթայով, սկսեց անհանգըստանակ պառկում էր, զիր էր կենում, նորից պառկում էր և ժամանակ առ ժամանակ ունում: Իւանէն տիրեց: Նրա սիրու շարունակ բաբախում էր: Կանգնել էր խրճիթի առաջ և դիտում էր երկինքը: Իւանէի ամբողջ կութեանը փոքր առ փոքր երկիւղ էր պաշարում: Նա չոքեց, բաղուկները տարածեց, աշքերը ուղղեց դէպի երկինք և սկսեց աղօթել: «Հաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր... և մի տանիր զմեզ ի փորձութիւն... ամէն»: Հայր-մերի այս երկու կտորը կրնում էր անդադար, իսկ զլուխը զբազւած էր հազար տեսակ տիսուր մոռքերով: Սև ամսկերը, աստիճանաբար փուելով կապոյտ երկնակամարի վրա, մօտեցան արևին: Արևը քօղարկեց: Երկրի երեսին փուեց թանձր սուեր, ճնշելով իւանէի սիրու: Բնութիւնը, որ կէս ժամ առաջ իր սքանչելի պատկերով ուրախ, զւարժ ժպտում էր, այժմ դաժան կերպարանք առած՝ ողբում էր: Եռորջը տիրել էր մեռելային լուռութիւն: Եր-

կինքը ամբողջապէս ծածկւեց սեագոյն ամսկերով, որոնց միջից այս ու այնտեղ հրեղէն դժեր զուրս էին ցատկում և վայրկենաբար մարում: Հորիզոնից նորից սկսեցին ամպեր բարձրանալ, բայց այս անգամ սպիտակ գոյներով: Դրանք, արագութեամբ բարձրանալով, կազմեցին մի վիթխարի կուտակ, ապա տարածւեցին հրւսիսից հարաւ, խաւար ֆոնի վրա և վերջապէս արձակեցին իրանց միջից ուղղահայեաց շերտեր գէպի երկիրլ: Փէեց ցուրտ քամի և խազողի որթերի մէջ իրարանցում ընկաւ. դրանք բոլորեքեան թեքւեցին մի կողմ, կարծես միմեանց փեշերի տակ թաքնւելու նպատակով: Խւանէն այլայլեց, վեր ցատկեց տեղից և խելագարի նման վազ տւեց, հառաչելով ռուռնս քանդեց: Շուտով վերադարձաւ, մըուտած կասկարէնք և մի գոյզ մեղբամոմ ձեռքին: Կասկարէնքը դրեց զետնի վրա հակառակ, ուսները գէպի երկինք, և խրճիթի մէջ մոմեր վառեց: Նորից գուրս վագեց, կանգնեց շան կողքին, սոխակեց նրան լոել ու միսեց ուշադրութեամբ լսելի բնութեան մէջ կատարւող ձայները, որոնք աստիճանաբար լսելի էին գառնում: Վերջապէս լսեց կարկուտի ձայն: Գիւղաքաղաքի ամբողջ կէսը շուտով քօղարկւեց, անյացացաւ: Խւանէի գէմքը զարհուրելի էր, նա կորցրել էր մտածելու ընդունակութիւնը, չգիտէր ինչ անէր, չէր կարողանում մի տեղ հանգիստ կանգնել, անընդհատ յետ ու առաջ էր քայլում, պտոյսներ էր գործում: Երբեմն կարմրում այրւում էր, երբեմն գունատում թուլանում էր: Անդադար բերանը բաց ու խուփ էր անում, կարծես բան էր ուզում ասել. կծում էր շըրթունքը, ատամեներն էր կրծաեցնում, ձեռքերն էր տրորում: Նրա տանիջանքը փոքր առ փոքր սաստկանում էր և վերջապէս հասաւ իր գագաթնակէտին: Նրա ուների առաջ անձրեի խոշոր կաթիլներ վայր ընկան և սե բծեր գրոշմեցին: Մի քանի վայրկեան էլ, և, ուժգին հարւած հարւածին հետեւելով, վայր թափւեցան կարկուտի հատիկներ: Խւանէի գլխին մի վայրկեան ուրախ միտք ծագեց, և կարելի է երազ էր: Տրորեց իր ականջները, քաշըշեց մազերը և համոզւելով որ սա իրականութիւն է՝ մի յուսակուր հոգոց հանեց: Կարկուտը սաստկացաւ Խւանէն կանգնած էր անշարժ: Կարկուտի ահագին հատիկները թափւում էին նրա գլխին, բայց նա, ուզենալով իրան համոզել, որ այս կարկուտը այնքան էլ կորս-

տարեր չէ, համբերութեամբ տանում էր անխնայ հարւածները. հանեց իր չուխան և անգիտակցաբար փաթաթեց նրա մէջ խաղողի մի որթ: Այդ միջոցին կարկտահարութիւնը վերին աստիճանի սաստկացաւ: Սկսեց թափւել աներեակայելի մեծութեան հատիկներ և երբ Խւանէն զգաց որ հարւածները մահաբեր են, մէջքը կուցրած ներս վազեց խրճիթի մէջ:

Բռունցքները պինդ սեղմած և ատամները հուփ տւած անէծքներ ու յիշոցներ էր ուղարկում երկնքին: Առժամանակ կատաղելուց յետոյ նրա սիրտը աստիճանաբար սկսեց հանդարտւել: Նորից զայրացաւ, ալեկոծւեց և մի թուիչք անելով մօտեցաւ խրճիթի մէջ սիւնին և իր գլուխը երկու անգամ ուժգին զարկեց, արտասանելով հէ, հէ: Այս զործողութիւնը կատարելուց յետոյ վայր ընկաւ գեանին, աչքերը ծածկեց և ի սրտէ լաց եղաւ: Բոլոր ժամանակ, կարկտահարութիւնը սկսելու բոպէից՝ հնչում էին եկեղեցու զանգակները: Երկնքի խոռվութիւնը և երկրի աղերսանքը միաժամանակ էին կատարւում: Ով առիթ է ունեցել ներկայ գտնւել այս տեսակ միջոցին, նա անշուշտ զգացել է մի տեսակ խորհրդաւոր սարսափի Խւանէն մի վայրկեան ենթաղրեց թէ գուցէ ջրհեղեղ է, գուցէ աշխարհքի վերջն է լինելու, և իսկոյն մոտերերեց իր ընտանիքը: Տեղից վեր թռաւ, ուղեց գուրս վազել, մինչև անգամ մի երկու քայլ արաւ, բայց իրականութիւնը նորից ուշքի բերեց նրան: Ուժասպառ նստեց գետնի վրա և շարունակեց լալ: Նունը, որ կատած էր շղթայով, բոլոր ժամանակ թռչուում էր, թաւալւում էր, հազար տեսակ պտոյտներ էր գործում ծառի շուրջը, ամեն կերպ աշխատառմ էր մի կերպ ազատւել հարւածներից, գլուխը կոցնում էր ծառի բունին, ծածկում էր իր թաթերով, պառկում էր, գլուռում էր: Վերջը, երբ միանգամայն թռուացաւ, պառկեց, ոտները ձկեց և աչքերը դարձրեց խրճիթի կողմը: Այդ աչքերի մէջ կարելի էր տեսնել թէ ինչպէս կենդանիներն էլ ընդունակ են մարդու նման օգնութիւն աղերսելու:

---

Կարկուտը դադարեց: Գետինը սպիտակ սաւանով էր ծածկ-ւել, ինչպէս ձմռո ժամանակ: Այդին միանգամայն մերկացել էր:

Տեսարանը յիշեցնում էր իսկական ձմեռ։ Խաղողի որթերը փոթորկից յաղթւած անկանոն կերպով խառնւել էին իրար հետ։ Ոմանք տապալւել էին գետնին, ոմանք յենւել էին միմեանց, ոմանք էլ ճիւզազուրկ կանգնած էին. դոքա իսպառ տերևաթափ դառած՝ սրտամաշ կերպարանք էին ընդունել. Ոչ մի նշան չէր մնացել ամբողջ այգիի մէջ այն տեսարանից, որով հազիւ մի ժամ առաջ Խւանէն այնպէս սքանչանում էր։ Խղճուկը գեռ. ևս նստած էր իւլրոճիթի մէջ, զլուխը քարշ արած և իր թաց աչքերով ու ցամաք շրթունքով կարծես զիառում էր հեռուն, բաց խկապէս ոչ բան էր տեսնում և ոչ մտածում։ Խայց երկար չմնաց այսպէս, շուտով վերկացաւ իր տեղից, մէջքը կուցած և անհաստատ քայլերով դուրս եկաւ։ Խոչ էր անելու՝ չգիտէր ինքը։ Երբ մի րոպէտ մտածում էր կատարւած իրողութեան մասին, ինքն իրան չէր ճանաչում, թւում էր թէ ինքը չէ։ Մի տեսակ թեթևութիւն էր զգում, կարծես իւր մարմնի ծանրութեան կէսը անյայտացել է։ Մօտեցաւ խաղողի որթերին, միանգամայն անգիտակցաբար, մնաց առժամանակ արձանացած, դարձեալ մի քանի քայլ արաւ, ոտի տակ տրորելով ցեխի փոխւած կարկտի հետ միախառնւած պառզների տերեւ։ Կանգնեց դեղձենու մօտ, որ կմախք էր յիշեցնում, ուր գեսնի վրա տարածւած էր հաւատարիմ կենդանին և կիտով չափ թաղւած էր տարօրինակ ցեխի մէջ, և, մեքենայաբար կռանալով, ափի մէջ առաւ շան գլուխը։ Նունը, որ նրա միակ ընկերն էր եղել տմբողջ մի տարի, փորձեց աչքերը բանալ և ուզեց վերջին անգամ ձեռքը լիզել։ Ենու դարձեալ ինձանից բազդաւոր ես ասեց Խւանէն ոչ իր ձայնով, համբուրեց աչքերից և լիասիրա սկսեց նորից լտլ։ Կուշտ արտասելուց իւտոյ նրա մէջքը ուզզւեց, կարծես ծանր թեռի տակից ազատւեց։ Վերցրեց իր դատարկ խուրջինը, ուսին զցեց ու, դազանակը ձեռին, լուրջ ու վճռողական դէմք ընդունելով հաստատ ու խոշոր քայլերով դուրս եկաւ. այգիի միջից և առանց մի կողմ նայելու շարունակեց ճանապարհը։ Երբ անցնում էր այգետիրոջ բնակարանի առաջ՝ երեխաները նկատեցին և սկսեցին «Փւանէ, Խւանէ» կանչել։ Դրանց հայրը նոյնպէս դուրս եկաւ տան միջից ու կանչեց «Փւանէ, ուր ես գնում, այ մարդ, կաց մի րոպէ, բան եմ ասելու...»։ Նա առանց յետ նայելու մի քանի խօսք արտասանեց բարկացած

ձայնով, որոնցից միմիայն լսւեց «էլ չեմ ազօթելու» և շարունակեց ճանապարհը ։ Եռւտով նրա յետելից հասաւ այգետիրոջ ծառան և խուրջինի մէջ կոխեց երկու հատ հաց։ Իւանէն գնում էր իր տուն։ Եռւտով գուրս եկաւ դաշտ, բայց նա այդ չէր նկատում։ Ճանապարհին ոչոքին ողջոյն չէր տալիս և ուրիշի ողջոյնին էլ չէր պատասխանում։ Ի հարկէ այս պատճառով հայնոյանքներ էր ուղղում նրա հասցէին, բայց նա բան չէր լսում։ Ողջոյնը սովորական բան է Կախէթում, ամօթ է համարում ճանապարհին մարդու հանդիպելիս «գամարջոբառ չասել»։ Նրա գլուխը քառ էր դառել, հաղար տեսակ մաքեր անկանոն կերպով պատուում էին ուղեղի մէջ։ Մերթ կարմրում էր, գլուխը թափահարում էր և քայլերը արագացնում, մերթ գունատուում էր, մէջքը կռացնում և ոտները ծռում։ Ճանապարհից մի քանի քայլ գուրս դոնւում էր փոքրիկ մատուռ, սպիտակ գոյնով ներկւած։ Երբ իւանէն նկատեց արդ, յանկարծ այլալեց, կանգ առաւ, վերցրեց մի մեծ քար, վագեց դէպի մատուռը, պատին զարկելու նպառակով, բայց երբ մօտեցաւ՝ սթափւեց, չպրտեց քարը մի կողմ և զլսարկը դետնին դցելով «Աստւած, Բնէ մեղք ունէին աղաղակեց խղճալի, բայց զայրացած ձայնով։ Վերցրեց զլսարկը և նորից շարունակեց ճանապարհը։

Արեւ արդէն մայր էր մտել իւանէն յանկարծ աշքերը բարձրացրեց և նկատեց որ արդէն հասել է գիւղը։ Տիրեց նրա սրտին դառն ախրութիւն, քայլերը մեքենայաբար զանդաղացրեց, վերջապէս կանգ առաւ և նստեց մի մեծ քարի վրա։ Մի քանի բոպէից յետոյ նորից վերկացաւ և գիմեց դէպի տուն։ Տան բակում, կալի վրա հաւաքւել էին գիւղի երեխաները և խաղում էին։ Նրանց միջից բաժանւեցան երկու համարեա մերկ մանուկներ և վազ տալով ու բարձրաձայն գոչելով «հայրիկն եկաւ» գիմաւորեցին հօրը և ոտներին փաթաթւեցան։ Կինը նոյնական գուրս վազեց խրճիթի միջից և, λծի երեխին երկու ձեռքով բարձրացնելով, մօտեցրեց ամուսնու երեսին և մայրական քնքշութեամբ արտասանեց «գուէլ փաթաթւիր ու համբուրիր հօրդ»։

Խրճիթում կանթեղ վառեցին։ Երեխաները յարձակւեցան

Խոռը ջինի վրա և մի ակնթարթում շուռ տւին։ Երբ համոզւեցին,  
որ, բացի հացից, բան չկար մէջը, հիասթափւած քաշւեցին մի  
կողմ և արտասոռքը աշքերին սկսեցին գլուխները քորել։ Խեղձ  
երեխաները ամբողջ տարի քաղցր յոյսերով էին ապրել, Աստւած  
գիտէ թէ ինչեր չէին երեւակայել ստանալ իրանց հօրից։

Իւանէն լուռ նստած էր իր շինած եռոտանի աթոռի վրա,  
մեծ զարմանք պատճառելով կնոջը, երբ երկու մանուկները մօտե-  
ցան նրան և իրանց փոքրիկ ձեռքերով սկսեցին նրա գրապանները  
խուզարկել։ Այնոեղ էլ բան չգտան։

Այժմս արդէն բոլորովին կորաւ նրանց յոյսը։ Մեծը ամօթից  
կարմրեց և հաս ոտով սկսեց թռչկոտիկ, իրան չմատնելու համար։  
Խսկ միւսը առանց քաշւելու բարձրաձայն լաց եղաւ և գլուխը  
ծածկեց մօր փեշերի տակ։ Իւանէն դիտում էր այս տեսարանը և  
նրա սիրտը այրուում ալէկոծւում էր։ Ուզում էր բան ասել, բայց  
կոկորդը չէր հնազանդւում իրան։ Վերջապէս կարողացաւ ճնշւած  
ձայնով արտասանել՝ «վաղը ամեն բան կը ստանաք... միրգ... կօ-  
շիկներ... ամեն բան, ամեն բան։ Երեխաները հանգարուեցան։  
Մայրը նրանց կերակրեց խոռը ջինից հանած հացով։ որը շատ հա-  
մեղ թւաց և պառկեցրեց իրանց աղքատիկ անկողնի մէջ։ բայց  
նրանք երկար ժամանակ արթուն մնացին։ Փչփչում էին իրար հետ  
և ծիծաղում։ Իւանէի ուշագրութիւնը գրաւել էին երեխաները։  
Նրա ականջին հասաւ դրանց երգի ձայնը, որ ձեռաց յօրինել էին.  
«վաղը շաքար կ'ուտեմ ես, վաղը նուղլի կ'ուտեմ ես։ Կրկնեց  
այս երգը մի քանի անգամ, յետոյ կամաց-կամաց նւազելով՝ դա-  
դարեց։ Քնեցին։

— Ի՞նչ ես յոնքերդ կիտել ու լոել, ինչու չես խօսում, զիմեց  
կինը, ի՞նչ չար, ի՞նչ բարի...։

— Ժամանակ չէ խօսելու, սաստիկ հոգնած եմ և քունս տա-  
նում։ է, վաղը կ'ասեմ։

— Այգեկութը վերջացաւ, գինին ծախսեցիր... նորից խօսեց կինը։

— Այդպէս է հա, ասում եմ վաղը կ'ասեմ, հոգնած եմ։

Պառկեցին քնելու։ Կանթեղը հանգցրին և շուտով տիրեց  
լուռութիւն։

Իւանէն պառկել էր մէջքի վրա, ձեռքերը գլխի տակով էր

արել և աչքերը լայն բացել։ Նրա գլխովն անց էին կենում հազար տեսակ մոքեր, և մէկը միւսին հետևելով խառնում էին իրար։ Երբեմն զառանցում էր, ինչպէս ջերմից բռնւած հիւանդ, երբեմն ուշքի էր գալիս և մի քանի բուտէ նրա աչքին երևում էին աղքատութիւնից մաշւած մանուկների դէմքերը։ Յետոյ այս դէմքերը, կերպարանափոխւելով զանազան տեսակի, մերթ լաց էին լինում։ և հաց խնդրում, մերթ ուրախ ու զւարթ ծիծաղում-ուրախանում։ Սրան յաջորդում էր նրանց երգի ձայնը, որ քնելիս ստեղծեցին իրանց համար։ Այս երգը նորից փոխում էր լացի, և նրա աչքին ներկայանում էր տիսուր աեսարան, թէ ինչպէս գասարկ խուրչին ու գրպանները գառնութիւն պատճառեցին երեխաներին և վերջը մոռացութեան մէջ ընկղմնում։ Շուտով զեր էր թռչում տեղից, նստում և տաքացած աչքին ու ճակատը տրորում։ Աշխատում էր մոտածել թէ ինչ աղքիւրից կամ ինչ կերպով ապրուստ ճարէ ընտանիքի համար։ Ենթադրում էր, որ, եթէ վերադառնայ ազգետիրոջ մօտ և պատմէ իր դրութիւնը, նա անշուշտ կը խղճայ և նրա աշխատանքը գոնէ կիսով չափ կը վարձատրէ։ Իսկ եթէ այդ չաջողւի, կարող է մշակութիւն անել միենոյն գիւղաքաղաքում և օրական քսանուհինգ-երեսուն կոպէկ աշխատել։ Այդ ենթադրութիւնը վայրկենաբար ուրախացնում էր նրան, և նա դարձեալ առաջւայ նման պառկում էր։ Փառք էր տալիս Աստծուն, որ ընտանիքը առողջ դրութեան մէջ գտաւ, զղջում էր, որ ճանապարհին, մատուռը համբուրելու փոխարէն, զղւելի յանցանք էր ուզում գործել և սկսում էր երեսը խաչակնքել ու ի սրտէ ներուժն ինդրել։ Այս քաղցր եքեւակացութիւնն էլ շուտով անհետանում էր, տեղի տալով տիսուր իրականութեան։ «Ճակ վաղը», մտածում էր նա, «չէ՞ որ երեխաներին խոստացել եմ... չէ՞ որ կիսս էլ մեծ յոյսեր ունի...» կրկնում էր միենոյն սիրտ մտածմունքները և անխնայ հալածում։ Զայրանում էր իր քամբաղդ ճակատագրի վրա և համոզւում էր, որ, ինչպէս երկրում, այնպէս էլ երկնքում չկաց արդարադատութիւն։ Սյրում էր նրա գլուխը։ Խսաեց ու յենւեց իր ձեռքերի վրա։ «Ով որ վատութիւն է անում, Աստած էլ նրան է օգնում։ Խօսեց նա լսելի ձայնով։ «Մենք ամենքս տառւմ ենք, որ հայերը վաս են, բայց Աստւած դարձեալ նրանց է օդնում։ Տոն, տեղ, դուքան, լաւ

ապրուստ դրանք ունեն, իսկ մենք վրացիքս ինչ ունինք, ոչինչ։ Ել ուր է երկնքի արդարագառութիւնը։ Ճիսկ Ուրիսաթուրանցի Գալթիկօնա, շարունակեց նա խօսել, «Թէպէտ վրացի է, բայց գողերի ու աւազակների մէկն է, այդ ամենքը գիտեն, ուրեմն էլ ինչու է Աստւած դրան օգնում։ Ի՞նչ արծաթեաչ քամար ունի մէջքին կապած, ծոցում ժամացոց, լաւ ուտել, լաւ խմել...» սկ ես, աւանակս, իմ աստւածավախ բնաւորութեամբ հացի կարօտ եմ, ընտանիքս ահա այս դրութեան մէջ է։ Նա լրեց։ Նրա հոգեկան տանջանքը քանի գնում աճում էր։ Զէր կարողանում հաշտւել այն մոքի հետ, թէ առաւոտեան պէտք է ալատասխան տաց անմեղ երեխաներին, որոնց անչափ սիրում էր և որոնք ոսկէ յոյ-սերով պէտք է վերկենան և զիմեն իրան։ Նայնպէս յիշեց, «Ր զար-հուրժի առաւոտը շուտով պէտք է յաջորդի մութ զիշերւան։ Առ-ժամանակ անշարժ մնալոց յետոց, իրա համար էլ անսպասելի կեր-պով վիր թռաւ տեղից և, վիրաւորւած գագանի նման, արիւնա-լից աչքերը չորս կողմ դարձրեց և աջ ոողը ուժգին զարկեց գետ-նին։ Շտապով բաց արաւ դուռը և ոտաբորիկ ու գլխաբաց դուրս վազեց։ Դիմեց դէպի փոստի լացն ճանապարհը և անյացտացաւ խա-ւարի մէջ։

---

Առաւոտ էր։ Այդ օրը հոչակաւ որ Ալավերդի վանքի տօնն էր, ուր Վրաստանի բոլոր անկիւններից այցելում են ուխտաւոր-ներ։ Եղանակը մառախլապատ էր և թաց։ Գալուստի դուքանի առաջ հաւաքւել էր բազմաթիւ ժողովուրդ։ Դուքանը գտնուում էր փոստի ճանապարհի վրա, որը ծածկւած էր անիւնների անթիւ հետ-քերով։ Մհագին ընկուզենիներ իրանց լայնածաւալ ճիւղերով ծած-կել էին ճանապարհը և աստիճանաբար հեռանալով կորչում էին թանձր մառախուղի մէջ։ Դուքանի առաջ մի չորացած ծառից պա-րանով ամուր կապւած էր մի մարդ։ Նրա կիսակենդան դէմքը ար-տայայտում էր բարոյական տանջանք։ Ամբոխը շրջապատել էր այդ դատապարտւած մարդուն և ուղղակի երեսին նայելով գուռում գո-չում էր։ Բան չէր հասկացւում, թէ ով ինչ էր ուզում ասել, տակայն կարելի էր եղբակացնել, որ նրանցից ամեն մէկը յանդիմա-

նութիւն ու նախասինք էր կարդում նրա գլխին։ Մէկ կուզիան երիտասարդներս վազեց դուքանի մէջ, վերցրեց թանաքամանը և, շուռ տալով իր ձեռքերի վրաց, միանգամայն սւացրեց, շտապով դուրս եկաւ և, մարդկանց գէս ու դէն քաշելով, մօտեցաւ կտորած մարդուն և իր ձեռքերը քսեց նրա երեսին։ «Հա զոչազ Զալիկօ» աղաղակեց մի մարդ։ Նատերը նոյնպէս հետեւեցին նրա օրինակին և հաւանութիւն ուն սրամոռութեան համար։ Գիւղի կապոյտ աչքերով ու շէկ մօրուքով քահանան, որ բոլոր ժամանակ տիտուր նայում էր, մօտեցաւ կուզիանին և իր գաւազանով մի քանի անգամ հարւածեց, ասելով «Աստուծու տւած պատկերը ո՞չ ոք իրաւունք չունի այլանդակելու»։ Ամբոխի մէջ մի բույս տիրեց լուռ թիւն։ Դալուսուլ այս բանից ոգեորւած նոյնպէս յարձակւեց կուզիանի վրա ծեծելունապատակով, բայց սա, նկատելով այդ, փախաւ հեռացաւ ու, մի պարսպի վրա բարձրանալով, նստեց ու այնտեղից սկսեց զիտել։

Մամասախլիսան (տանուտէր) նստած էր դուքանի մէջ իր զրադրի հետ միասին և պատրաստում էր արձանագրութիւն կազմելու եղելութեան մասին։ Առժամանակ մտածելուց յետոյ միոքը փոխեց, դանդաղութեամբ վերկոցաւ տեղից, դրւրս եկաւ դուքանի միջից, հանեց գրապանից դանակը և, ոչխարի միջից մի կտոր դմակ կարելով, որ կախւած էր սիւնից, զցեց մեծ կաթսաչի մէջ, ուր բոլղբաշ էր եփւում։ Յետոյ, մօտենալով դատապարտածին, հրամայական ձայնով խօսեց։ «Այս նաշխան գիւղում դատաւորը ես եմ; ուրեմն բացի ինձնից, ոչ ոք չպէտք է համարձակւի սլան պատժելու։ Ո՞վ էր այն խոզը, որը մրոտեց սրա դէմքը»։

Մի զառամեալ ծերունի իր ձեռնափայտի օգնութեամբ հազիւանցաւ ամբոխի միջից և, մօտենալով դատապարտածին, ասեց։

«Իւանէ, այս դռւ ես, չեմ հաւատում, Աստած է վկայ։ Դու և զողութիւն ու աւազակութիւն... չեմ հասկանում։ Մեր զիւղում քեզ նման համեստ ու խոհեմ մարդ չկար, իսկ այսօր... Փուքո նամուսին։ Այս ասելով թքեց իր ոսների աւազ և հեռացաւ։

«Հայերից է երեխ սովորել, աւելացրեց մամասախլիսան, ամբողջ մի տարի նրանց մէջն էր... «Փուշ կենդանի», զիմելով Իւանէին շարունակեց նա, — միակ մարդն էիր մեր զիւղում, իրրև պատական և աշխատասէր, իսկ այսօր մեծ ու փոքր երեսիդ է

թքում... Բանտարկեմ... Այսպէս կապւած Թէլաւ ու զարկեմ, որ քեզ բանտում մաշեն... Չեմ կարող այդ անել, որովհետև խղճում եմ քո քաղցած մանուկներին...

Ամբոխը ուշադրութեամբ լսում էր այս, իսկ Խւանէն կարծեա անտարբեր էր ամեն բանին: Նա նկատելի կերպով փոքրացնել էր: Եթէ նա աչքերը փակէր՝ կատարեալ գիտի տեղ կարելի էր ընդունել:

Այդ միջոցին երեաց մի ձիաւոր: Նա կանգ առաւ գուքանի առաջ և զլխարկը բարձրացնելով արտասանեց «Օրհնեա տէր, բարով մամասախլիսա, բարով ձեզ, ի՞նչ խաբար է, ինչու էք կապէլ մարդուն, խելագար է»: Ինչպէս երեաց, ձիաւորը գիւղում յացտնի սիրածի էր (զինի ծախող), որ ամեն տարի գալիս էր գինի առնելու և հասարակութեան կողմից յարգանք էր վայելում:

Մամասախլիսան կարձառուո բացարեց գործի էութիւնը, թէ այս գիւղացին, որ ամբողջ մի տարի կորած էր, վերագարձել է հիմա և, դեռ մարդու երես չուեսած, այս առաւօտ լուսաբացին յարձակւել է Ալավերդի գնացող ուխտաւորների սալի վրայ կողպտելու նպատակով: ՚Ի հարկէ այս թշւառականին այդ չէր յաջողւել, որովհետև սալի վրա երեք հոգի տղամարդիք են եղել, որոնք օրինաւոր կերպով ջարդել են, բայց կանաչք ու երեխաները սաստիկ վախեցել են...

— Տնաշէն, ընդհատեց ձիաւորը նրա խօսքը, կողոպտւածը սա ինքն է երեւում, ի՞նչպէս կարող էր սա կողոպտելու դիտաւորութիւն ունենալ... կամ կարելի է խելագար է այս խեղճը:

Ունեցել է արգեօք զէնք կամ սրա նման մի բան...

— Զէ, չէ, բան չի ունեցել, աղաղակեցին բոլորեքեան միասին, — ի՞նչպէս տեսնում ես՝ հէնց այսպէս է եղել:

— Ուսւ կացէք, գոռաց մամասախլիսան:

— Ե՛ բարեկամ, դիմեց Խւանէին սիրածին, ձիուց կուանալով դէպի նա, — ի՞նչպէս տեսնում եմ դու քիթդ սրբելու շնորհք էլ չունիս, ի՞նչ քո բանն էր մարդկանց կողոպտել: Թէ Աստւած սիրես՝ արձակի այս մունդրեկին, թող գնայ կորչի, դիմելով մամասախլիսին աւելացրեց նա:

— Երեխերքս մեղք են, թողէք գնամ, արտասանեց Խւանէն

աջնպիսի ձայնով, կարծես գերեզմանից լինէր: Նա ուզեց շարունակել, բայց չկարողացաւ, միայն շրթունքները շարժեցան: —Կարձակեմ, կարձակեմ, պատասխանեց Մամասախլիսան, քիչ էլ սպասիր:

Այս ասելով, դանակի ծայրով հանեց կաթսայի միջից իր զցած դմակի կտորը և վրազելով մօտեցրեց կալանաւորի բերանին: Քաց արա, հրամացեց նա, «բաց արա, թէ չէ դանակս կը խրեմ բերանդ», գոռաց նա:

Աերջադէս բացանել տւեց բերանը, տաք դմակը կոխեց մէջը և երկու ձեռքերով սղմեց գլխի և ներքի ծնոտի կողմից և, մի քանի րոպէ այդպէս պահելուց յետոյ, բռունցքի մի հարւած հասցրեց ծնոտին, տակից:

—Արձակեցէք հիմա սրան, թող դնա կորչի. եթէ սրան բանտարկեմ՝ երեխաները պէտք է պատժւին, արտասանեց սառն կերպով Մամասախլիսան:

—Լաւ պրծաւ, ամբոխի միջից լուեցին ձայներ:

—Այո լաւ պրծաւ, հեգնօրէն կրկնեց ձիաւորը, —ոչ մի առամ սաղ չի մնալու բերանում:

## ԻՆՉՊԵՍ ՄԷԳԸ

Շ Ա Կ, Թ Ի

Ինչպէս մէզը, որ առառւն  
Ներս կը խուժէ աենեակէդ  
Ծաղիկներու բուրման հետ  
Գարնան օր մը զըւարթուն,

Այդպէս տարտամի, լսափիտակ  
Թարմ բաղձանքներ անլրջոս  
Մերթ կ'ողողեն խուռն ու յարդ  
Մրրկածու փէկըքիս առ կ:

Այդ խուսափուկ վայրկեանին  
Տենչ մը վրաս կը թառի.  
Տենչ՝ ունենալ կիթառի  
Հնչիւն շեշտերը նրբին,

Եւ երգել ձեզ հեշտողոր  
Սրտիս կեանքը երագուն  
Ու անսրոշ, անկայուն  
Այդ բաղձանքներս իմ բոլոր:

Լալբցիկ 93 թ. գեկ. 23-ին.

## ՍԵՒԵՐՈՒ ՄԵԶ

Ն Ա Ն Թ Ի

Շողենաւի կէս մութին մէջ  
Սև բարձերու ֆոնին զրայ  
Աղջիկը ետ յենած անփոյթ  
Մտամոլոր, լուռ կը խոկայ:

Քնքուշ, ազւոր գէմքը տիսուր  
Սև քօղին տակն է ամսուած,  
Չոյդ մը սիրուն, մանրիկ ձեռքեր  
Սև ձեռնոցով պինդ գրկւած:

Սև մազերուն վտակն է յորդ,  
Որ ուսերէն վար կը վազէ.  
Ծունկերուն մէջ կը քընանայ  
Հովահար մը սև մետաքսէ:

Սև գօտիին տակ սըլացիկ  
Ճկուն իրան մը նըրբամէջ.  
Կուրծքն ուսուցիկ ու դողդոջուն  
Չուլւած իր սև չիփակին մէջ:

Սև գուլպայով ոլոք մը կոր,  
Որ սև, պարզուկ շըրջաղգեստի

Ալիքներէն խորհրդաւոր  
Միշտ անզգուշ դուրս կը միտի:

Թարթիչներուն ու թաւուտէն  
Աղնարին ինծի երբ կը շանթէ,  
Ա', սկ' աչքեր, այդ թնչ ուժ է,  
Որ սիրոս այսպէս կը կաշկանդէ:

Ա. Պոլիս, 1893 թ. մարտ 13:

## Մ-ին.

ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃԵԱՆԻ

Քո սրտի մէջ երբէք ես չեմ որոնել  
Անմիտ ցնորք և վաղանցուկ հեշտանքներ.  
Հանգիստ ժամեր գտնել ես չեմ ցանկացել,  
Ոչ էլ զրախտի հնչիւններ...

Ուզում էր արձագանքը դուրս կանչել  
Մաքուր, ազատ զգացումիս ազբիւրին...  
Ահ, ինձ պէտք էր պատասխանը դուրս իւել  
Այս իմ տանջող մոքերին...

Այդ չունեիր, բայց թող քո մէջ բորբոքւէր  
Ոչ լոկ կրքեր, այլ խարոյկը իւմ մահւան...  
Հպարտ հոգիս թող նրա մէջ պարաստւէր  
Ոչնչանալ յաւիտեան:

Օ՛ թող այնտեղ գահավիժւէր իւմ հոգին  
Մոքերիս հետ՝ անհուն, անվերջ հոսանքով  
Եւ թող նոքա ընդմիշտ անհետ կորչէին  
Այն բոցերում թաղւելով...

## ՏԱՁԿԱ-ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹԻՒՆԵՐԸ

Ս Ե Ց Լ Ա Ն Ի

Տեսնելով լրագրութեան մէջ Օսմանեան կառավարութեան շին-  
ծու տեղեկագրերը Հայաստանի ազգաբնակութեան մասին, ուր  
վեց վիլայէթներում հազիւ թէ մի միլիօնաչափ հայեր լինին  
բնակած (?), տեսնելով մի շարք հարցեր իրար վրայ դիզւած, որոնք  
շնորհիւ վեհապանծ սուլթանին խոջ ու խուժ են հանդիսանում  
հայկական հարցի լուծման, քանի որ շշափելի կերպով ուսումնա-  
սիրած եմ Տաճկա-Հայաստանը, ճանաշում ազգաբնակութիւնների  
բարքերը, հակամատութիւնները, անցեալն ու ներկան, անհրաժեշտ  
եմ համարում պատկերացնել Հայաստանն իւր բոլոր ազգաբնակու-  
թիւններով։

Օսմանեան կառավարութեան բարի սովորութիւնն է խեղա-  
թիւրելով եղծել ճշմարտութիւնը, եղծել ջանալ մինչև անդա՛ր  
ապացուցած իրողութիւնները։

Օսմանլին ջանաց ծածկել իւր անլուր գազանութիւններն 1890  
թւից կազմւած ծրագիրը, որ իրագործւեց Սասունում. այժմ էլ  
նա աշխատում է ծածկել հայերի ճիշտ թիւը. ներկայացնելով  
ազգաբնակութեան մի մասը նա կամենում է շարունակել  
իւր ահոելի բոնապետութիւնը։ Անձամբ բոլոր Հայաստան  
շրջած լինելով, մանաւանդ Վան, Էաղէշ, Կարին, Տրավիզոն, Երի-  
զա, Խարբերդ, Սեբաստիա վիլայէթները ճանաչելով, սոհմուում եմ  
ճշմարտութեան պարզւելուն նպաստել, որովհետեւ թուրքաց շին-  
ծու վիճակագրական թւերն ահաբեկում են ծանօթին, չլատում  
կորով անժանօթին։ Ահարեկում է ծանօթը, որովհետեւ դադա-

նու թիւնների կարգին է պատկանում այդ սուտ ու պատիր վիճակագրութիւնը. զորանով խարւում է Եւրոպան, ջլառում է անծանօթի հաւատքը, կորովը, ճշմարիտ համարելով կամ ճշմարտութեան մօտ ենթադրելով։ Այդ վիճակագրութեան մէջ չափազանց քիչ է գրւած հայի թիւը, բազմապատկւած ոչ հայինը. մենք այդ գիտենք, թէև մեր խօսքին լիովին չափանի հաւատայ Խւրոպան, քանի որ հայենք. սակայն պիտի խօսենք։

Թէ օսմանլին ինքը դիտմամբ քչացրել է և թէ աւերիչ օրինադրութիւնը հէնց մեր պատրիարքարանի միջոցաւ կիսել է, բացատրենք թէ որպէս Քեամիլ, Նաքիր փաշանների ծրագրով 1884 թւին Համիտիչ թէսքէրէ (Համիտեան անցագիր) հրատարակւելով, ծախփերի, տուրքերի անսպասելի հարստահարիչ նոր գոներ բացւելով, տաճկա-հայք մի մասը միայն ցոյց տւին պատրիարք Տ. Ներսէս Վարժապետեանին, թէև լաւ գիտէր օսմանլին, որ զգալի կերպով նւազեցաւ այդ թւի վիճակագրութեամբ հայի թիւը Դուրս մնացին լեռնական հայեր, մի շարք շինայաններ, որ կը կազմեն վիճակագրւածների մի երրորդը, Սասնցի, Գէաւալցի, Զէցլունցի և այլ ամրադիրք հայերից մի մասը միայն ստացաւ Համիդիչ թէսկիրէ, այն էլ քաղաք գնալիս անցագիր ունինալու մոօք։ Թէ ինչ աղետալի հետեւութիւն ունեցաւ Համիտիչն, բէտէլի էսէքէրիչն (զինւորական տուրք)՝ երկու խօսքով կ'ասենք չերկարաբանելու համար։ Հայաստանի քրիստոնեայ այրը կնոջից բաժանւեց որ զաւակ չունենայ, որ անմեղ մանկան հինգ բուպլու տուրքը չծանրանայ չքաւոր հօր վզին, ինչպէս ծանրանում է մեռած հօր, եղբօր հարկը, թէև մեռած լինին տասը տարի առաջ, թէև կառավարութիւնն զիտէ այդ, բայց՝ սրի, մորակի առաջ չէ կարող խօսել մահւան վկայագիրը։

Այս ասելուց յետոյ շօշափում ենք մի այլ կենսական հարց, որին իրազեկ լինելով հանդերձ՝ սուլթանի կառավարութիւնը ծածկում է աշխարհից. զա ոչ այլ ինչ, եթէ ոչ թիւրք ազգի կազմը, նորան արտաքուստ սուլարացնող ցեղերի պատկերնենց պատմական անցեալով և անհաստատ, անորոշ ներկայով։ Պէտք է այս բոլորն՝ ինչատի առնել, այսինքն՝ զիտենալ՝ որ հայերն ստիպւած են իրենց թիւը պահել, գիտենալ նաև՝ որ թիւրք տարրի կէսը ցեղով մեզ է պատկանում, ապա

ըստայնմ վերաբերւել օսմանեան կառավարութեան վիճակագրութեան և ընդունել նորա թւերը:

Մահմէդի աղետաբոյր վարդապետութիւնը տարածւեցաւ խիստ արագ, կանգնեցաւ բեղումն հզօր իշխանութիւնը, ապա՝ կոտրատ-ւելով աշխարհի այլ և այլ կէտերի վրայ, թողեց ածուներ, որ մինչեւ այսօր գոյութիւն ունենալով՝ ժամտախտ են եղել երկրագն-դին, փչացնելով փչացնում են առողջ, ընդունակ ազգերի կեանքեր... այս ճշմարտութեան գիտակ Եւրոպան զեռ խնամքով սննդում է մահ-տարաժամի մահաբոյր միկրոբներին: Ահա այս ածուներից մինն է արդի օսմանեան զառամած կայսրութիւնը, որ բիւրերով քրիստո-նեաներ է կոտորել իւր հինգ դարու տիրապետութեան սարսափելի շրջանում Սակայն՝ նա չունի իւր հօր, հագարացու, յառաջադի մական ձգտութիւները, նորա պատմութեան արիւնաներկ էջերը միայն հրեշտացին ոճիրների քարտէզներ են, միայն աշխարհակալական վայ-րենի անցքեր են, միայն բարբարոսութեան անօրինակ Փակտեր են: Նա չունի իւր հօր յառաջադիմական, գիղարւեստասէր ողին, չունի ճարտար ձեռքերն ու բանաստեղծի հանճարը, բացի նորա կրօնա-կան նեղ-սքոլասթիք աշխարհավարտկան արենավառ հայեացքներից: Պարզ երևակացելու համար պէտք է վեր առնել կարող, ճարտար, բայց վայրագ հօր որդին իբրև օրինակ, որ միմիայն վատ կողմերը աւելի խոշոր կերպով լինի ժառանգած, —և մենք կը տեսնենք առանց խոշորացոցի օսմանեանց հարազատ պատկերը. սորա ապացոյցն են իւր «թարիքները» (պատմագրութիւն) սկսած «Գէօջէլի-Խընըս» (Գեղանին Խնուս) դրքից մինչեւ այս աւուր ընթացիկ գրականու-թիւնն ու աշխարհին յայտնի արարքը:—

Մոնղոլների արշաւանքի ժամանակ Տուղրիլ գօրավարը 10.000 ընտանիքով տեղաւորւեց Հայաստանի սահմաններում, ձուլւելով հաս-ու կտոր՝ գէս ու զէն մնացած բեղուինների հետ, կազմելով Խկոնիոյ սուլ-թանութիւնը (1075-1300. Խմբ.): Իբրև մահմէդական ցեղապետու-թիւն ապրեց նա Խուրազմի մեծածաւալիշխանութեան, Ագ-գոյունլու, Գարադոյունլու թագաւորների, Աւղուն-Հասանի ժամանակներում, ապա ձեւացաւ սուլթանութիւն: Սուլթան-Ելտորմ, զարնւելով Թէ-

միր Լէնկի հետ, նորա կորստաբեր արշաւանքին մնաց կանգուն։ Օսման, Ֆէթիֆ-Մէհմէդ-Ղազի ընդարձակելով սահմանները՝ տիրեցին Յունաստանին, ապա՝ Հայաստանին, որի մի մասն յունաց, մեծ մասն արաբներից մնացած իշխանների և հայ-նախարարների ձեռքն էր։

Օսմաննեան գրագէտներ մինչև այսօր պնդում են, թէ օսմանցիք հայերին հետ կուած չեն, հայ իշխան տեսած չեն, թէ հայերը յունաց ստրուկներն էին և այն։ Թէ որ աստիճան ստոյգ է այս անպէտք առարկութիւնը՝ կարելի է բացագրել փաստերով։

Ֆէթիհ-Մէհմէդի արշաւանքների ժամանակ՝ ընկած էր Կիլիկիոյ փառքը՝ նորա նախորդների և Եգիպտոսի սուլթանի սրով, մեր կաթողիկոսներն աստանդական, հալածական, բուն Հայաստանը բաժանւած յունաց, պարսից, բեղուին և հայ իշխանների մէջ։ առրում էր ազգը հոգեվարքի նման։ Մի շարք գաւառներ Վասպուրական, այսինքն Վան և Գնունիք (Ամիկ), Տարօն, Աղահունիք (Պուլանըք), Խնուր և այն անմատչելի անկիւններ դեռ մնում էին հայ իշխանների ձեռք, սա պատմական իրողութիւն է թուրք գրականութեան մէջ։ ապացոյց՝ «Քէօզէլի. Խընըս ուր աւանդում է կուի անցքը, զինու զօրութեամբ հայոց ընկճւիլը, միւս իշխանների կամաւ անձնատուր լինելը, Հայոց աշխարհի էկմանէթուլ լահ» (աւանդ) լինելը։ Վկայութիւն՝ վանցի Քօլոզ վարժապետի «Պատմութիւն Վասպուրականի», թ. Կարապետի միաբան Եսայի վարդապետի «Երան Հայկագն»։ Քօլոզ վակտերով հաստատում է Վանի, Ամիկի թագաւորի անձնատուր լինելը, իսկ մենք այսուեղ կը պարզենք և մի քանի գաղտնիքներ, որոց սոււերները պահւած են «Թարիքէթի Օսմանիկ» (պատմութիւն օսմաննեան) հատորներում ։<sup>1)</sup>

Ֆէթիհ-Մուլթանը Յովակիմ Բրուսացուն պատրիարք անւանելով, հայոց հետ լաւ վարելով, գրաւեց յոյներից զգւած դիւրազգած

1) Մեր կիշած գրքերը ցաւում ենք որ ակժմ չունինք ՚ի ձեռին, եթէ ոչ հասւածներ մէջ բերելով պիտի հաստատէինք. սակայն տաճիկ և տաճկա-հայ գրականութիւնն ուսումնասիրած անձեր աչքի առաջ կարողեն ունենալ առելիքներս։

սրտերը, նոցա համակրութիւնը, անկեղծ հաւատքը. իսկոյն մանրիկ իշխաններ, դաղթականութիւններ, քանի որ «Հայն աւանդ էր», սիրացոժար զլուխ թեքեցին նօրա գահին առաջ, սուլթանները յատուկ ֆէրմէններով շնորհեցին նրանց իրաւունքներ, օրինակ՝ Վանում Արծրունիք՝ Ամիկի թագաւորութեան շառաւիդները, Մուշում Մամիկոնեանք վայելեցին մինչև 1700—1800 թւերը «Թոփիչ-պաշի» (Ժնդանօթաձիգների զլուխ) տիտղոսները և, իբրև հին աւատական իշխաններ, երկրի հարկերից մի որոշ մաս ստանում՝ էին: Եթէ աւանդ չէին այդ երկիրները, եթէ չկացին ֆէրմէններ և գրաւոր փաստեր «աւանդ» լինելուն, ինչու օսմանցին պիտի վճարէր Արծրունի, Թէմիրեան (այժմ՝ Թուրք), Մամիկոնեան, Երամեան և այլ տոհմիկների ժառանգներին գրեթէ հարկերի կէսը, որոց անցքերը պահած է և դեռ ցիշում է նրանց երկրի ժաղովուրդը: Օրինաւոր պատերազմով են առնւած Ամիկ, Վան, Մուշ և այն, ումի՞ց և մվ, որ թուրք պատմազիրն է աւանդում: Այս մի քանին, որ գրաւոր փաստերից ենք մէջ բերում, ցոյց կը տան՝ որ Հայաստանի սիրոն ու հոգին զեռ տրոփում էր Օսմանլու եկած ատեն, բայց՝ խաբւեց, շլացաւ իւր «Պատրիարք»-ով, անձնատուր եղաւ, կարծ ժամանակի մէջ թուրքը կարդաց նորա «Հոգոցը», սկսեց բանութիւն, բարբարոսութիւն: Ահա հայ իշխանք սկսեցին ուրացութեան դիմել, որոց յայտնիների ցանկը զնում ենք այսաեղ (ժողովրդից քաղած): և յայտնի է ամեն մի գաւառին իւր իշխանի ուրացութեան զզւելի պատճառը: Որքան հնարաւոր էր զգուշացել ենք երևոյթները վայրիվերոյ քննելուց. ցանկը գասաւորելուց յետոյ աւանդական պատմութիւնը մէջ պիտի բերենք:

Ա. Կարնոյ վիլայէթ, Համշէնի — Նարմանի իշխան, մի ոմն Քէշիշեանց, 17.երորդ դարի վերջերին, 8—10,000 մարդով, բւնութեամբ Վարարզիու (Կարնոյ) Տրապիզոնի կուսակալ արիւնածարաւ Լալէ-փաշաշային ուրանում է:

Բ. Տրապիզոնի մասնում, Սիւրմէնէ և 0ֆ գաւառակներում՝ 38 կամ 40 մեծ ու փոքր զիւղեր, առաջնորդութեամբ իշխան Ալթունի, նոյն փաշայի ձեռօք ուրանում են:

Գ. Ռիզէ քաղաքն ու զիւղերը, առաջնորդութեամբ Կարապետ ամիրայի, որի ցեղը մինչև այսօր Կարապետ օղլու անունն է

կրում; Լալէի դազանութիւններից զարհուրած՝ ուրանում է...

Դ. Արդահանի մէջ իշխան Դէմիրճօղլի, եօթ հարիւր ընտանիքով և մի քանի գիւղերով, Լալէից ահաբեկ՝ ընդունում է իսլամութիւն, լինում իւր երկրին փաշա. Կորա ցեղի մի հաստածը գաղթած է այժմ Կարին, որի ներկայացուցիչն է Կարնոյ նախկին ոստիկանոքումսար Դէւրիշպէց և ինձ ծանօթ փաշաների, պէցերի մի շաք:

Ե. Շաղին-Գարահիսարի կողմերում թրքացած Մալազ օղլի, իւր ցեղով:

Զ. Կեսարիս՝ անհամար աւագներ և ժողովուրդ:

Է. Կիլիկիա՝ Նարին-պէց, որի ցեղն այժմ նոյն երկրի ժանտան է և առաջին ուժեղ քուրդը, թւով հարիւր հազարից աւելի:

Ը. Զմիւռնիոյ և Տիքիլիի միջավայրերում, կամ հին Տրովադավի, Բերգամանի, Ալտընի կուսակալութեան շրջանում, իշխան ոմն Զորտվան, այժմ 100,000-ից աւելի Զէթմի անուն ցեղը:

Թ. Վան՝ Թէմիրեանք, մեծաթիւ հետեւրդներ, որ մինչև այս րոպէն հայոց կուսակցութան շրջաններում Ապօղոսեան են, նրանց պէցերը և փաշաները երկրագու Վեհափառ Հայրիկի կարծեաց և ուղղութեան:

Ժ. Խշկովան, Մանլըան, Խոծըձվան, Խորըման և այլ քրիացածներ, որոց մասին գրած եմ «Աստունա»-ի մէջ:

Արդ՝ այս անուններն, իբրև Փակտ դնելով, շեշում ենք, որ թուրք ազգի կէմն հայ է եղել անցեալում, իսկ ցանկագրածներ և մուտացածներ, ինձ անծանօթներ, որոց մասին հեռակաց եմ լսած՝ ուրանալով հանդերձ չեն մոռացած իրենց նւիրական սուրբերին, հայերին, չեն խլած հայերէնի բեկորները, մանաւանդ Դիզէ, Օֆ, Սիւրմէնէ, Նարման, Սասուն, Համշէն մինչև այսօր խօսում են հայերէն կամ կիսովին խառն. սոցա հետ և Զէթմին իսլամ չէ, անունը թուրք՝ ինքն երկրագու խաչի, ամեն տարի մեր աւագ-հինգշաբթի օրը, կանաչ ապարօշի փոխարէն աւ վեղարով նստում է շէցիւր, հաց ու դինի բաժանում բոլոր ցեղին: Օսմանն ազօթում է մզկիթում իբրև թուրք, սէլաւէթ բերում Մահմէդին և ծածուկ ազօթում է եկեղեցում, երեսը խաչակնքում, ահա այսպիսի իսլամներ են կազմում Հայաստանում այն ահադին

թւի մի մասը, որ հրեշտակին ծիծաղով պաշտօնապէս նետեց օսման-լին լրադրութեան մէջ:

Հաւաքական խօսքով այս ասելուց յետոյց, ցանկագրւածների պատմական անցեալը զետեղում և ապա՝ ներկայի պատկերը պարզում եմ, որպէս զի՞ թիւրքին ծանօթ իրողութիւնը հայն էլ զիտենայ: Ուրացածների իւրաքանչիւր ցեղը մի որոշ չափով միացած է Մոնղոլ տարրի հետ, այն էլ կրօնական թոյլ կապերով:

Աւերիչ, ապականիչ, ֆանատիկոս մահմեդականն եղել է պատռհաս երկրագնդին, մանաւանդ Հայատանին. նորա սուրբ չէ խնայել ոչ մի հայի կեանքին, նորա արիւնածարաւ սիրոն ու հոգին չեն յուզել աղետաբոյր տեսարանների առաջ... Երբ նա աիրեց դրախտանման Հայոց աշխարհին, սկսեց իւր բոլոր կոպտութիւնը, բոլոր գաղանացին կիրքերը յագեցնել: Մին միւսից կատաղի կուսակալներ տիրելով այլ և այլ կենդրոնների՝ իրենց քմահաճոյքով, անասնական բնագլումով վարւեցան գերի ժողովրդի հետ: Հայոց հինգ հարիւր տարւայ զարհուրելի անցեալը, մինչեւ ներկայ բոպէն մի շղթայ է յօրինում, տարերքը՝ մի-մի եղեւնական, անլուր յիշատակներով ողողուն օղակներ են ձեւացնում: Ծերերին խօսեցնողը, ձեռագիր մատեանների յիշատակարաններ կարդացողը պատահում է ապացոյցներին: Ահ... ամեն գաւառ ահիւ պահում է գէթ մի քանի հրեշտակիպ գաղանների անուններ: Խնչեր չեն արել գրանք, ինչեր չեն մեր թշւառ նախնիք տեսել, այդ թող երեւակային թուրքին ենթակայ եղած, մի օր նորա երկրում ապրած անձերը:

Կեսարիան չի մոռմնում իզէտ փաշային, Պոնտոս, ԲարձրՀայք դեռ նզովում են Լալէին, Տարոն, Աղձնիք, Տուրուքերան աւանդում հոչակաւոր Մուսա-պէջի նախահայր աղա-Միրզա-խանին: Մի կողմից պարսկա-տաճկական գարեր տեսող պատերազմները, միւս կողմից կեղեքիչ բռնակալներ, սրածութիւն, գերեվարութիւն, առեւանգութիւն հիմք դրին գաղթականութեան, ուրացութեան: Առաջ ենք բերում՝ մի շարք թրքացածների անցքեր, որ զուրկ չեն պատմական արժեքից, նրանք շօշափում են ներկայ վիճակը:

1. Կեսարիոց կուսակալ իզէտ փաշան, ենթադրաբար 1560—1600 թ. ըջելով Կեսարիա, Եօգկաթ, Կիլիկիա և այլ գաւառներ, սուր ի ձեռին սովորում է ուրացութեան, հազարաւորներ նահա-

տակւում են իրենց կրօնի և աղջի համար. մի շարք գիւղեր, ակամայ, արտաքուստ լնդունում են իսլամութիւն: Պաշտօնապէս արգելում է հայերէն խօսել: Գուցէ Արամ՝ նահապէտ նոյն երկրում հրամայած լինելով՝ «ով չի խօսում հայերէն, հանէք լիզուն արմատից», խոտորնակին խոտորնակ արաւ Խզէտ փաշան. ով խօսում էր հայերէն՝ կարւում էր լեզուն. միայն Թալաս գիւղը կանանց շնորհիւ պահեց մայր՝ լեզուն. բովանդակ Կեսարիա լեզով օտարացաւ մայրագից, մի ժամանակ կեղծեց ինք զինք, մինչեւ անգամ Ալի, Օսման անւանեց զաւակներին, պատրից բռնակալին մինչեւ հիւսիսացին երկզլուխ արծւի խոյանալը, անցեալ գարու վերջին քառորդին. ապա զգուշութեամբ յայտնեց իւր կրօնը, սակայն կորուցած էր լեզուն, զգացումը: 1870 թւից սկսած՝ վերածնիչ Հայրիկի, անմահանուն Վարժապետանի, ապա՝ երիտասարդութեան քաջալերութեամբ վերստին յայտնւեցաւ հայուղուն, այժմ ծերերն անգամ սիրում են, թէև թոթով, խօսել մանուկ սերնդի հետ. կեսարացին թշնամի աղջի խօսքերով չէ յայտնում իւր ներքին վիշտն ու ցաւը. իսկ բոլորովին թրքացածներ երկիւղով պահում են հայացի սովորովթներ, խորհրդաւոր յիշառակներ, համակրութեամբ դիտում վերածնութեան շարժումները, մի ներքին կրակոտ, բոցավառ յոյտով:

2. Դարարդի կուսակալ արենախում Լալէ փաշան մոտպրում է հայի արիւնով կերտել մի հսկայ մզկիթ, որ հաճելի լինի իւր Ալահին ու Բասուլլահին. նա չի բաւականանում ս. Ստեփանոս, ս. Յովսէփ եկեղեցիները մզկիթի վերածելով, փոքրիկ մատուռ, մենաստաններ թէքքէ (գէրւիշի կացարան) զարձնելով. 18 երորդ դարու առաջին կիսում այդ ֆանատիկոս զազանը սկսում է իւր անլուր եղեռնազործութիւնը: Ննիչէրի, գէլի, հայթավոհմակներով խոժում են կարնոց դաշտ, Բասեան, Նարման, Սիւրմէնէ, Օֆ, Ռիզէ, մի խօսքով՝ Պոնառո և Բարձր Հայք, պղնձով թանը, կաթը զնուր եկեղեցւոյ դրան առաջ, մեծ պասին, հրամայում խմել թանն ուռանալ քաֆրութիւնը: Հրաժարւում ենք այս անցքը նկարագրելուց: Ամայացան գիւղ ու աւան, սպանդանոցի վերածւեցան դաշտ ու հովիտ, մեռաւ, զոհւեցաւ կրօնասէր հայը ոչ թէ հազարներով... Տերի, մանկան, հարսի, աղջկայ արիւն խառնւում են իրար: Ուղարական, ձիապական տանում են Կարին, արիւնով շաղախ-

ւում է Ալլահի տաճարի կիրը, շինւում է այն մեծանիստ մզկիթը,  
որ ցարդ կանգնած է Կարնոյ մէջ։ Դիտելով այդ մեծակամար շէնքը՝  
ես զարհուրեցայ, նորա կարմրու շաղախը սոսկումն աղղեց ինձ.  
որչափ հազար մարդու արիւնով էր կանգնած այդ եղերավայրը, 10  
հազար, 100 հազար. անբաղդ հայոց աշխարհիկ, քո ողջ սե-  
րունդն սպառւած է դորան արիւն մատակարարելով։

Մի քանի ցեղեր ահաբեկ ուրացն, նոքա կան տակաւին, կոչ-  
ւում են «կէ սկէ սա-ներ», այսինքն հայ-թիւրք, որոց մի հատւածը,  
վերջին պատերազմից յետոց, Օլթիի վիճակում միացաւ եկեղեցուն  
Թիւրք մնացածները խօսում են հայերէն, կամ խառն թիւրքերէն։  
Նոքա ծածուկ քրիստոնեայ, արտաքուստ մահմեդական են պահում  
իրենց, նոքա լոիկ հետևում են մեր քայլափոխերին։ —Ե՞րբ  
կը ծագի արշալոյսն իւր ամենավառ ցոլքերով, որ գանք, միանանք  
ձեզ՝ պաշտելի հայեր։ Ահա «կէսկէսա-ների խօսքը» Մի դէպք, որին  
ականատես եմ եղել, եղել են և բոլոր կարնեցիք, ապացուցանում  
է մեր ասածը։

Ազգքիլիսեցի Կարապետ Ազաթեանց 1890 թւին ձերբակալ-  
ւեցաւ. նորա թիւրք ազգական հացագործ Մահմուդ աղան, կատա-  
ղած՝ սէրայ գնաց կուսակալին և քոմիսէրին գիմելով ասաց, —  
Միթէ ձեր խիղճը մեռած է խսպառ, Բնէ է արել հօրեղբօր որդիս՝  
որ բանտարկում էք նորան, հալածում, հարստահարում էք նորան։

—Հօրեղբօր որդիդ ով է։

—Կարապետ աղա Ազաթեանցը։

—Հայլ՞... նա քո հօրեղբօր որդին։

—Այո՛ Խնդրում եմ արձակել։

—Անկարելի է, նա ապստամբների պարագլուխ է, նա ուզում  
է հայերին ոաքի հանել մեր զէմ և... հանում է։

—Այդ սուստ զրապարատ թիւն է, —որոտում է կէսկէս Մահմուդը  
բարկութեամբ, —Կարապետ աղան այդ յէ արել, եթէ անէր՝ առաջ  
մեզ և բոլոր Համշէնցոց կասէր, նա ազնիւ մարդ է։

—Ձեզ չի խօսում, որովհետեւ թիւրք էք դուք։

—Մենք մահմեղական ենք, սակայն՝ հայ։

Կարապետը ազատում է բանտից։ Սա, վաղուց իւր զիւղի մէջ  
ունեցած կալւածքը վաճառելով, ընկերացած էր Գերէկցեան Խա-

չատուրին. ձախող դիպւածքով ընկերները կորցրին մօս 1200, կամ 1500 ոսկու հարստութիւն և վարկի գիրքը, գրեթէ սնանկացան: Կարապետի և Գիրեկցեանի ընտանիքը դիւդ փոխագրեցին, առաջինի թիւրք ազգականները ընծայեցին ինչ որ ոլեոք էր. նա վերըստին տէր գարձաւ իւր կալւածներին: Այս թրքացած հայերի հետ տեսնելով զտած իմ բոլորովին մեզ հետ հապւած, արտարին մահմետականութիւնը սպանած չէ ներքին հային, նոքա հայ են՝ անւտան բուն նշանակութեամբ, մեզ չափ մտածում են սզգի ասւագայի մասին, մեզ չափ ցաւում, մեզ չափ հալածում են Գանապիկոս թիւրքից:

3. Ռիզէի հայախօս կէսկէսները, 12,000-ի չափ լազերը, որոց մի մասն այժմ՝ յայտնապէս խաչի գրօշի տակն է մտած 0լուիի կողմերում ուռւսաց տիրապետութիւնից յետոց, թուրքեր չեն:

4. Զէթմիներ՝ թւով 150 կամ 200 հազար, որոց չէլիսը վարդապետ (?) Խմբ.) դիտեն հազորդւել տարին մի անգամ, ծածուկ սպրզելով եկեղեցի արտասւագին աղօթում են իրեւ ջերմեւանդ քրիստոնեաց, երդում են եկեղեցու գմբեթով. դոքա թուրքեր են, մնաւմ են զուռաննի ուռւկաննին մէջ, մնաւմ են ծածուկ հայ. երբ պատւի, գուքի, կրօնի, մամուլի ազատութիւն ունենան, անշուշտ այս հարցերի պատասխանը զրական կը լինի: Դեռ չենք յիշում այլ և այլ քաղաքների մէջ այլազան պատճառաւներով, բռնի ուրացած անհատներ, ընտանիքներ, որոց ցանկը միշտ տպւում է ֆանաթիկոս «Միզան» ամսագրի մէջ. նոցա թիւր Տաճկաստանում 10,000-ից աւելի կը լինի: Արդ՝ որքոն արձանագրած ունիմ հանապարհորդական յուշատերին մէջ, միան կարնոյ վիլայէթում հայերի թւին հաւասար կան ծածուկ հայեր, նոյնքան եղիս, զզլպաշ, զբափիւֆ, թիւրքմէն, տիւրզի, յոյներ: Եթէ այս բոլորը առանձին հաշւենք՝ թուրքը 40 տոկոս չէ կարող կազմել, ուրեմն խաբէութիւն չէ հայն աջնքան քիչ յոց առաջ հէնց այն վիլայէթում, ուր թուրքին հաւասար ազգաբնակութիւն է կազմում միայն հայը, ի բաց առած վերտողւած տարրերը, որոնք հային հաւասար հարստահարուում են և անհաշտ թշնամի մահմեդականին, որ չեն խնայում ոչ մի սրբութիւն կրքերի զոհել:

Եթէ այս ստութիւն երևակայած լինէինք նախատեսելով միշտ

վիճակագրութիւնը կ'ունենայինք այժմ, անժխտելի փաստերով կ'ապացուցանէինք որ՝ օրինակ, Կարնոյ վիլայէթում 501,000 մահմեդական, 131.000 քրիստոնեաց չկայ, այլ 300.000 յայտնի քրիստոնեաց, 150,000 կէսկէս, եզիտի, 15,000 թիւրքմէն, 65,000 բուն մահմեդական. մնացած թիւն էլ կը գերաբերի Շահ. Հիւսէինի և այլ ցեղերի, որք աւելի հային են բարեկամ, հային աղօթարար, քան փատիշահի զշիճին (սուտ): Սոյնպէս են և բոլոր վիլայէթները: Երգրում քաղաքի մէջն է թիւրքը մեծամասնութիւն կազմում, ոչ թէ գիւղերում. թիւրքն, իբրև գաղանաբարոյ աւազակ, խորշել է գիւղական կեանքից, նա չէ ցանել, չէ քաղել, միայն կերել է գարերի ընթացքում, հետևապէս կենդրոնացած է քաղաքներում, յայտնի աւաններում: Մուշի վիլայէթում (խարէութիւն է վիլայէթ անւանել, Բաղէշի մի մասն է երկու գաւառով), իբրև թէ կան եղել 505 հազար մահմեդական, 69 հազար քրիստոնեաց: Մուշ քաղաքում հինգ մահմեդական, երեք հայ, մի այլ տարր կայ, սակայն լայնածաւալ գաշտը ծածկւած է հարիւրաւոր հայ գիւղերով, որոց ամենից փոքրը 60 ընտանիքից, մեծը հինգվեց հարիւրից պակաս չէ. նորա վրայ չկան տասնի չափ թիւրք գիւղեր: Նոյնպէս է և Պուլանըգ իւր երկու մասներով: Սասուն՝ 150 գիւղեր ունի, երեսունը ֆանատիկոս քրդերով, 60 հայախառն, հայախօս, մօս ժամանակներում անունով օտարացած Բալաք, Պատրիան, Ալիւան ցեղերով, մնացածը՝ հայերով. ուրեմն նւր են բնակում 505,000 իսլամները: Երեխ պանդիստութեան դիմածներ չկան այդ կեղծ հաշում, չկան 1894 թւի զոհերի կենդանի մնացած հարազատները, չկան 50 մեծ ու փոքր բնաջինչ եղած գիւղերը. չկան կաթոլիկ, բողոքական, ասորի: Ենթադրենք թէ հայը 69 հազար է. ապա նւր են բնակում Մշու 505 հազար իսլամները եթէ հայի թիւը քրդի թւին տեղ չէ գործածւած, նւր են դոքա, Մառնիկ, Մորիս, Աւգուտ, Ռահում, չինի՞ թէ տատասկի պէս բուսան յանկարծ, իսկ հայերը սնկի նման չորացան, ծաղկի նման տերեաթափ եղան: Բայց ամաչողն ով է, թուրքը երբ է ուղիղ խօսել: Սոյնպէս և բոլոր վիլայէթերն են, կեղծ վիճակագրութեամբ խարում են աշխարհ:

Մեր յառաջադրած հարցից չշեղւելու համար զանց ենք առնում մանել այդ կեղծ վիճակագրութեան մանրամասն քննութեան

մէջ, միայն ուղում ենք ակներեւ կացուցանել Հայտառանում բնակչող տարրերը, նոցա տրամադրութիւնը: Կարող ենք հաստատապէս հաւատալ, որ ծրագրւածից փոքր ինչ լայն ռեփորմներ մտնելուն պէս մեր սպառմածներն ուրիշ ոչինչ չեն, եթէ ոչ անվախ հայեր, գազանաբարոյ քրդին, թրքին զսող ոյժեր, մեզ չափ լնդունակ քաղաքակրթութեան:

Միթէ թիւրքեն Դէրսիմի կամ Ղուզուշանի զզլաւշները, Շահ-Հիւսէյնի որդիքը, որ մինչև այսօր ջախջախում են Օսմանեան վաշտերին, որ յաղթեցին 1890 թւից մինչև ներկայ տարին մեծաբան չէրքէղ Զէկքի փաշաշին, առանց զլուխ կքելու բռնակալին առաջ: Ահա տքա են այն մեծամասնութեան մէջ ենթագրաբար գրւած, որ թիւրք կառավարութիւնը ներկայացնում է աշխարհին, թէև համոզւած՝ որ նոքա մահմեգական չեն, այլ հայհոցիչ զուռանին, որ բարեկամ են հային, որ նոցա հետ քաջ խորոմանները հենց հայի ազաւած օրը խաչի դրօշը պիտի պարզէն իրենց հպարտ լեռների գլխին, որոց մռայլ ծմակներին մէջ հինգ հարիւր տարի շարունակ թափւած են Փատի շահի մեծաբան քաջերի գլուխները, դիերն ի կերակուր գաղանների:

Քրդերի մասին աւելի չպէտքէ շեշտել, այս, նոքա կառաղի, յափշտակող, կիսավայրենի, վայրազցեղեր են կազմում, բացց՝ երբ տիրող կառավարութեան ձեռը ծանրանայ, կ'սկսն հետզհետէ քաղաքակրթւիլ, թողուլ հարստահարութիւն, աւարառութիւն, հակամիտել շրջապատող և իշխող տարրին նմանելու: Այս ոչ միայն տրամաբանական, այլ իրական, շօշափելի փաստերով կարելի է սոսորոգել: Ի՞նչ էին կէս դար առաջ երեւանի քրդերը և ի՞նչ այսօր, ի՞նչ էին 17 տարի առաջ Զըլորի, Էօրթուլուի ելուզակ, արենախում թերեքէմէները և ի՞նչ այսօր: Թիւրք իշխանութեան ժամանակ սպանութիւն, աւերմունք անպակաս էին չիշեալ վայրերում, Քէու-Խամբէլ, Ղոզող և այլ աւազակապեսներ էին ծնում, անցորդի, բնակչի կեանքը զրաւում, ներկայանում միջնադարեան բարբարութեան թատերաբեմ: այդպիսով հին Զալզուրը իւր վրայ կրում էր զարգացման մի որոշ աստիճան: Այսուեղ չէին կարող Սուլթանի սպաշտոնակալներ կարգ պահել, քանի որ իրենք ևս նոյնպիսի զուռանական ցած սկզբունքներով սնւած, փչացած աւազակներ, ար-

իւնածարաւ գազաններ էին, բայց՝ երբ Առուսաց ձեռքն անցաւ, երբ չքացաւ ֆէսն իւր այլանդակ փիւսկիւլով, հալածւեցաւ իւր վեհապետ խալիֆի անւան հետ, երբ շառաչեց ռուսական մարակը, երբ մոտու լուրջ օրէնք ու դատաստան, խրոխ Զըլտրն ահաբեկ կանդնեցաւ, այսօր պատւի, գոյքի, կեանքի կատարեալ ազատութիւն են վայելում նոյն ինքն այն տւազակիները Առուսաց սահմաններում ապրող էշիրէթներ չեն կարող անել Տաճկաստանի քրդին արարքը, գէթնորա մի հարիւրերորդը։ Ուրեմն՝ անողը կառավարութիւնն է. երևի Շահ-Աբասի ենթագրած ծրագրով Համբիլիք գնդեր կաղմելով կարծում էր հզօր իշխանապետ ներկայանալ Ուրեմն՝ յանցաւորը օսհանլին է ոչ թէ քուրով, —քաղաքակրթեցէք, ուսումնի ողողեցէք քրոջի բանաստեղծական հոգին, և կը զտնէք մի առողջ ազդ. . . բայց փոխանակ կրթութեան տրւեցան մարտինի հրազէնք, որդեգրեցան Համիդի դիջէ անունով. . .

Հետեւ ապէս Հայաստանի մէջ ապրող հային շրջապատում են այսպիսի և կրկին թւով զուռանն ատող ցեղեր, խորոման, կէս կէս, եղիտի, չըրափիւֆ, որ հային Խաչ գիւլի (Յիսուսի վարդ), թուրքին միւզիւր իման (վատ, անվաւեր հաւատ) են անուսնում, հային հիւրասիրում իրենց յարկի տակ, ընտանիքի մէջ, թուրքին ճարահառած առանձին տեղ տալով պղծւած կերակուրներ ուտացնում։ Հային խղճում, ցաւակցում, սիրում, բարի ապազաց բարեմազթում, թուրքին զգւանք, ցասում, ատելութիւն, կործանումն սերնդէ սերունդ աւանդում. դորան ապացոյց Դէրսիմ, նորա դարէ դար կանգուն, ապատամբ զիղքը եթէ ոչ աշխարհին, զէթ սուլթանին յայտնի է, բովանդակ Տաճկաստանին, զեսունական մարմիններին առաջ պարզ է, որի Ուզուն-Հասաննեան հարստութեան շառաւիդ լինեն օսմանլին ահիւ է ծածկում։ Ուզելով խապառ խորտակել՝ ամէն տարի զոհեր կը տայ հազրէթի (սուրբ) բուսուլլահի (մարդարէի) փառքին։

Ուրեմն՝ թող մտնեն բէֆորմներ, թող տիրէ ապահովութիւն, վարչական սիստեմն արմատից բարեփոխւի, թող հսկէ սուլթանից անկախ, Եւրոպացին պատասխանատու իշխանութիւն, վեց ամիս չանցած սուլթանը կը տեսնէ թէ որքան հայեր կան, նոցա ճիշտ վիճակագրութիւնը կը պարզւի աշխարհին, որ վեց վիլայէթներում

օսմանեանց կրկին թիւն են կազմում։ Սասունի գագանութիւններն ուրանում էր օսմանլին, հաստատւեցաւ կրկին տոկոսով։ Հային թիւն ուրանում է, կը յայսնուի իսկապէս։ Թող ծագի նոր կեանքի տենչալի արշալոյսը, թշնամին միացն քաղաքներում կը տեսնէ մահմէդական, իսկ նոքս, որոց հայրերն ուրացած են և ալէների բռնութեամբ, նոքա՝ որ արտաքուստ թուրք, ներքուստ հայ, գլոխոը ճերմակ, սիրտը վրիժառ, դրսից թուրք իմամ, ներսից քահանաց, թղփառուած օսման—մկրտւած Աբրահամներ են, անդիմակ պիտի դիմեն մօր զիրկը ու բերկրանքով տօնեն սրբաղան առաւօտեան ցանկալի արևածագը……

## ԳՐԱԽՈՍՈՒԹԻՒՆ

### ԳԱՐԱԳԱՅԵԱՆԻ ՔՆՍԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Ա. Էջմիածնի միաբան  
ԳԱԼՈՒՍՏ ՏԵՐ-ՄԿՐՏՉԵԱՆԻ

(Շարունակութիւն<sup>1)</sup>)

14. Այս Գ. գլխում առարկութեանց աւելի շատ տեղիք է տալիս մասնաւորապէս ինչ վերաբերում է Ուրարտեան, այն է՝ նախահակերի, թագաւորութեանը: Փոխանակ մի առ մի ցուց տալու հնացած կէտերը, լաւագոն ենք համարում դնել շատ համառօտ նախահակերի թագաւորների ցանկը, բոլորովին նոր տեղեկութեանց և գիտերի համեմատ, հիմնելով գլխաւորապէս Սէլսի, Լեմանի, Բելքի, Նիկոլսկու հրատարակութեանց, մի քանի նորագոն մանր գիտերի և սրբագրութեանց (մասամբ դեռ անտիպ), Ասորա-բարելական բնեուագրութիւններից հանւած պատմութիւնը վերջին տասնեակ տարիներս շատ հարստացաւ, բայց այդ ուղղակի մեր երկրի պատմութեան հետ կապ ունի միմիան այն մասներով, որ վերաբերում են Ուրարտեան տէրութեանը: Բացի սրանից՝ Ասորեստանի (նախահակերին ժամանակակից) թագաւորների տարեգրութեամբ մօտաւորապէս շատ ճիշդ որոշում է և Ուրարտեան թագաւորների ժամանակ ակագրութեան վերծանութեան դորձը, իսկ բուն նախահակական բնեուագրութեանց վերծանութեան դորձը, իսկապէս առած, սկսում է 1880-ին (Քննակ. Հայոց Պատմութեան Ա. հրատ. տարին), Գիւարի (St. Guyard) և Սէլսի սրամիս փորձերով:

1) Տես «Մուլք» 1895 թ. № 6:

Ասորեստանական զանազան դարերի արձանագրութիւններից՝ նախահայկական բնեռագրերը ամենամօտ նուանութիւն ունին Նինուէում գտնւածերի հետ (9—8 դար):

Ուրարտու անունը առաջին անգամ լիշտում է Ասուր-Նասիր-արալի տարեգրութեանց մէջ (թագաւորեց 885—860 Ք. ա.), Առաջին մեր ծանօթ նախահայկական (Ուրարտեան) թագաւորը՝ ԱՐԱՄԵՇ՝ ժամանակակից է Սալմանասար Ա-ին (860—825): 860, 857 և 844 թւերին տեղի են ունենում երեք պատերազմ՝ Արամէին և Ուրարտու արշաւող Սալմանասարի միջև: Ասորեստանական շատ արձանագրութեանց մէջ լիշտում է Արամէն կամ Արամմուն: Բայց դրանցից ունինք և Ռաստամի գտած Բալաւատի բրոնզեալ պատերազմը զաները, որի վրայ Նկարւած է Սալմանասարի պատերազմը ընդգէմ Արամէին և նրա արշաւանքը Ուրարտու (The Bronze ornaments of the Palace Gates from Balawat, London 1880, Հրատարակութիւն Society of Biblical Archaeology, նույնը հրատարակւած աւելի փոքր գիրքով Նիկոլսկու աշխատութեան կից<sup>1)</sup>):

Արամէն է համարում բուն հիմնագրի նախահայկակի թագաւորութեան և հզօրութեան: Նիկոլսկին, ինձ թւում է թէ ամենաճն իրաւամբ, նույնացնում է Արամէին՝ Խորենացու զրուցախառն Արամի հետ: Երկուսի պատմութիւնն էլ նոյն գլխաւոր իմաստն ունի, Երկուսն էլ Արարատեան երկրի մեծ թագաւորներն են և ախոքեան Ասորեստանի<sup>2)</sup>: Նոյն իսկ Արմենիա և Արմաւիր բառերը Նիկոլսկին փորձում է հանել այս թագաւորի անունից<sup>3)</sup>: Արամէից ոչ մի արձանագրութիւն չունինք Հայաստանում: Հաւանականաբար նախահայերը գեռ ևս գրել չգիտէին:

Արամէի եթէ ոչ որդին, թերևս գոնէ լաջորդն է ԼՈՒՏԻՊՐ (իս) Լուտիպր'ը լիշտում է իւր որդու արձանագրութեան մէջ: Լուտիպր'ի որդին և լաջորդն է ՍՍ.ԲԴ.ՌՈՒԻ (իս) Առաջին (I), Ասորեստ, արձանագրութեանց մէջ՝ Սեղուրի: Սա է առաջին անգամ Վանում արձանագրութիւններ դրօշողը Ասորեստանից փոխ առաջ նշաններով և առողջ լեզուով:

Այս մի այնպիսի քաղաքակրթական փոխառութիւն է, որպիսին:

<sup>1)</sup> Клинообразные надписи Ванскихъ царей, открытыхъ въ предѣлахъ Россіи. М. В. Никольскій, Москва 1893.

<sup>2)</sup> Ուրեմն նորից արդարանում է իւր զլսաւոր կէտերում Խորենացու պատմութեան մեջ հասցրած աւանդութիւնը: Արամը Խորենացու կամ նրա ազգիւրի ստեղծագործածը չէ, ինչպէս կարծում է Դարադաշեանը (եր. 40, Բուզանդէսի մասին առածը):

<sup>3)</sup> Արմենիա բառի ստուգաբանութեան մի քանի փորձեր առաջ է բերում և Դարագայ, կան և ուրիշ վարկածներ, ինչպէս Դարմստեր'ինը և ազն:

տեսնում ենք Հայաստանում և լիտով, երբ հակերը գրում էին պարսկերէն կամ լուսարէն, (ալսինքն՝ լոյն և պարսիկ գրերով և լեզով): Աչսպիսի գրութիւններից, չաշելով լոյն վերտառութեամբ Արշակունի դրամները, մեզ միայն մի նմուշ է հասել<sup>1)</sup>:

Արդուր'ին լաջորդում է ԽՍՊՈՒՒԻՆ (ԽՍ), որ ասորեստանեան (Սամսի-Ռամմանի) արձանադրութեան մէջ կոչւում է Ուապինաւ Աս թագաւորն է առաջին անգամ արձանադրում տեղական՝ լինչպէս Լիմանը անւանում է խալդերէն լեզուով: Գրութեան նշանները նոյն ասորեստանական նշանագրերն են, սակայն անհամեմատ աւելի սակաւ թույլ ուրեմն աւելի պարզ:

Այս մի աշնակիսի փոխառութիւն է, ինչպէս հակերը արին հինգերորդ դարում, Մեսրոպի օրով, հարաւից առնելով և իրենց լեզուին լարմարեցնելով աւելի քաղաքակիրթ դրացիների ալբուբենը:

Իսպուին'ի որդին և լաջորդն է նախահակերի ամենանշանաւոր թագաւորներից մէկը—ՄԵՆՈՒԽԱՍ, որին կարելի էր ամենալի իրաւամբ տալ Շիռող անունը: Սրա կառուցածն է Վանի նշանաւոր ջրանցքը 75—80 քիլոմետր երկանութեամբ, հին զարերի ամենանշանաւոր շէնքերից մէկը: Ակա ջրանցքը, ինչպէս ապացուցեցին Բելքի հետազոտութիւնները, սկիզբն է առնում Հայոց-Չորում, Խոշապի հովում, Վերին-Միջինկերուց ոչ հեռու, և անցնելով Խշանի-գոմով, Սուրբ Վարդանով և Արտամէտով գալիս ջրում է Վանի ազգեստանը: Աւտուղ նորից արդարանում է Խորենացու գեղեցիկ նկարագրութիւնը, ուր «Տամիրամին» է ընծալւում ազդ գետի ամբարտակի շնորութիւնը աապառաժիւք և մեծամեծ վիճօք... կրով և աւազով մածուցեալ<sup>2)</sup>, անբաւ լայնութեամբ և բարձրութեամբ» (Ա., Ժ. 4.):

Նատ քաշքառկ և բանազրու չի չինիլ Մենուասին նոյնացնել զրուցախառն Մանաւազի հետ, որից ծագում էր Մանաւազեան նախարարութիւնը: Մենուասի անունը պահած է և Մանազկերտ քաղաքի վրայ Ջրանցքի երկանութեամբ գտնեցան Մենուասի բազմաթիւ արձանագրութիւնները<sup>3)</sup>:

Մենուասը բացի չինարարութիւնից նաև լաջող աշխարհակալ է: Նա ընդլայնեց Վանի տէրութեան սահմանները՝ տիրելով Արարատեան նա-

<sup>1)</sup> Եջմիածնի լուսարէն արձանագրութիւնը, Պօղոս առաքեալի և թեկուսի արտաքանդակներով, հրատարակւած մի քանի անգամ:

<sup>2)</sup> Ոչ կրուի ալ կիկուպեան շինուածք, ան է առանց շաղափի, ինչպէս վելաւում է դր. Բելքը: Խորենացին ոչ թէ ականատես է, ալ իլրու է գրում:

<sup>3)</sup> Ueber neue armenische Keilinschriften, von Waldemar Belck und C. F. Lehmann (30 apr. 1892) արտասան. Zeitschrift für Ethnologie (հր. 122-152).

հանգին (Երևան), Եփրատի ակունքներին (Արածանի), արևմտքում մինչև Մալաթիա, հիւտոսում մինչև Կարին, արևելքում մինչև Ռումիա լուծ, ինչպէս արդ վկացում են գտնւած արձանագրութիւնները:

Մենուասի որդին և լաջորդն է Արգիւս (ԻՍ) ԱՌԱՋԻՆԸ, Սրա իշխանութիւնը նախահայերի հզօրութեան գագաթնակէան է, Նրանք տարածում են իրենց տիրապետութիւնը մինչև Սևան, մինչև Սարիղամիշ—Կարս, մինչև Պանլիճա-Մարմաշէն, ինչպէս վկացում են այդ տեղերում գտնւած արձանագրութիւնները, տիրելով ուրեմն Երասխի ամբողջ վերին աւազանին<sup>1)</sup>: Արևելքում լայնացնում են նրանք իրենց սահմանները մինչև Ուրմիալի, արևելեան ափը: Այսպիսով պատմական Հայաստանի արտաքին կերպարանքը բնորոշող երեք մեծ լճերի (Վան, Սևան, Ուրմիա) ամբողջ աւազանները մտնում են նրանց անմիջական իշխանութեան տակ:

Վերջապէս Արգիշտը ջարդում է Ասորեստանի զօրքերին (Ժամանակակից Սարմանասար Ա-ի, 783—773)<sup>2)</sup>:

Արդիստից էնառ նախահայերի ուժը սկսում է խոնարհել:

Սրա որդին և լաջորդը ԱՄԴՊՈՒԻ (ԻՍ) ԵՐԿՐՈՒԴ (Ա) 743-ին լազմական է Յաղղատփաղասարից: Այս վերջինս 735-ին առնում և աւերում է Տոսպը, բայց Վանի ամրոցը մնում է անառիկ<sup>3)</sup>:

Սարգում Ա-ին լաջորդում է իւր որդին՝ համբաւաւոր ՌՈՒՍԱ (Ս) ԱՌԱՋԻՆԸ, ասորեստ. արձանագրութեանց Ուրսա՞ն, Սարգում Ա-ի մեծ ախոյեանը: Ռուսան երկար լաջող և անցաջող պատերազմներից էնառէ լուսահատ՝ անձնասպանութեամբ վերջ է դնում իւր արկածալից կեանքին:

Մինչև վերջին օրերս չունէինք ալս թագաւորից արձանագրութիւն նախահայերի լեզուով, բայց ացմու չնորհիւ ոռւս հետախոցների՝ Նիկոլսկու և իւսանովսկու լաջող ընդօրինակութեան ունինք սրա մեծ արձանադրութիւնը, փորագրւած Սևան լճի հարաւալին ժայռերի վրայ<sup>4)</sup>:

Ռուսա Ա-ին լաջորդում է իւր որդին ԱՐԳԻՍ (ԻՍ) ԵՐԿՐՈՒԴ, որ թագաւորում է 714-ին:

<sup>1)</sup> Ոչ մի արձանագրութիւն չէ գտնւել կուրի աւազանում: Հաւանական է, որ նախահայերը երբէք չանցան կուր և Երասխի աւազանների ջրբաժան կամատները:

<sup>2)</sup> Սրգիշ կամ Արգիստ անունը համեմատում են Ա. Ր Գ Ա Ս Մ Ո Վ Ի Մ ի անւանակոչութեան հետո թերես որևէ է կապ լինի Արձեշ քաղաքի (Վանի հիւտիսակին ավտում) և ալս թագաւորի անւան միջն: (առև և Խոր. աշխ. ոռւս թրդ. Պատկանեամի, եր. 46, ծնթ. 156):

<sup>3)</sup> Վան քաղաքը բեռագրերի մէջ կոչում է Բիան կամ Բիանեա, Տոսպը—Տուսպա. երկումն ել նախահայկական անուններ են:

<sup>4)</sup> Նիկոլսկու հրատ. Ա. ԽVIII (1893): Արձանագրութիւնը վաղուց լայսի էր, բայց անվերծանելի էր մնում լաւ ընդօրինակութեան պակասութեան պատճառում:

Սրան չաջորդում է ՌՈՒՍԱ. (Ս) II. Սրա ժամանակ առաջին անգամ երեսում են Կյլմմերացիք և ուրիշ հնդերոպական գաղթական ցեղեր, սպառնալով Առաջաւոր Ասիաի թագաւորութիւններին։ Սրա չաջորդն է ԵՐԻՄԵՆԱՍՍ, Երիմնասի որդին և չաջորդն է ՌՈՒՍԱ. (Ս) ԵՐՐՈՐԴԸ<sup>1)</sup>։

Ռուսա III-ի չաջորդը և որդին է ՍՍ.ՐԴՈՒՐ (ԻՍ) ԵՐՅՈՐԴԸ, ժամանակակից Ասուրբանաբալի (655—640). Սարդուր II-ը նախահակական արձանագրութիւններից մեզ ծանօթ վերջին թագաւորն է. նրա գահակալութեան առաջին տարին է 645 թւականը Քրիստոնից առաջ<sup>2)</sup>։

Նոր գիւտերը և հետախուզութիւնները անշուշտ աւելի կը ճշտեն և կ'ընդլացնեն մեր ունեցած տեղեկութիւնները։

Աւտչափը միայն առ ալժմո հաւաստի է, որ 7-դ դարի վերջում Բ. ա. հնդերոպական գաղթականների արշաւանքները տակն ու վրակ են անում ամբողջ Առաջաւոր Ասիան, մինչև նվիպատու սահմանները։

Աւտմեան՝ այս ինդրով զբազուզ բոլոր գիւտականների կարծիքն այն է, որ այս գաղթականների թւումն էին և Հայերը, և բոնեցին նախահայերի տեղը։

Պարսկական (բենուազիր) և լուսական աղբիւրները՝ Հայերի մասին իրենց տւած տեղեկութիւններով ոչ միայն չեն հերքում, այլ անուզզակի կերպով հստատում են այս հնդաղլութիւնը։

Աւալիսով վերջանում է Նախահայերի ըրջանը<sup>3)</sup>։

<sup>1)</sup> Այս թագաւորին, որի մի արձանագրութիւնը գտնվեց Արմաւիրում, Նիկոլսկին անւանում է Ռուսա երկրորդ, Մենք հետեւմ ենք այս կետում Բելքին և Լամանին, առև. Ein neuer Herrscher von Chal-dia: Նիկոլ. Հրատարակութիւնը Կլանոօբրազայ հածու և այլ գաղթականների մեջ։ Գառա-Տառ, Մօսկվա 1894, եր. 3 N-<sup>o</sup> XX.

<sup>2)</sup> Աղամեանի (Անանի ամիկն) արձանագրութեան մէջ լիշտում են երկու ուրիշ թագաւոր՝ Սարդուր իրիզութիւնի որդի և Սինալիրի որդի Սիերիի: Սրանց տեղը լաւ որոշւած չէ. կան զանազան ենթադրութիւններ, Կիլկուսկ. N-<sup>o</sup> XVI).

<sup>3)</sup> Առորեստ, արձանագրութեանց նախահայերին վերաբերեալ մասը գիտ ևս ամբողջութեամբ չէ համախմբւած, թէս եղել են փորձեր Շատ բրած կազ մասնագիտական թերթերում Նախահայ բենուազիրի՝ մասնաւորապէս Տաճկա-Հայաստանում գտնվածների բնադրեն ել վեռ մեծ մասամբ կարօտում են վերաստուգութեան Ռուսա-Հայաստանու մ գտնւածների վերաստուգութեան զորդը մեծ չաղողութեամբ կատարեց իմ ուսու բարեկամներից պէ. Նիկոլսկին (Մ. Ա.), Մոսկ. կայսեր. Հնագ, ընկ, ան դամներից, որի աշխատութիւնների մի մասը դեռ չէ հրատարակւած։

Նախահայերի կրօնքի, լեզւի, քաղաքակրթութեան, արեւստների վերաբերեալ մասը, որի վերաբերութեամբ բաւական նիւթ կազ ժողովւած, բաց ենք թողնում, այդ մեր այս լողւածի ծրագրից զուրու լինելով. Ակրծին տարիներ մի քանի չողւած նախահայերի մասին լուս տեսան

15. Դ Գլուխը (եր. 88—123) նւիրւած է Խորենացու աղքիւր Մարարասովն:

Հետևեալ և գլուխը (եր. 124—202) նւիրւած է Մարաբասի պատմութեան քննադատութեանը:

Քննական պատմութեան այս մասի զլիսաւոր թերութիւնն այն է որ ճշտի չէ որոշւած Մարաբասի ծաւալը: Շատ բան, ինչ Խորենացին պատմում է իւր կողմից, առնելով զրուցից կամ մեզ ծանօթ և անծանօթ աղքիւրներից, և կամ թերևս իրենից առեղծելով, ու ակաչն առանց Մարաբասին վերագրելու, Դարագաշեանից՝ ինչպէս և նրանից առաջ այդ խնդրով զբաղւող բանասէրներից՝ այդ ամենը վերադրւում է Մարաբասին և չետու մեծ խնամքով հերքւում: Արսպիսի վարմունքի անտեղութիւնը ակներեն է: Արդէն առիթ եմ ունեցել մի ուրիշ՝ թէն որոշ մասերով արդէն հնացած գրւածքում՝ ցուց տալ մանրամասն Գարագաշեանի (ինչպէս նաև Էմինի, Զարբանալի, Լանզլուալի, Գուտշմիտի և ուրիշների) այս կէտում ունեցած թերութիւնները և առաջին անգամ փորձ եմ արել ջոկել Խորենացու պատմութեան Ա. և Բ գրքերի Մարաբասից առնւած հատւածները և ցուց տալ այն բոլոր կէտերը, որոնք սխալմամբ կամ թիւրիմացութեամբ են վերագրւում Մարաբասին<sup>1)</sup>:

Աւելորդ համարելով այս խնդրում Գարագալի դէմ ունեցած՝ ինձ թւում է թէն իրաւացի առարկութիւններս նորից կրկնել, զնում եմ միան եղրակացութիւնս, պնդելով որ այն բոլորից, ինչ որ թիւրիմացութեամբ վերագրւում է Մարաբասին, հազիւ մի երրորդը (<sup>1/3</sup>) Մարաբասին է, ըստ իւր՝ Խորենացու՝ վկաչութեան:

Ալմօրեալ Հանդիսում» (1893 թ. եր. 23, 47, 84, 239, 1894 թ. եր. 69, 140, 1895 թ. եր. 81) տես նաև Aus den Ver. der Berl. Anthropol. gesell. Sitz. 15 October 1892. Mittheilung über weitere Ergebnisse ihrer (ֆելք և լեման) Studien an den neugefundenen armenischen Keilinschriften; Sitzung von 28 Oct. 1893 Ueber die Kelishin-Stelen; 10 Novem. 1894 Das Reich der Mannäer. լեմանի Die Kelishin-Stele, (Sonntagsbeilage n° 3 zur Vossischen Zeitung; 1895, 23 Jannar). Relation des Missions scientifiques de MM. H. Hyvernat et P. Müller-Simonis 1888—1889.—Du Caucase au Golfe Persique à travers l'Arménie, le Kurdistan et la Mésopotamie, par P. Müller-Simonis, suivie de notices sur la géographie et l'histoire ancienne de l'Arménie et les inscriptions cunéiformes du Bassin de Van par H. Hyvernat. Waschington D. C. 1892.

<sup>1)</sup> Տես «Խորենացու Պատմութեան Ուսումնաւիրութիւն» աշխատութեան Զ զլուխը «Մարաբասի ծաւալը» վերնագրով. Արարատ ամսագիր, 1891, մայիս—օգոստու:

16. Ե. գլխի շատ թիւրիմացութիւնների դէմ աւելորդ ենք համարում մի առ մի խօսել, որովհետև ազդ բոլորը ծագում է նախկին վերեն վիշտած՝ հիմնական թիւրիմացութիւնից, Հարկաւոր ենք համարում կանգ առնել միայն գլխաւոր կէտի վրայ:

Ունչը արդեօք Խորենացին մի որ և է Մարաբաս, անշուշտ անվամբական, գրւած մի քրիստոնեակ ասորու, կամ ասորական դպրոցից ելած հայի ձեռքով, քաղւածուք սուրբ զրքից և հայկական զրոցներից, որի գլխաւոր նպատակն էր հայերի իրենց ծագման մասին ունեցած զրոցախառն աւանդութիւնները բարեպաշտական նպատակով կապել ա. զրքի հետ:

Սերէսոր սկզբում մեզ հասած «Մծուրնացու» պատմութիւնը, որչափ և լինի աղճատ և թերստ, ազդ հարցին դրական պատասխան է տալիս, Գարագաշեան, ինչպէս նրանից առաջ և Գաթրճեանը՝ արհամարհանքով են միան. Նալում ազդ ուշադրութեան արժանի դրութեան վրայ: «Հայ կարկատանք մըն է 7-դ զարու» ասում է Գաթրճեան<sup>1)</sup>:—«Թէ տգէտ կամ խարերակ մարդիկ ժամանակաւ կը տոքէին աւապիսի սուտեր՝ զարմանալի չէ. ան է զարմանալի, զի առ մեօք իսկ ծանր խորհող մարդիկ կը թւին հաւատու ընծալել մտին դարուց տգէտ հեղինակաց անհամ պատմութիւններուն, որոց թերեւ հաւատարմութիւն անգամ ընծալել չէ առողջ մտաց» ասում է Գարագաշ «Մծուրնացու» վերաբերութեամբ (Եր. 185). Բայց անշուշտ մեր խօսքը «Մծուրնացու» կամ Խորենացու պատմածը սրդար իւղի տեղ ընդունելու մասին չէ: Այժմս ազլ ևս ոչ ոք կայ, որ հաւատակ թէ մի Մարաբաս է եղել, որ նինուէի դիւաններից հայոց պատմութիւն է համել: Արտաքին գլուխթեանց լոյսը ազլ ևս անհնարին է կացուցանում ազգպիսի առասպեկներին հաւատակ: Բայց պէտք է զգուշանալ ծարբակեղութեան միւս եղրից: Եռ եղանակներու մասնամեմատ հեշտ է, քան մանրակրկիտ և բարեխիղճ հետազոտութիւնը: Երբ նախնական պատմութեան ժամանակակից ազբիւրների նւազութեան կամ գլխովին պակասութեան պատճառով ստիպւած ենք զիմել Խորենացուն, Ե-դ զարի գրողին, կարսոր է որ արգարակորսվ քննադատութեամբ ջանանք ջոկել ճըշմարիտը կամ ճշմարտանմանը առասպեկից: Եւ երբ ընդարձակ գլուխներ նւիրում են ազդ Խորենացուն, ինչպէս իրաւամբ անում է Գարագաշեան, թերութիւն է անտես առնել «Մծուրնացուն», որ կամ Խորենացու բուն ազբիւրն է, կամ Խորենացու հետ միասին ծագում է ընդհանուր ազբիւրից, կամ՝ առ նւտղն՝ բանաքազութիւն է Խորենացուց:

Գուտշմիդը փոքր ինչ աւելի մօտեցաւ ծշմարտութեան, ենթաղբելով որ «Մծուրնացին» Խորենացու առաջին վորձն է, երբ նա հն արում էր

<sup>1)</sup> Հ. Մարք: Օ հաշալինոյ Իստորի Արմենի Անոնիմա (Վիզանտիան Վրեմեննիք Եր. 263—306) 1894թ.

մարաբասեան պատմութիւնը՝ Կարրիերը նոյն եղրակացութեան եկաւ<sup>1)</sup>։ Աւելի յաջող դատեց Պատկանեան, թէպէտ առանց սպասելի եղրակացութիւնը հանելու իւր մի քանի յաջող դիտողութիւններից։

—«Բայց ոչ երգեր միայն, առում է Գարագաշեան, այլ թւի թէ պատմութիւն ևս կար առ Խորենացով զնախնի ժամանակէն Հայոց, որպիսի էր այն՝ զորմէ ասէ Խորենացին, թէ սի բար բանից և անոն իմն յաղագս Հայկակ և նմանեացն կակազէ»։ Ճենց Գարագաշեանի այդ ակնարկած պատմութիւնը հասել է մեր ձեռքը, որ է «Մծուրնացինու Դեռ 1862-ին Սեբէսի ռուս թարգմանութեան մի ծանօթութեան մէջ դիտեց Պատկանեանը, որ Խորենացու առաջ բերւած խօսքերը ակնարկում են «Մծուրնացուն», որովհեան այս վերընս է միայն, որ Բագրատունիներին սերւած է դնում Հայկից։

Խնդիրը պէտք եղած պարզութեան դրին՝ Ֆէթթէր և մեր հասարակութեան լաւ ծանօթ յալսնի հայագէտ Նիկ. Մառ՝ իւր նոր դրւածքում Անանունի (=«Մծուրնացու») հայոց նախնական պատմութեան մասին<sup>2)</sup>։

Մառը իւր հետազոտութեամբ զալս է այս դլխառոր եղրակացութեան. հայ լեզուով մեզ հառած հնագուն չի շատ ակարանը Հայաստանի նախնական պատմութեան մաս սին՝ Անանունի դրւածքն է (Եր. 293)։

Այսուհետեւ գոնէ, ակներեն է, որ անհնարին է՝ հայ մատնազրութեան մէջ պահւած մեր սկզբնական պատմութեան ազբիւրները ուսումնասիրելին՝ անտես առնել «Մծուրնացուն» կամ լաւ ևս Անանունի պատմութեան մեզ հասած հատւածները։

1. Զ. Գլխում (Եր. 203—219) առաջ են բերւած Խորենացու պատմածները Արշակունիների ծագման և Հայաստանում հաստատւելու մասին։ Ինչպէս այս գլխում, նոյնպէս և ամբողջ գրքում Խորենացուց առաջ բերւած հատածները առնած են հնացած հրատարակութեանց համեմատ, առանց զանազան բանաբերներից առաջարկւած այնպիսի սրբագրութիւնների, որոնք այլ ևս անկարօս են ապացուցութեան։

Ալաղէու օրինակ՝ պէտք է կարգալ Խորենացու բնագրում փոխանակ

<sup>1)</sup> A. v. Gutschmid, Ueber die Glaubvürdigkeit der arm. Geschichte des Moses von Choren, 1876; A. Carrière, Moïse de Khoren et les généralogies patriarchales. Paris.

<sup>2)</sup> Տես Հայկական աշխատասիրութիւնք Հայագէտ պ. Ֆէթթէրի, Վիեննա, 1895. Եր. 31—45։

—Օ Նաչալնայի Историяն և ալն, արդէն վշւած։ Մառի ալս աշխատութեան մէջ առաջ է բերւած «Մծուրնացուն» վերաբերեալ մատնագրութիւնը։

Արգամողան'ի—Արդամողան (թերեւս նաև՝ Արդամոլան=Ադրամոլան=Ադրամել կամ Ադրամելիք, համեմատ. Գ. թագաւորութեանց ԺԹ. 37, Խոր. Ա. 22. Յովոէփոս Անտիկ. X. 1.) Քննակ. պատմ. եր. 168<sup>1)</sup>:

—Սմբատի փոխանակ պէտք է կարդալ Տրդատ (172), որով Հնջւռու է հակասութիւնը (այս մասին տես ընդարձ. «Խոր. Պատմ. Ուսումն. Ե. Հայկականք ԺԱ.»).

—Առաւատին'ի փոխանակ Առաւատին=Առաւատին (224) (շատ անդամ արդէն սրբագրուած՝ նախ ևնթաղրութեամբ և ապա ձեռ. ընտիր ընթերցւածքով):

—«Ադրւաս'ի փոխանակ Ամիրաս (166) տես Մատի Օ Նաչալյան Իստորիա և ազն. եր. 269 ծանօթ. 1. A. Carrière Nouvelles sources de Moïse de Khoren, և ազն.»

—Կամադրոսի փոխանակ Սկամադրոս=Սկամանդրոս (217, 269<sup>2)</sup>):

—«Ադրւանեցիմք զբովանդակն, իսկ զՀայաստանեացս նախարարութիւնս...» ասացւածի փոխանակ՝ «Ազգաբանեցիմք զբովանդակն իսկ զՀայաստանի ացս նախարարութիւնս...» (201). (Պատմ. Խորեն, Վենետիկ, 1881 Ա. 1):

—«Ոչ գերելով զհամ պատերազմին Արշակաւ=Ոչ դիտելով զհամբաւ պատերազմին Արշակաւ» (207, 237):

—«Անցի միան զտեղիսն նշանակելով, զհաւատին և զո՞ն ի բաց թողեալ» (239), պէտք է կարդալ աբովիսի կէտազրութեամբ. «անցի միան զտեղիսն նշանակելով զհաւատին, և զո՞ն ի բաց թողեալ» (Նորացը և ազն):

Եւ այլ աչսպիսի մանր սրբագրութիւններ, որոնք սական ճշտում են ընագիրը, աւելորդ թիւրիմացութեանց առաջն առնում և Խորենացու վրայ բարդւած մի քանի անսեղի մեղագրութիւնները հերքում:

18. Ալսաեղ պէտք է զիտել Գարազաշեանի և ուրիշ թիւրիմացութիւնները. Զունենալով հանդերձ սպարզ զալցվար Մեծամօրի, Երասխի, միւս Մեծամօրի, Մեծագետի (գետն Մեծ) մասին (եր. 208), դեռ Խորե-

<sup>1)</sup> —«Արդումուղան» Քրոնկ. Եւսեբիոսի, հրատ. Աւեգեր. Վենետիկ. 1818, եր. 21, առզ ներքեցից<sup>9)</sup> Հրատ. Շէօնէ I, 27, ա. 28.—հրատ. Մայքի, Միլան, 1818, եր. 19, ծանօթ. 4, ուր ցոյց է զրուած ձեռագրի լուսանցքում՝ in margine Ard amuzane. համեմատ. նաև Սամ. Անեցի Էջմիածին 1893, եր. 46—«իսկ Ադրւանդանէն Արծրունիք և Գնունիք»: Տես «De l'urgence d'une édition critique des textes arméniens, Nota di Néondre de Byzance Norayr. Roma. 1792. տես նաև Zur Erklärung der Armenischen Geschichte des Moses von Choren, v. Gr. Chalathiantz. (Wien, Zeit f. Kund. d. Morg. 1893, I).

<sup>2)</sup> Տես Մատի իշեալ չողւածը (Օ Նաչալյան և ազն) երես 272, ծանօթութիւն 1:

նացուն է մեղադրում լարգելի հեղինակը. «Ուրիշ կէտ մը արժանի դիտութեան, աճ է ժամանակի կանխումը (anachronisme), որով Խորենացին զՆահապիվան (?)», վերջին Արշակոնեաց բանակատեղին, կը դնէ (?) առ Նաղարչակաւ, քանզի հոն կուտաչ նմա կեղրոնացնել զջօրս իւր. Արդարի Խորենացին առ ի չտալու կամկած՝ կը լոէ Շահապիվան անունը, չալտնի է (!) սակացն, թէ բանքն ամոտ չակունս Մօրին մեծի լափն Երասխալ»՝ կ'ակնարկեն զՆահապիվան (?))»:

Այս արդէն չափազանց կասկածութիւն է, նոյն ենթադրեալ և գուռով Խորենացու շնչքին փաթաթւած Շահապիւանը նորից բուսնում է մի երես չետու (239, 240).

Խորենացու այս լաւ չհասկացւած հատւածի բացադրութիւնը տես Հայկականք Դ. <sup>1)</sup> Ակսքանը միայն ասենք, որ ալս հատւածում Շահապիվանի մասին ոչ ակնարկութիւն կատ և ոչ էլ կարող է լինել. Ազ լինդիր է թէ վերջին Արշակունիների ժամանակ Շահապիւանն էր նրանց սովորական բանակատեղին.

19. Նաև հազիւ թէ կարելի լինի համաձայնել պ. Գարագաշեանի հետ, որ իբր Խորենացին մարդպետութեան իշխանի Հայր տիտղոսը ուղիղ չէ ըմբռնում և համարում է այդ չառուկ անուն (մարդու անունն և ոչ պաշտօնի): Խորենացու բուն խօսքերն են. «Նա և ներքինիս հրամակէ ի նոյն ազգէ լողել և նահապետ նոցա (կարգէ) որ Հայր իշխանն՝ մասին վԱտրպատականէ մինչև ցնուաշ և Նախնաւան» (Բ. 7). Այս ասացւածից քնաւ չէ հետեւում թէ Խորենացին հայրը համարում է մարդու անուն, ինքը պ. Գարագաշն է որ այդ սխալ իմաստն է տալիս ալս հատւածին, թարգմանելով «և Նահապետ կարգէ նոցա զՀայր ոմն», իշխան մասին, որ վԱտրպատականէ մինչև Նախնաւան» (209). Վերջապէս Խորենացին, նոյն խօկ Գարագաշեանի խոստովանութեամբ, ծանօթ է Քուզանդի պատմութեանը, ուր շատ բացորոշ ցուց է տրւած մարդպետ իշխանի հայր կոչման նշանակութիւնը «անւանեալ կոչեր ըստ գործուն» Հայր թագաւորին» (245), ուստի և Խորենացին այս չէր կարող անդիտանալ:

20. Է Գլուխը (220—265) Արշակունիների պատմութեան (ըստ Խորենացու) քննաղատութիւնն է:

Պարթևներին Խորենացին սերւած և համարում Արքահամից, թէ այս պատմական չէ և չէ էլ կարող լինել, այդ մասին խօսելն անդամ աւելորդ է, Բայց ինքը Խորենացին չէ այդ առասպելի հնարողը, ինչպէս կարծում է Գարագաշեան (222—223), ազ ունի, ինչպէս գրեթէ միշտ՝ իւրաքանչիւր պատմական կամ առասպելական աեղեկութեան համար՝

<sup>1)</sup> «Համկ սկանքո վերնագրի տակ մի շարք չօդւածներ Արարատում (1894). կաէ և արտասապ, Վաղարշապատ 1894:

իւր աղբիւրները։ Ֆրանսիացի լաւոնի հակագէտ պ. Կարրիերը առանձին չօդւածով ջանաց ասլացուցանել, որ Խորենացին է պարթեների արրահամեան ծաղման գտիչը կամ հնարողը, և որոշ հետեանքներ կամեցաւ հանել իւր ալդ վարկածից<sup>1)</sup>։ Ինձ ամելի լաջող են թւում Ն. Մառի առարկութիւնները Կարրիերի ալդ վարկածի զէմ։ Մեծ սրատեսութեամբ, ինձ թւում է թէ՛ Մառը դիտեց և անսրկամիլի զարձրեց ալն՝ գլեթէ իրողութիւնը, որ «Մծուրնացին» (=Անտոնը) Խորենացուց առաջ գիտէր Պարթեների Արքահամբից սերւելու զրոցը որոշ շեղումներով<sup>2)</sup>։ Այս բանը՝ ալն է ալդ զրոցի Խորենացուց առաջ գոյութիւն ունենալը, ապացուցում է և Ցածախապատումի վկանութեամբ, որին հազիւ ուրեմն ուշագրութիւն դարձեց<sup>3)</sup>։ Վերջապէս ալս կէտում Խորենացին ունի և ուրիշ աղբիւր, որի մասին ալսուեղ երկարելը անկարուար է։ Մենք առիթ կ'ունենանք Խորենացու ալդ ՆՈՐ—ԱՂԲԻՒՐԻ վրայ խօսելու, որով լոյս ունինք, նոր և առաս լոյս է սփուրելու շատ կնճուած խնդիրների վրա։

21. Խորենացու Պարթե թագաւորների ցանկը ուղիղ գնահատելու համար անհրաժեշտ է անտես չառնել Ք. Պատկաննեանի առաջարկած լաջող սրբագրութիւնը, որով փոխանակ 14-ի կունենանք 15 պարթե թագաւոր, 475 կամ 476 տարի թագաւորութեամբ։ Այսպէս ուզզագրւած՝ Խորենացու պարթե թագաւորների ցանկը ստանում է պատմական հաստատուն հիմք, հակառակ Գարագաշեանի կարծեաց (224), թէև թագաւորների թիւը կիսով չափ պակաս է դժուած զրամների ցուց աւած թագաւորների թիւց Բայց արդէն լաւոնի է, որ մի քանի, մեծ մասամբ երկու, թագաւորների տարիները հաշւած են Խորենացու ցանկի մէջ մի թագաւորի վրայ Անկասկածելի է մեզ համար, որ այս ցանկն էլ իւր ամբողջութեամբ իրենը՝ Խորենը՝ Խորենացունը՝ չէ, այլ ծագում է ուրիշ՝ հնագոյն՝ աղբիւրից։ Այդ խնդրին մենք առիթ կ'ունենանք երբ և իցէ վերադառնալ<sup>4)</sup>։ Իսկ Արշակունիների ծագման մասին երեսի պատեհութիւն կ'ունե-

<sup>1)</sup> Nouvelles Sources de Moïse հալն, տես և հալ թարգմ. «Նորագուն աղբերք Մով. Խորեն.» (Ազգակն Մատ. Բ) Վեննա, 1893 թ.

<sup>2)</sup> Օ հազարայի պատմութեան հալն:

<sup>3)</sup> «Համական Աշխատասիրութիւնք հաւագէտ պ. Խեթթէրի, Վիեննա 1895, եր. 72, ծանոթութեան Հ. Յ. ակ. Տաշեանի Ահա Ցածախապատումի ալդ հատւածը. «Չի ի շակս ոչ ինչ մեծադուն և ի Պարմ (Ա) քան զԱրշակունեաց տոհմ. որ լԱրքահամէ սերեցան առա, նաև լամենանին աղզս թագաւորք երկրի ըստ անսուս բանին տեսան ամենեցուն»։

<sup>4)</sup> Տես Սէն-Մարտէնի՝ Fragments d'une histoire des Arsacides: — Է. Պատե. Մատ. ձայ Արմ. Ըլօ. ՎԱ. Արքունեցու (Ասաղիկ) ընտիր հրատարակութեան (Ստ. Մալիսասեանի, 1885) 39-դ ծանօթութիւնը, եր. 312—321. — Մառի շատ անգամ վիշած հրատ. Օ հազարայի նալն.

նամոք մի քանի խօսք ասելու քնն. Պատմութեան Բ և Գ հատորները թերթելիս:

22. Վերջին, Ը, գլուխը (266—278) նվիրած է նախնական հակերի լեզվն և կրօնին: Աւատեղ կարևոր է նոցն անհրաժեշտ սահմանագիծը անց կացնել նախահայերի կրօնի, լեզվի և հնդերոպական հայերի լեզվի և կրօնի միջև: Հաւանականաբար հայերը նախահայերից ինչ ինչ փոխառութիւններ արած են և ժառանգած աւանդութիւններ (Արամ, Սինուաս—Մանաւազ ևազն<sup>1</sup>), սակայն հաստատ է, գոնէ գիտութեան արդի վիճակում, որ հայ լեզուն և կրօնը ոչ մի կազ և նմանութիւն չունին նախահայերի լեզվի և կրօնի հետ:

Նախահայերի Խալդի գլխաւոր Աստւածութեան (Դարագաշ գրում է «Հալտի») և ը ա զ դ բառի մերձեցման հնարաւորութիւնը անտեղի է (Եր. 266) և այն մի շարք լեզւաբանական՝ ներւի ամել՝ կուրիոզների կարգիցն է, որոնցից զգբաղաբար ազատ չէ Գարագաշեանի գիրքը: Աւապիսի անտեղիլի մերձեցումներ են, օրինակ, մշակ և Սուշ (68), Հապկ-Աւուք (159), Հայ և Ասեմական բառն հայո (հայվան ?) (159), Արամինակայ Սոսիք—platianum armeniacum (180, 272), \*Բագ և Վահան, Վահագն կամ Վահրամ (269) ևազն, ևազն<sup>2</sup>)

Հազիւ թէ կարելի լինի համաձայնել Գարագաշեանի այն կարծեաց հետ, որ իբր կթուի մանաւանդ՝ թէ հին Հակը ունէին զանդիկ կամ զրադաշտական կրօնից բուն վարդապետութիւնը» (270): Աւելի ուզիդ է թւում մեզ փոքր ինչ ներքնում ասածը. «բայց զանդիկ կամ զրադաշտական կրօնից բուն վարդապետութիւնն առին Հակը Մարաց և Պարսից ժամանակ», Ուղիղ է նաև այն զիտողութիւնը, թէ արեելեան Հայաստանում աւելի ազգած էր զանդիկ կրօնը, մինչդեռ արևմտեան Հայաստանում՝ բուն կռապաշտութիւնը կամ զիցագաշտութիւնը (Աշտիշատ, Երիզա ևազն):

<sup>1)</sup> Այսպիսի փոխառութիւն պիտի համարել Արա Գեղեցկի գլաց, եթէ միայն հաստատվի Աէսի մերձեցումը Արավի և նախահայերի չը ի աստւածութեան միջև: (Ենիկու. N.<sup>o</sup> V, ծանօթ. 3. Մհերի Դուռն, Հանդիք ամսօրեսու 1893, եր. 239): Արավի և Պղասոնի «Հասարակապետութեան» մէջ փշւած Արմենիաի որդի էր' ի նորինացումը պատկանում է կյանին (Վէտք հնուն Հապատառնի):

<sup>2)</sup> Աւապիսի կուրիոզների մի ամբողջ բառարան հրատարակւեց Կ. Պոլսում 1894 (Ատուգարանական բառարան հայ լիգուի, Յովիք քնն. Հիմքեարապէլքնուեանի) մեր այս քնն. Հայոց պատմութեան հեղինակի լառաջարանով: Ահա թէ որտեղ նոցն՝ և թերևն աւելի միծ՝ իրաւամբ կարելի է զործ դնել քնն. պատմութեան մէջ Զամշեանի, Ինձիձեանի, Աւգերի մասին առածը՝ (276) veraltete Gelehrsamkeit — հնացեալ հմտութիւն, հնացած զիտուականութիւն:

Այնուամենականիւ մենք հակւած ենք կարծելու որ նախնի հագերը ունէին միւս հնդերոպացի ցեղերի նման (յնչափէս օրին. գերմանական ցեղերը) իրենց հեթանոսական կրօնը, տարբեր գրադաշտականից:

Յամենական դէսպ' հակերի նախնական կրօնին նւիրւած գլուխը շատ հեռու է լրիւ լինելուց: Չնակելով մեզ հասած տեղեկութեանց աղքատութեանը՝ այսուամենականիւ աւզ մասին կարելի է անհամեմատ աւելի հարուստ նիւթ համախմբել և աւելի ամբողջ ներկալացնել հաչ հեթանոսական կրօնի անցեալը:

23. Այստեղ վերջացնելով մեր դիտողութիւնները, զանց ենք առնում աւելի մանրամասնութեանց մէջ մտնել<sup>1)</sup> և բաւականանում ենք միան այս ընդհանուր եղրակացութեամբ, որ Քննական Հայոց պատմութեան Ա. մասը՝ անփոփոխ արտատպութիւն լինելով 1881 թւի հրատարակութեան՝ շատ կէտծրում, այն էլ տեղ տեղ կարևորագոն կէտերում, արդէն հնացած աշխատութիւն է, հնացած տեղեկութիւններով: Ազալիսի հնացած տեղեկութեանց վրայ հիմնւած եղրակացութիւնները բնական է որ անձտութիւններ պիտի ունենան:

Մինչև ալժմս մեր արած դիտողութիւնների մի մասը վերաբերում է աջսպէս ասած՝ մասնաւոր, առանձնացած կէտերի, որոնց այս կամ այն տեսակ լուսաբանութիւնը չէ փոխում հեղինակի ընդհանուր եղրակացութիւնները, Բայց կան մեր դիտողութիւնների մէջ և անպիսիներ, որոնք վերաբերում են զլիսաւոր կամ խոշոր իմպերիների, որոնց այս կամ այն լուծմամբ փոխաւում են, երբեմն նաև հիմնովին, ընդհանուր եղրակացութիւնները: Օրինակ՝ բոլորովին ուրիշ կերպարանք է առնում հաչերի:

1) Շատ խնդրական են, օրինակ Գուգարքի և Վրաստանի, Աղւանքի և Գարգարացիների անւանակոչութեան և սահմանների մասին առաջները (151, 152, 248): Վիր կամ իբեր և Աղւանք անունները հազիւթէ փոխաւութիւնները լինին հոռովմէացիներից:

Իրիրանի անունը կարգացում է Արգիստիսի արձանագրութեան մէջ (Ա-<sup>9</sup> XXI Նիկոլ. Սարիզամիշի քարը), որ մենք նոցնացնում ենք իրեր կամ վիր անւան հետ Ալբանիա բաւը մեկնել լատիներէնով, ինչպէս կարծում էր Բէրը, հապիւթէ ընդունելի է տես Պատկանեանի կարծիքը Խոր, աշխարհագր. ուուս թրգ. եր. 40, ծնթ. 147. Վրացիների աւանդութիւններից վշասակւածները (եր. 158) անչուշա բղիսում են Արագ Պատմութիւնից» (Ձուանշերի, Հին հապ. թարգմանութիւն Փրանս, հրատ. Բրոսսէի, հաչ բնագրի հրատ. Վէնետ. 1884) որին ծանոթ չէ երևում հեղինակը: Վաղարի և Խորենացու մասին ասւածը («Փարապեցին գիտէ զլորենացին եր. 202) հոգնպէս շատ երկրամիելէ: Ազալիսի մատենագրական իմնիրներին վերադառնալու առիթ կ'ունենանք Քնն. պատմութեան միւս հատորները թերթելիս:

նախնական (և նախահաղիրի) պատմութիւնը աղջմեան սեպագրագիտութեան լուսաբանութեամբ։ Նույնպէս և Խորենացու, մասնաւորապէս նրա աղբիւր Մարաբասի, նորազոն ուսումնասիրութիւնները, թէե բոլորովին հաստատում են ազդ աղբիւրի անվաներականութիւնը, սական անհնարին են կացուցանում և Դարագաշեանի եղբակացութիւնը, որ իբր թէ «Մարիբասեան պատմութիւնն ոչ զրոյց է և ոչ առասպես ալլ չոչն մատենագիրներու պատմութիւնը զԱսորեստանեաց և զՊարսից» (197<sup>1)</sup>)։

Մեր կարծիքով՝ Մարաբասեան պատմութիւնը՝ իւր իոկական ժաւալով՝ հայկական հին վէպից ու աւանդութիւններից առնւած զրոյցներ են, դիւցաբանական (Հակի, Արա, Արալէղ), երբեմն նաև պատմական-դական հետքերով (Արամ), խառն ասորա-քրիստոնէական լաւելածներով և նպատակաւորութեամբ (tendence)։ անչուշտ շատ անգամ առասպելախառն, բայց միշտ իրենց մեծ չարգը ունեցող իրբն նախնական վէպի և աւանդութեանց մնացորդները Խորենացին, ով որ է, իւր ժամանակի լունական կրթութեամբ և զարգացողութեամբ, զանազան փոխառութիւններով Եւսեբիոսից և ուրիշ՝ զլխաւորաբար վկաչարանական, սրբադրական և նման քրիստոնէական աղբիւրներից—մեծ մտսամբ հաչերէն—քաղած տեղեկութիւններով որոշ կարգի և ձեփ վերածելով այդ հին ու նոր վէպերից հիւսւած զանգւածը, ջանացել է տալ նրան իւրովսանն պատմութեան կերպարանք, Քննաղատութեան գործն է ճշտել, ջոկել և ընտրել։

24. Ի վերջու մի երկու խօսք Քննակ. Հաջոց Պատմութեան լեզվի և նիթողի մասին։

Մեթոդի մասին արդէն առիթ ունենանք մեր կարծիքն չափանիլու (տես յօդ, 13): Գրւածքի համաշախութեան փոքր ինչ վնասում են Խորենացուն նւիրած շատ ընդարձակ գլուխները, որոնք աւելի մենադրական բնաւորութիւն ունին։ Թէե այս էլ կաէ՝ որ ընթերցողների մեծ հասարակութեան համար՝ այն էլ 15 տարի առաջ՝ անհրաժեշտ էր այնպիսի մի մեծ հեղինակութիւն, որպիսին Խորենացին էր, որի վրայ է հիմնել մինչև այժմս ամբողջ հայ պատմականութիւնը, մի անգամ առ միշտ քննա-

<sup>1)</sup> Այս ևղբակացութեամբ ստիպւած ենք ուրեմն ընդունել, որ՝ օրինակ՝ Տիգրան Ա.-ի վշատակութիւնը Խորենացին առած է Քոենովոնից, որ Տիգրանի և Վիւրոսի մասին՝ իրբն ժամանակակիցների վրայ՝ խօսող չոչն գրողն է, —ուրեմն և ծանօթ է անմիջապէս Քոենովոնին —մի վարկած, որի համար ապացուց գտնուլը կարծեմ թէ անհնարին է։ Այսպիսի անհնարաւորութեանց ենք հանդիպում և ուրիշ շատ կէտերում ընդունելով Դարագաշեանի եղբակացութիւնը։

դատութեան ենթարկել, մենագրական աշխատութիւններից ժողովելով այդ մասին առաջնորդը, Նոր տպագրութեան ժամանակ կարծեմ այլ ևս առևլորդ էր աղպիսի ընդարձակ զլուխներ նորին՝ մի անպիսի ընդհան բան ու այն ող աշխատութեան մէջ, որպիսին է Գարագաշեանի երկը՝ աղպիսի մասնագիտական խնդիրներին։ Մի աղպիսի ընդհանրացնող բնաւորութիւն ունեցող երկասիրութիւն անշուշտ պիտք է հիմնի մենագրական-մասնագիտական հաստատութիւնների վրայ, չի չելով աղքարիւն երը, բայց ինքը մենագրութիւններ պիտք չէ բովանդակէ, աւելի ևս ընդարձակւելով-ճապաղելով ի վեաս ամբողջի համաշափութեան։

Գանք լեզին Յարդելի Գարագաշեանը կ'ասէր անշուշտ «եկեսցուք», իբրև թէ «ալանք» հապերէն չլինէր Ազու մի փոքրիկ նկատողութիւնը արդէն ընդուշում է հնդինակի գրելու եղանակը։

Խօսելով հիացմամբ և ոգեսրութեամբ հայ լեզվի և մեր հին մատենագրութեան վրա՝ Գարագաշեան վերջացնում է իւր առաջին հատորը հետևեալ նշանակալից խօսքերով. «Ոցիւ, բախտը, որ վետ կորուսանելով մեր այն լեզուն՝ տւառ մեզ այն մատենագրութիւնէն առատ մնացորդներ՝ տայր մեզ բարգել ըստ արժանուոն այն լեզուն, որով աղղեցութեամբ միան հնար է որ և իցէ բարտոքումն չարդի լեզվի մերում։»

Հայ լեզուն մեր ամենամեծ ժառանգութիւնն է։ Նա աւելի հին է՝ ինչպէս տեսանք՝ քան մեր հայրենիքը և ազգային կեանքի համար անհամեմատ աւելի մեծ նշանակութիւն ունիր և ունենալու է քան կրօնը կամ գաւանութիւնը։ Միէ բաւակնութիւն ունինք իբրև ազգ ապրելու և լաւաւորաւած ապկերի համանքում մեր որոշ տեղը և նշանակութիւնը պահ. պանելու, այդ ամենը համարաւոր է միմիան լեզվի պահպանութեամբ և կանոնաւոր մշակութեամբ։ Ազ ևս ոչ ոք, ոչ իսկ ջերմ գրաբարեանը, չէ հաւատում չին լեզվի վերականգման, այն մտքով ինչ մտքով այդ փորձում էին մեր վարժապետները։ Մեզ կրթեցին և վարժեցրին գրաբարին՝ սովորեցնելով խօսել և զրել այն սպառութեամբ, որ մի օր հնարաւոր դառնաւէ գրաբարը Նոր գրականութեան և նոյն իսկ զործածական կենդանի լեզու զարձնել։ Ազդ փորձերի ելքը այլ ևս բացորոշ է և երկբարութեան տեղիք չկաք։ Կարծեմ մենք վերջին սերունդն էինք, որ ենթարկւեցանք դրաբարեանների այդ փորձերին։

Լուծը թոթափած է։ Ազ ևս գրաբարը չեն սովորում նրան կենդանի լեզու զարձնելու համար։ Բարեբաղգաբար օրից օր աւելի լաւ են ըմբռ. նում գրաբարի գիտութեան անհրաժեշտութիւնը նոր լեզւին լաւ տիրելու համար։ Գրաբարը Նոր լեզվի օժանդակ միջոցներից մէկն է և պիտի ծառակէ նորին, ահա նորերիս գաւանանքը<sup>1)</sup>, Բայց մեզնից հները՝ նոյն

<sup>1)</sup> Նոր ասելով՝ խօսքս այն նորերի մասին է, որոնք օր և է լեզու են սովորել՝ գրաբար կամ աշխարհաբար, և ոչ այն ու որ երի մասին,

գրաբարեան ուղղութեամբ կրթւած, չկարողացան զպրոցական ալդ կապանքները խզել. Փննակ. Հ. Պատմութեան համակրելի հեղինակը ալդ հազւադիւտներիցն է.

Հետաքրքրական է տեսնել այն տարօրինակ կապակցութիւնը, այն հազւադէալ զուգադիպութիւնը միենոն անձնաւրութեան մէջ, Մի կողմից՝ կատարեալ լծաթափութիւն, բոլոր նախապաշարմունքները, բոլոր հաւատալիքները քամուն տւած, ամբողջ զլխով և սրտով էարելով զուտ գիտական ճշմարտութեանը, միւս կողմից՝ ամբողջ հին տարազը, գրաբարի նախդիրներով և խնդրառութիւններով, ժապաւէններով և ծոպելով:

Նոր լեզւի զարգացման ճանապարհը անշուշտ ուրիշ ուղղութեամբ է. վերից վայր և ոչ վայրից վեր, սակայն ոչ վայր ի վերոց. Գրաբարը մեզ տւել է և տալու է ամբողջ ատազծը, իւր ամբողջ բառարանը, որոշ սղումներով, որոշ կրծատումներով. Ամբողջ ասացւածներ, ինչպէս locution, փոխենք առնում կատարեալ իրաւամբ մշակւած և բիւրեղացած գրաբարից, ինչպէս նոր եւրոպական լեզուները՝ լատիններէնից. բայց զրանից այն կողմն անցնելն արդէն «ի չարէն» է:

Հին ձեերն ու նախդիրները շատունց թոշնած աշնան տերեներ են, կորցրած մեզ համար իրենց գալարութիւնը<sup>1)</sup>. Զուր ջանք է փորձել նորից կենդանութիւն տալ վաղուց մեռածին, անօգուտ վաստակ է ալդ աւելորդութիւններով ծանրաբեռնել մեր մանուկ կալուառ լեզուն:

Անշուշտ դեռ շատ բան է պակասում նոր լեզւի կատարելութեանը, բայց պակասը լրացնելու անսպառ պաշար ունինք հին գրադարանում—գրաբարում, կենդանի բարբառներում, լեզւի անընդհատ ստեղծագործութեան ուժի և ընդունակութեան մէջ, որով կարելի է լիովին բաւարարութիւն տալ արագընթաց քաղաքակրթութեան լարուցած բոլոր նոր պահանջներին, բոլոր նոր գաղափարներին:

Պարզութիւնն և ճշգութիւնն է լինելու այն իդէալը, որին պիտի ձգտի նոր լեզուն, և ոչ պաճուճանքն ու հնացած արդ ու զարդը. Մենք չենք սպահանջում անպատման խուսափել գրաբարից. Մանաւանդ գիտական գրւածքում, ուր շատ անգամ ոչ այնքան՝ խոշոր գծերով զլխաւոր մտքերը, այլ ողորկ ճշտաբանութեամբ մտքերի նրբութիւններն են շեշտաւու, անհնարին է ամբոխի խեղճ ու կրակ գուհեկաբանութեամբ շատանալ. բայց՝ միւս կողմից՝ անհրաժեշտ է լաւ ըմբռնել նոր լեզւի ոգին,

որոնք ան լեզու են, և կարնորութիւն էլ չեն զգում քիչ թէ շատ կանոնաւոր կերպով խօսելու կամ գրելու. Ազգափխների համար բնութիւնը հոգացել է՝ ստեղծելով ան խօս ան ասուն երի կարգը:

<sup>1)</sup> Ոչ միայն արևելեան, այլ նաև արևմտեան գրական բարբառի համար:

պարզասիրութիւնը և զարգացման ընթացքը, և զուր ջանքեր չանել  
սարն ի վեր հռացնելու ջրերը. Ամեն մի ազդիսի փորձ ժամանակի կո-  
րուստ է և ուժերի ջլատում:

Յարգելի Դարագաշեանը՝ իւր թէս ճիշտ և բաւական հարուստ, բաց  
գրաբարագէտներին միայն լիովին մատչելի և անպալման հնաձն լեզով՝  
և կը մնայ միշտ՝ լեզվի կողմից՝ առանց հետևողների, առանց յաջորդների.

# ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴՐԻ ՆՈՐԱԳՈՅՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

(Հինգերորդ լոդւած)

ԲԱՆՏԵՐԸ ԵՒ ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐԸ

Բանտարկութիւնները—իբր միջոց հակերին ջարդ տալու։—Բ. Դրան մերժումը ռեփորտմների ծրագիրը ընդունելու։—Բանտերի վերաբերեալ կէտր։—Ներման հրամանը 13-ն չուլիսի։ Բանտարկումները 1890 թւականից սկսած։—Դում-Գաֆուի դէպքի համար բանտարկւածներ։—Կեսարիակի մեծ դէպքը և ձեռքակալւածները, սոցա կրած տանջանքները, զատավարութիւնը և զատապարտածները։—Տանջանքներ Բաղէշի բանտում։ Բաղէշում բանտարկւածների համագումարը։ Միհրան Դամատեան։ Համբարձում Պոլաճեան-Մուրադ։— Բանտարկւածները Վանի բանտում։ Բողազքեսանի կուի համար բանտարկութիւններ։— Բանտարկւածներ Երզնկալի բանտում։ Արմըտանցիք։ Հանի Գալուստ Ալքան-օղլի և ընկերներ Դոքտ. Փաշանեան։— Բանտարկւածներ Էրզէրումի բանտերում։ Նարմանցիք, Օքոնեան։ Արարօ։— Բանտարկւածները Ալաշկերտի գաւառից։ Ազ բանտարկութեան դէպքեր։ Բանտարկւածներ Շապին-Գարահիսապում։— Սեբաստիակի բանտարկեալները։— Բանտարկւածներ հոգեորականներից։— Ներսէս վարդ։ Խարախանեան։— Սիմէօն վարդ։ Յովհաննիսեան։— Նիկոլաս Եսլիսկոպոս։— Բանտարկւած հոգեորականների մի խումբ էրզերումի նահանգում։— Բանտերից արձակւած հոգեորականներ։— Ցուցակ հայ աքսորականների Աքիալում։

Plunder, murder, rap and torture.

Gladston.

Կողոպուտ, սպանութիւն, առեւանգութիւն եւ  
տանջանք: Գլազոստոն:

Այս անգամ մեր խօսքը տան ջանքի մասին է: Վերը գրած  
քնարանի չորս խօսքերոցն է, որ Մեծ ծերունի Գլազոստոնը բնորո-  
շեց հայերի դրութիւնը Տաճկաստանում, այս օրերս, ներկայ 25-ն  
յուլիսի արտասահմած իւր մեծ ճառում, Զեստէրի միտինգում,  
մի օր անց այն օրից, երբ Դէյվի Նիւտում տպւեց սուլթանի կա-  
ռավարութեան տւած մերժողական պատասխանը երեք մեծ պետու-  
թիւնների առաջարկած ուժորմների այն ծրագրին, որ մենք տպե-  
ցինք ամսագրիս անցեալ ամսւաց համարի մէջ: Այդ պատասխանի մէջ,  
ուր ամեն պահանջ մերժում է<sup>1)</sup> բ. Դուռը կարծիք է յայտնում  
թէ նաև բանտարկին վարչութեան ներկայ սիստեմը կարող է գոհա-  
ցնել այն բոլոր սլահանջներին, որ անում է օրէնքը և արդարութիւնը!

Պէտք է տեսնել սակացն, թէ այդ ինչ օրէնքի և արդարու-  
թեան մասին է խօսում Թիւրքիայի կառավարութիւնը:

«Մուրճ»-ի անցեալ 6-րդ համարում մենք արդէն շօշափեցինք  
այն կէտը, որ վերաբերում է տաճկական բանտերին և հայ բան-  
տարկեալներին: Հայկական խնդրի նորագոյն զարգացումը սերտ  
կալ ունի տաճկական բանտերում հեծծող հայ քաղաքական բան-  
տարկեալների խնդրի հետ. տաճկական բանա ասած՝ մանաւանդ  
Տաճկա-Հայաստանում՝ դժոխային գաղափար է. իսկ բանտարկեալ-  
ներ ասելով—դոքա ոչ թէ մի խումբ քաղաքական գործիչներ են,  
այլ հազարաւոր անձեր են, որոնց թիւը ոչ ոք դեռ ևս որոշած  
չէ և հազիւ թէ մէկը ձեռնարկած լինի բոլոր բանտարկեալների  
համագումարը դուրս բերելու: Մենք վերապահեցինք «Մուրճ»-ի այս  
համարին վերադառնալ այդ խնդրին և, հայկական խնդրի ուսում-  
նասիրութեան այդ պակասը լրացնելու համար՝ գէթ սկզբնական  
փորձն անել: Որովհետեւ հայ ազգը Տաճկա-Հայաստանում բնաջինց  
անելու քաղաքականութեան գորաւոր գործողութիւններից մէկը  
սկսեցինք ճանաչել բանտարգելութեան մէջ, և ոչ թէ սոսկ արդա-

1) Բացի միակ մի կէտից, ուր Բ. Դուռը համաձայնւում է թէ ժանդար-  
մերիալ՝ համար հա կարող է օգտւել (բայց միայն օգտւել!) քրիստոնեանի րից:

րադասութեան մի ակտ, հասկացւի այդ արդարադատութիւնը նոյն իսկ տաճկական մաքով։ Բանտարկւածների թւի ահազին մեծութիւնը աչքի առաջ առնելով, մարդ ակամայ պէտք է կապի այդ երեսիթը հայ ազգը բնաջինջ անելու քաղաքականութեան հետ, որ և, ինչպէս արդէն գիտենք, Թիւրքիայի զլխաւոր ջանքն է եղած մանաւանդ այս վերջին հինգ տարիներում։ Բանտարկութիւնը պիտի գար լրացնելու այն, ինչին պիտի ծառացէին մի ազգի հոգին հանելու միւս միջոցները՝ ոչժից վեր հարկերը, դատաստանական նախադիտուած անարդարութիւնը, վարչական կողմնապահութիւնը, ոստիկանական լրբութիւնները, հողեր գրաւելլ յօդուա քիւրդերի, բնակավայրերից ուղղակի կամ անուղղակի կերպով տեղահան անելը և հայրենիքից գուրս վանդելլ, տնտեսապէս քայլայելլ, և վերջապէս՝ հայերին սրով և հրով ջարդելլ որ և է պատրւակով, մասմաս, բայց անընդհատ, աշխատելով որ այդ ամենը կատարւի մթութեան մէջ, հեռու եւրսպայի աչքից, առանց աղմուկի։

Այդ գործողութիւնները կատարւում էին այն ժամանակ, երբ տաճկա-հայերի սահմանադրական գլուխը Աշրգեան պատրիարքն էր։ Նոյն այդ ժամանակ տաճկի կառավարութիւնը, գիտակցական թէ անգիտակցական օգնականութեամբ Աշրգեանի՝ գաղարեցրեց տաճկահայոց սահմանադրութիւնը, թոյլ չտալով որ ազգացին ժողով գումարւի։ Հայութիւնը Տաճկասահմանում ամեն կերպ դահիճի ձեռքն էր մատնաւած, և այդ դահիճը—օսմաննեան կառավարութիւնը—իւր գործն էր տեսնում սաստիկ մէծ հետեւղականութեամբ, մի հետեւղականութիւն, որի մէջ ընդունակութիւն օսմաննեան կառավարութիւնը միմիայն աւերելու գործերի մէջ է ցոյց տւած։

Բանտերի մէջ գործադրւող տանիջանքների և բանտարկւածների թւի մասին մեր ընթերցողներին գաղափար կազմել տալու համար՝ հեռաւորապէս անգամ բաւական չեն այն մի քանի էջերը որ մենք յատկացրինք այդ խնդրին մեր անցեալ յօդւածում։ Ոչ, մենք վերապահեցինք այդ մի յատուկ յօդւածի, ներկայացնելու համար իրողութիւնները ոչ միայն ընդհանուր գծերով, այլ իրենց մանրամասնութիւններով, որովհետեւ միմիայն գէտքերի հատիկ-հատիկ ներկայացնելով է որ ստացւու՞մ է իրականութիւնը գէթ մերձաւորապէս ցիշեցնող պատիկելը։

Գործադրւող տանջանքների մասին նիւթերը պակաս չեն. իսկ ինչ վերաբերում է բանտարկւածների թւին՝ մենք պէտք է դիտել տանք մեր ընթերցողներին, որ մեր ծրագիրը այդ մասին տարածւում է ոչ միայն ներկայի, այլ և մօտ անցեալի վրայ, սկսած 1890 թւականից: Այդ թւականը այն տարին է, երբ տեղի ունեցան Երգերումի և Կ. Պոլսի Գումարավուի գէպերը. այդ ժամանականից հայկական շարժումների մէջ տաճիկ կառավարութիւնը սկսեց նկատել յեղափոխական բնաւորութիւն, և այդ տարւանից է, որ ձեռքակալումները և բանտարկումները սկսեցին անւել յեղափոխականների անունով: Այդ ժամանակից է սկսում հասունանալ տաճիկ կառավարութեան մէջ՝ հացերին բնաշինջ անելու գաղափարը, որ և հանդեց այն զժոխացին ծրագրին, որի արտայայտութիւններից մէկն էր միայն 1894 թւականի Սասունի կոտորածը: Եւ բանտարկումներն ել, դորան համապատասխան, պէտք է ստահացին ոչ միայն յեղափոխականներին բնաշինջ անելու նպատակ, այլ պէտք է օգնութեան գալին ընդհանրապէս վճռած քաղաքարութեան՝ հայ ժողովուրդը բնաշինջ անելու: Արդ, հայկական խնդրի նորագոյն զարգացման պատմութիւնը ամենասերտ կերպով կապւած լինելով հայ ժողովրդի այս վերջին տարիներում կրած ամեն կարգի քաղաքական, սոցիալական, տնտեսական հարստահարութիւնների հետ, այդ նոյն հայկական խնդրի զարգացման մէջ զեր են կատարում նաև ոչ միայն ներկայումս բանտերում եղածները, որոնց թիւը արդէն ահազին է, այլ և բոլոր նոքա, որոնք, մանաւանդ 1890 թւականից դէսը, քիչ թէ երկար տևողականութեամբ նստել են և տանջւել բանտերում: Իսկ դոցա թիւը պէտք է որ շատ հազարների հասնի:

Բանտարկեալների խնդիրը, որ ինքն ըստ ինքեան կարևոր խնդիր է, ներկայ յուլիս ամսում առանձին աժմէութիւնն ստացաւ շնորհիւ յուլիսի 13-ին սուլթանի տւած Շներման հրամանի, որով սուլթանի կառավարութիւնը իբր թէ կամենում է ընդառաջ գնալ երեք մեծ պետութիւնների պահանջման ընդհանուր ներման մասին, որ կազմում է նոցա ներկայացրած ռեֆորմների ծրագրի դլիսաւոր կէտերից մինը: Սուլթանի այդ ներման շնորհը մեր աչքում դլիսաւոր կէտերից մինը: Սուլթանի այդ ներման շնորհը մեր աչքում

Նութեան նշանակած կամ նշանակելիք բարձրագոյն կոմիսարը (Շաքիր փաշա կամ այլ ոք): Նուխ որ բոլոր բանտարկւածները քաղաքական գործերի համար չեն արձակուում: և երկրորդ ոչ մի երաշխաւորութիւն չի տրւում, որ այսօրւաց արձակւածները վաղը նորից չեն բռնւիլ և կամ բանտարկութիւնները չեն շարունակւիլ առաջւան պէս: Ներման շնորհը իւր իսկական նշանակութիւնը կ'ստանար միմիայն պետութիւնների առաջարկած ծրագիրը ամբողջապէս ընդունելու պայմանով, մի բան որ ոչ միայն մենչ այժմ չի կատարւել, այլ արդէն իսկ հանդիպել է ընդդիմագրութեան սուլթանի կառավարութեան կողմից, այն պատասխանով, որ տրւեց պետութիւններին ներկայ յուղիսին:

Ցուլիսի 13-ին տրւած ներման շնորհով բանտերից պէտք է արձակւեին և աքսորից ետ կանչւեին ինչ որ մօտ 700 հազի դողաթիւում չեն ամենակարենորագոյն բանտարկւած անձերը: Բայց, ինչպէս վերը արդէն նկատեցինք, կարեորը մեզ համար միմիայն այն չէ թէ ինչ վիճակումն են այժմեան բանտարկւածները, այլ դոցահետ և այն ամենքը, որոնք այս վերջին հինգ տարիներում բանտեն մտել և կարճ կամ երկար տեսողութեամբ չարչարւել են ուտանջւել. որովհետև, ինչպէս մանաւանդ այժմ պիտի տեսնենք, ժրքական բանտերը—տանջանքների մեքենաներ են, լինեն բանտարկւածները դատապարտուածներ թէ միայն քննութեան սպատողներ:

Մի ացդպիսի լայն ծրագիր լրիւ կատարելու համար նիւթերը մեզ սրակասում են. բայց արդէն իսկ այն, ինչոր կարող ենք տալ այժմ մեր ընթերցողներին, բաւական է, որպէս զի ներկայ յօդւածը իրաւունք ունենայ լուրջ սկզբնասորութիւն համարելու:

Մենք աշխատել ենք այս անգամ, օգտւելով մեր սեփական և ամեն այլ աշղթիւներից, որ կարող եղանք ձեռք բերել այս ամսում, չիշատակութեան առնել կատարւած ձեռբակալութիւնները և բանտարկութիւնները այս վերջին հինգ տարիներում, թողնելով գործի լրացումը այլ անգամների, որի համար այս ամսագրում այսուհետեւ «Յանտեր և բանտարկեալներ» խորագրով կը զետեղենք այդ մասին մեզ հասած բոլոր տեղեկութիւնները:

Մենք կը տանք իննդրին վերաբերեալ նիւթերը ոչ խիստ ժամա-

նակագրական կարգով, որ անհնարին է անել այս դէպքում, մանաւանդ ամսագրական մի ընթացիկ յօդւածի համար։ Եւ մեր առաջադրած նպատակի համար դա մեծ կարևորութիւն չունի։

Գումար. Գափուի ցոյցի համար 9 հոգի բանտարկւածները։ Մենք արդէն յիշեցինք որ հայկական խնդրի նորագոյն զարգացման սկիզբը պետք է հաշւել 1890 թւականից, երբ Տաճկաստանում սկսում են նոր տեսակի հայկական շարժումներ։ Երեխ չենք սխալւիլ, եթէ առաջին մասսային բանտարկութիւններն էլ հայկական քաղաքական գործերի համար համարելու լինենք այն դէպքերը, որոնք եղան իրը հետևանք Գումար. Գափուի (Կ. Պոլսի) մեծ ցոյցի, 1890 թ. 15 յուլիսի։ Այդ օրն էր որ առաւօտը, պատրիարքարանի եկեղեցում, մասնակցութեամբ մի քանի հազար հոգու, մեծ ցոյց եղաւ, ուր ճառ կարգացւեց, որի մէջ հայոց կրած աղէտներն էին պարզում և ասպա, ուղեկցութեամբ հաղարաւոր հոգու՝ առանձին թղթով այդ նոյնը տարւեց պատրիարքարան, սովորելու որ պատրիարքը այդ թուխթը յանձնէր սուլթանին։

Ճառ կարգացողն եղաւ Յարութիւն Զհանգուլեան, որը այժմ Աքիայի բերդում դեռևս կրում է իւր պատիժը։

Որքան մենք ենք տեղեկացած յատկապէս «Մուրճ»-ին հազորդած մի ականատեսի վկայութիւնից, Գումար. Գափուի ցոյցի առիթով ձեռքակալւեցին իննը հոգի, որոնցից երկուսը յոյն դոքա են։

Զհանգուլեան Յարութիւն, վանեցի. աքսորւեց Աքիա<sup>1)</sup>։ Լուսիկեան Նազարեթ, սեբաստոցի. աքսորւեց Արշիպելագոսի Միղիլի կղզու բերդը։

Նատուրեան Յարութիւն, սեբաստոցի, աքսորւեց Աքիա։ Խաչիկի, արհեստով սափրիշ, աղոլսեցի. աքսորւեց Լիմիա կղզու բերդը։

Յարութիւն, Բրուսայի նահանդի Քեօթահյա աւանից. բանտարկւեց Սինոպում։

<sup>1)</sup> Ներկաւ յօդւանում ընթերցողը կը գտնի առանձին ցուցակ Աքիալում իրենց պատիժը կրող հայ բանտարկեալների։

Աւետիս, արհեստով ձկնորս, պոլսեցի:

Կարապետ, երգնկացի. բանտարկւեց Ռողոս կղզում:

Խւան, յոյն, ուղարկւեց Բէսա ծովեղբեայ քաղաքի բերդը՝  
Նիկոլա, յոյն, բանտարկւեց Սինոպում:

Վերոցիշեալներից մի քանիսի մասին հաստատ յայտնի է, որ  
ոչ մի քաղաքական խմբի չեն պատկանել և որ ձեռքակալւեցին  
թիւրիմացութեամբ. այսպէս դոցանից երկուսի յանցանքը եղած է  
այն, որ ֆէսի տեղ շապօ են հագած եղել (Խաչիկը, Աւետիսը),  
որ, ինչպէս երեսում է, թիւրք կառավարութիւնն չընդունելու  
նշան է համարւել:

—Կեսարիացի մեծ դէպքը, 5—600 հոգու ձեռ-  
բակալումը 1893 թ-ին:

Կեսարիացի դէպքը իւր հեաւանքներով մէկն է ամենանշա-  
նաւոր եղելութիւններից այս վերջին տարիների հայկական շար-  
ժումների ընթացքում: Նա ունեցաւ իբր հետևանք 5—600 հա-  
յերի ձեռքակալութիւնն և բանտարկութիւնը, որոնցից 86 հոգի վեց  
ամսաշափ տառապեցին բանտերում մեծամեծ չարչարանքների մէջ,  
56 հոգի վեց ամսից յետոց դատի ենթարկւեցին, որոնցից 41 հոգի  
դատապարտեցին, որը մահւան, որը երկարամեայ բերդարգելու-  
թեան: Մանրամասնութիւնները հրատարակում ենք ներքեւ «Գա-  
ղաթիացի բանտարկւածները» խորագրի աակ. իսկ այստեղ ծանօ-  
թացնենք մեր ընթերցողներին դէպքի սկզբին աւորութեան հետո:

1893 թւականի յունւարի սկզբին, ուրբաթ օր Կեսարիա քա-  
ղաքի<sup>1)</sup> և շրջակայ գիւղ ու քաղաքների գիշերապահները տես-  
նում են որ հրատարակներում, պանդոկների և կառավարութեան  
տների պատերին կոցրած են տաճկերէն լեզւով թղթեր ցայտա-  
րարութիւններ» (Եաֆթա) անունով, որոնցով ժողովուրդը յորդոր-  
ւում է կառավարութեանը ընդդիմադրելու: Եղելութեան մասին  
իսկոյն տեղեկացնում են գաւառապետին, որի հրամանով իսկոյն  
ժողովւում են 200-ից աւելի օրինակներ ացր յայտարարութիւն-  
ներից: Խմանալով որ նահանգի բոլոր հայաբնակ ու տաճկաբնակ

<sup>1)</sup> Կեսարիա—Գաղատիալի նահանգի գաւառական քաղաք է, ուր  
նստում է գաւառապետ (միւթեսարիք):

գիւղ ու քաղաքներում այդ նոյն ձեռվ տարածւած են, Գաղա-  
տիացի նահանգապետը հեռագրով իսկոյն տեղեկագրում է եղելու-  
թիւնը սուլթանին, որը, նոյնպէս հեռագրով, հրամայում է գործը  
շուտով քննել և հետևանքների մասին հեռագրել: Այդ նպատակով  
էլ Կ. Պոլսից ուղարկում են երկու է սք եր փաշաներ, որոնք,  
հետեւնին առնելով Գաղատիացի նահանգապետին (որ կարծեմ  
Սբքեղդին փաշան պիտի եղած լինէր) և անգլիական հիւպատո-  
սին՝ գալիս են Կեսարիա: Դոցա առաջին գործն է լինում ձեռ-  
բակալի ու բանտարկել 500-ից աւելի անւանի հայեր Կեսարիա  
քաղաքից և շրջակացքից: Այդ բազմաթիւ ձեռբակալութիւններից  
հայ ժողովուրդը սկսում է յուզել, մանաւանդ երբ նա տեղեկա-  
նում է թէ ինչ անտառնելի տանջանքների են ենթարկ-  
ւում բանտարկւածները, մանաւանդ նոքա, որոնց վրայ որ և է  
կասկած կայ: Այդ ժամանակ բանտարկւածներից մէկը, Ռուբէն  
ձեւահիրճ եան, չկարենալով զիմանալ իրեն տւած սարսափելի  
տանջանքներին, սկսում է թւել քաղաքի յեղափոխական կարծւած  
հայերի անունները. և երբ այդ առիթով սկսում են մի շարք նո-  
րանոր ձեռբակալութիւններ, ժողովուրդը այնպէս է կատաղում, որ  
կառավարութեան համար այլ ևս պարզում է թէ հայերի կողմից  
կարող են շփոթութիւններ ծագել: Կառավարութիւնը, դորա  
առաջն առնելու համար, զիմում է այս միջոցին՝ գրգռել  
թիւրք ամբոխը հայերի դէմի: Եւ ահա սկսում են այս-  
տեղ փոքրիկ ընդհարումներ տաճիկների և հայերի մէջ. փողոցնե-  
րում հայերն ու տաճիկները, իրար պատահած ժամանակ, կուի  
են բռնւում: Այդ միջոցին է որ ձեռբակալում է Անտօն Ռլշ-  
տունի, որը, պատկանելով հնչակեան յեղափոխական կուսակցու-  
թեան, իւր համար ձակ պատախաններով հարցաքննութեան ժա-  
մանակ՝ մեծ շփութիւն է գյում քննիչների մէջ: Նորա խօսքերից  
մէջ ենք բերում հետեւալը. վալիին (նահանգապետ) յայտնելով որ  
իւր և ընկերների ուղածը աշխատաւոր ժողովրդի համար նպատաւոր  
օրէնքների հրատարակութիւնն է և եթէ ինքը լուէ՝ իւր և ընկեր-  
ների յետեւը հարիւրաւոր սպառագէն հրոսակներ կան, որոնց դիւ-  
րին չի լինիլ լոեցնել, Խշտունին, դիմելով Կեսարիացի զինւորական  
տեղակալին (միւթեսարիֆին), ասում է՝ «իսկ դու, որ այսօր իբ-

քև կառավարութեան շահերին ջատագով՝ հարցեր ես առաջարկում ինձ, դու ինքդ մէկը չես կառավարութեան կողոպտողներից. դու չէիր որ ինձնից 800 հատ արծաթ մէջիս առնելով՝ փոխարէնը 800 հատ հրացանի փամփուշտներ տեիր: Եփոթւած զինւորական տեղակալը դիմում է այնուհետև Ռշտունուն մէջտեղից վերացնելու միջոցին, ծառազողների միջոցով թունաւորելով նորան: Բայց նահանդապեալ ժամանակին տեղեկու ժիւն ստանալով՝ բժիշկների օգնութեամբ ազատում է նորան մահւանից՝ թէև միայն կառավարութեան ճիրանը նորան մատնելու համար: Կառավարութեան կողմից նորից զբանաւած թիւքը խուժանը յարձակում է հայերի տների և այգիների վրայ կողոպտելու և այրելու նպատակով. հայերը արիութեամբ ընդդիմադրում են. ընդդիմադրում է նաև երբ թիւք խուժանը յարձակում է եկեղեցիների վրայ աւերելու և կողոպտելու համար, յարձակում է կանանց վրայ՝ նոցա զարդերը խլելու համար: Տեղի է ունենում մի սարսափելի կուիւ, որ երկար ժամեր է սւեռմէ: Այդ դէպքերից յետոյ՝ տեղի են ունենում նորից հարիւրաւոր ձեռքակալութիւններ:

Խրախուսւած կառավարութեան բռնած այս գիրքից՝ թիւքքերը ամեն պատեհ առիթից օգտացին հայերին չարիքներ հասցնելու՝ հայերից ում հետ որ իննդիր կամ հաշիւ ունէին՝ «պախշից» կամ կաշառք էին պահանջում: հակառակ պարագային՝ սպառնում էին իբրև ցեղափոխականիւ կառավարութեանը մատնել: Գիւղերի և քաղաքների մէջ քրիստոնեաների ապառիկ պահանջները թիւքքերից՝ սկսեցին փճանալ, որովհետև ոչ մի թիւքք այլ ևս չկամեցաւ իւր պարտքը տալ «ֆէսատ գեաւուրին» և ոչ մի հայչէր համարձակում կառավարութեանը դիմել բողոքով, վախենալով որ իւր մօտ գեռ մնացած փողն ևս պաշտօնեաները չցափշակեն: Մեր աղբիւրը, որից օգտառմ ենք այս տեղեկութիւնների համար, աւելացնում է, թէ «խիստ երկար կ'ըլլայ ցուցակն անւանց այն քրիստոնէից, որոնք այս մոլեռանդ հասարակութեան զրպարտութեանց ենթարկելով՝ իբր «քաղաքական յանցաւոր» ամիսներով բանտերու մէջ հեծծեցին և դեռ կը հեծծեն երկրին ամեն կողմը, ուր որ հայ կայ, ուր որ բանտ կայ»:

Իսկութիւնը այդ ցայտարարութիւններին մասին պատմած

է Անոսն Ռշտունու պաշտպանողական ճառի մէջ, Գաղատիացի դատարանում, մայիսի 29-ին, Ավ գիտէ ինչ հաշիւներով, թուրք կառավարութիւնը թոյլ էր տւել որ մեզագրւածները և կամ նոցա փաստաբանները ամենաազատ կերպով իրենց օգտին պաշտպանողական ճառեր արտասանեն: Թերեւս այն դիտուորութեամբ որ պատժից և մահից չվախեցողների համարձակ ծշմարտախօսութիւնից կառավարութիւնը կարողանաց գաղտնիքներ իմանալ: Եթէ այդ էր նորադիտաւորութիւնը—նա չսխալեց: Ռշտունին իւր ճառի վերջում պատմեց եղելութիւնը այդ յայտարարութիւնների մասին: Պարզւեց, որ զոքա ցրւեցին և սպատերին փակցւեցին հնչակեան կոչւած կուսակցութեան կեղրոնի հրահանգների համաձայն, նորա բազմաթիւ մասնաձիւղերի միջոցով. այդ բանը արդէն յայտնի էր կառավարութեան և դատարանին. բայց նա յայտնեց նաև այլ բան, որ թէև այդ թերթերը Կեսարիայում հայերի ձեռքով տարածւեցին, բայց նոցա խմբագիրն ու հեղինակները հայեր չեն: Նա հրաւիրեց դատաւորների ուշադրութիւնը դատարանի սեղանի վրայ դրւած հնչակ թերթի այն համարի վրայ, ուր թարգմանւած էին այդ յայտարարութիւնները. այդ համարը Կեսարիացի դէպքից ամիսներ առաջ էր հրատարակւած. բայց նոյն այդ համարում տպւած էր թէ այդ յայտարարութիւններից շատ օրինակներ ցրւած են Միջերկրական ծովի եղերքների վրայ մինչև Սիւրիա: Ում միջոցով? Լոնդոնում գործող «Եսլամ կոմիտէ»-ի ձեռքով, որը Միջերկրականի եղերքների վրայ կարողացել էր հեշտութեամբ յարաբերութիւններ և ճիւղեր հաստատել և ցրւել թերթերը իսլամ ճիւղերի միջոցով: և թէև կառավարութիւնը իրազէկ էր եղած խնդրի գաղտնիքին, սակայն խոհեմութիւն համարեց գործը շուտով ծածկել: Բայց որոշեաւ յիշեալ իսլամ կոմիտէն ներքին գաւառների մէջ յարաբերութեան և հաղորդակցութեան դիւրութիւններ չունէր, ուստի նա դիմել էր հնչակեան կենդրոնական կոմիտէի օգնութեան, որ ընդունել էր, չնայած որ, ինչպէս յայտնեց Ռշտունին, յայտարարութեանց սղարունակած իմաստն ու ոդին հնչակեան լնկերութեան նպատակից ու սկզբունքից բոլորովին դուրս են: Թրքական այդ կոմիտէն նախ գործում էր Պարիզում, ուր նա հրատարակում էր „Տա-Տարզութեան“ (Ազատ Թիւրքիա) անունով թերթը. բայց Քրանսիա-

կան կառավարութիւնը, համակերպւելով թիւրք կառավարութեան խնդիրքներին, այդ կոմիտէի անդամներին իւր երկրից արտաքսեց. կոմիտէն ապա հաստատւեց Լոնդոնում, ուր և գործում է մինչև այսօր։ Թէ թիւրք կոմիտէի և թէ նորա թերթի գոյութիւնը թիւրք կառավարութեան քաջ յայտնի էր. Կեսարիայի գէտքերի միջոցին, Աշտունին, դատուելուց դեռ առաջ, յայտնել էր նահանգատեաին, գաւառապետին և ուրիշ բարձր պաշտօնեաներին Կեսարիայում տարածած թերթերի հեղինակների մասին իսկութիւնը. բայց դոքա Աշտունու այդ յայտարարութեանց վրայ, գէթ առերևոյթու, թիթե աչքով նայեցին և կամ զրեթէ կարեւորութիւն չտւին։ Թէ ինչու, ահա Աշտունու տւած պատասխանը իւր սրաշտուղական ճառի մէջ. «Ես այս պարագան ուրիշ պատճառի չեմ կարող վերագրել, եթէ ոչ այս խորհրդին, թէ Եւրոպայի մէջ իսլամներից բազկացած մի կոմիտէի գոյութիւնը, այսուեղ, իսլամ ժողովրդի մէջ չտարածելու ու նորա մէջ շփոթութեանց տեղիք չտալու համար՝ կառավարութիւնը այդ «յայտարարութիւնների» հեղինակ ու խմբագիր հայերին է հռչակւած՝ մեր իսլամ հայրենակիցների առելութիւնը մեր՝ հայերիս՝ վրայ գրգռելու համար։

Պարզ է որ հայերի դէմ գրգռելլ կառավարութեան ծրագրի մէջ էր մտած, որի ծայրը համնում էր հայերին կոտորելու դաւադրութեան, մի կոտորած, որի մօտարուտ լինելը գուշակւում էր արդէն։

Հայերի մօտարուտ կոտորածը գուշակում են եղել երկրի մէջ գործոներից երևի շատերը. բայց չպէտք է հերքել մոքի կորովը այն մարդկանց, որոնք գրաւորապէս յայտնել են իրենց զգացմունքը այդ մասին, որպիսին է Ներսէս վարդապետ Խարախանեան. նոյնպիսի գուշակութիւն անում էր նաև Կեսարիայի գէտքերի համար մեզ ազրիւր ծառայողը, որը հիմնում է հիմնական Փակտերի վրայ։

«Պէտք է զիտնալ, գրում էր նա 1893 թ-ի առաջին կէսին, պէտք է զիտնալ որ այս ամենն ալ կառավարութեան անուղղակի և մերթ ուղղակի հրահանգով ու թելադրութեամբ գործադրւեցան։ Կեսարիոց բանտի մէջ բանտակից թիւրք զիւղացիներ պարզամտութեամբ կը պատմեն հայերուն թէ իրենց իմամներ ու խոճաներ այս վերջին մի քանի տարիներու մէջ ինչ կը քարոզեն մզկիթներու մէջ, այն է՝ պաշտպանել սուրբ կրօնը և մարգարէի յաջորդը

կեաւուրների դէմ, ամեն կարելի միջոցներով, և պատահաբար կ'իմանանք որ այս «միջոցներէն» էն կարեւորը փութոց պնդիւ լռելեայն կը հայթհայթէ կառավարութիւնը, այն է՝ զինուց մթերք պաշշողց մի չէ արինկզակ քրդերը զինել, պատւանշաններով մեծարել, կերցունել, խմցունել, ոգեսրել և պատրաստել ահեղ մի կոտորածի, որի թատրը ըլլու սահմանւածէ Հայաստան, մարտիրոսներու այդ յաւիտենական հայրենիքը»<sup>1)</sup>:

Այժմ դառնանք բանտարկեալների վիճակին, որի մասին տեղեկութիւն տւողը նոյն իսկ բանտարկւածներից մէկն է:

Այդ թղթակցութեան մէջ մի-առ ի պատմւած են բոլոր այն տանջանքները, որ վիճակւած է եղել կրելու կեսարիայի մեծ դէպքի համար Գաղատիայի բանտում բանտարկւածներին: Դարձնում ենք մեր ընթերցողների յատուկ ուշադրութիւնը այդտեղ գործադրած տանջանքների նկարագրի վրաց:

Գաղատիոյ բանտարկւածները ու նոցա կրած զարհուրելի չարչարանքները: Գաղատիոյ բանտէն կը գրեմ այս տողերն: Կեսարիայէն, Եօվկաթէն, Մարզուանէն և այլ մի քանի տեղերէն յաջորդաբար թւով 500 հոգի էինք իբր քաղաքական յանցաւորներ, որոնցմէ մի մասը ազատ արձակւեցան, թիւրք կառավարութիւնը մինչև իսկ չկարենալով նոցա անմեղութեան վրայ շինծու յանցանքներ բարդել: Անլուր, պժգալի փորձեր ու միջոցներ գործադրւեցան իբր խոստովանութեան դեղ ու դարման: Զարշարանք, անարգանք, ծեծ, մերկանք, լկանք, անօթի ու ծարաւ թողնուլ—սովորական ձևակերպութիւնների կարգն անցած էին: Սաստկաշունչ ձմեռը աւելի դասն կը գործէր, գողցես աջակցելու համար այդ փորձերուն ու միջոցներուն. ցնցուի խշդեակները՝ անկողնոյ տեղ, մկների կրծած հացի փշրանքները՝ կերակուրի տեղ, ազտոտ սափորիկներու դարշահոտ ջրերն ամեն բան խնայողութեամբ տրւեցան հայ բանտարկեալների պատկան ու ծարաւը անցունելու համար. հինաւուրց ժանգոտած ծանրակշիռ շըզ-

<sup>1)</sup> Նօտրը մերն է: Այդ տողերը գրւած են 1893-ին մարտ ամսին. Ծան. Ա. Ա.

թաները երևան հանեցին, որպէս և անտանելի սումբերն ու գընդակները, փայտեաց ու երկաթեայ ձեռնակապերը՝ ոմանց զգին, ոմանց ոոքին և շատերու ձեռներուն կապւեցան՝ խօսեցնելու համար այն բաները, որ կառավարութիւնն ու բանտի պաշտօնեացք կամենաչին լսել:

«Բանտարկւածները խոստովանցնելու համար աւելի յարմար որոշած էին փոխանակ ցերէկի՝ ձմեռաւան երկար ու ահարկու դիշերները հարցաքննել: Մերթ ժամը 3.ին, մերթ կէս դիշերին և մերթ առաւոտեան գէմ բանտի իւրաքանչիւր նկողէն կը լսէին լալախառն ու հեղձամղձուկ հեծկլտանքներ և երբեմն ալ աղիողորմ աղաղակներ—«չեմ զիտեր, չտեսայ... մեռաց, ի այլն, որոնց կը խառնւէին թիւրք բանտարկւածներու սոսկալի գոռումն ու գոչումը, ամեն կողմէ երգւած այլազան և սրիկայական թիւրքին երն ու մանին երլ, որպէս զի—կառավարութեան պատուէրով—չլսւին փայտի հարւածներու տակ կամ տաքցած ու շամբրած շիշերու առաջ, կամ ձիւնի կոյտերու վրայ բոլորովին մերկամարմին ծնրադրող հայ պատմնելոյն ու երիտասարդին ճիշն ու վայնասունը: Մին փայտէ հարւածներու տակ կը գոչէ՝ ալ մեռաց, ուրիշ մը ձիւնի կոյտերու վրայ զլինէ ի վար թափւած սառ ջրերէն սառսուռ զդալով կը պոռայ՝ ալ սառեցայ, և անդին մի երրորդը հրաշէկ ու տաքցած շիշերէն սոտացած վէրքերի ցաւէն կը ճւայ ու կը ճչէ, աղիողորմ ձայնով ըսելով՝ այլրեցայ, ալ կը բաւէ, հրէշներ. մեռցուցէք զիս որ ազատիմ... և այսպէս շատերը տանջեցին: Անարգանքները, չարչարանքները՝ գրչիս ներածները միայն գրեցի, սակայն գործ գրւեցան նաև երբեմն այնպիսի լրբենի միջոցներ թէպատանւոյն, թէ չափահամներու վրայ, որ լսելով իսկ մարդ կը սարսափի անշուշտ և գրիշներն իսկ կը կասին ու կը պատկառին այդպիսի գագանային ու վայրենի արարողութիւնները գրելու ու զծելու, որոնք գործադրւեցան կառավարութեան պաշտօնեաններու բայց որոշ հրամաններով և բանտի մարդասպաններու ու աւաղակներու ձեռքով:

«Այս անլուր ու բարբարոս չարչարանքները սկսան գործադրւիլ տարեգլւի և ծննդեան տօնի զիշերները: Բանտի զոհերն սակայն թողունք բանտի մէջ և այս պահուստ քիչ մը բանտէն դուրս ելնենք

և տեսնենք թէ ինչեր կը կատարւին Կեսարիոյ մէջ և անոր շուրջ գտնւող հայաշատ գիւղերը։ Կեսարիոյ թիւրքերը կը միանան մօտակայ Հաճըլար կոչւած գիւղի թիւրքերու հետ և կը մտնեն քաղաքի մօտիկ հայոց այգիները։ Նախ կը ջարդէն ու կ'ոչնչացնեն անոնց ամբողջ բուսականութիւնը, ապա կրակի կուտան գեղեցիկ տուներն ու ամրոցները և յետոյ սպառնական դիրք կը բռնեն Կեսարիոյ քաղաքի հայերու վրայ յարձակելու միտումով։ Եւ նորասրերով, զէնքով կը յարձակին հայերու տներն ու խանութները թալնելու և Թէքէ Եօնու ըսւած շուրկան, խանութները ու սէրի հները կը կողոպտեն, կը փշրեն, հայերու վրայ ալ յարձակելով կը զարնեն, կը ծեծեն, կը կոտորեն։ Ե ֆքէ րէ մեծ գիւղէն ալ ձայն կուգայ, թէ կոխւեցաւ պաշազոզով թիւրքերու կողմէն, հայոց հարսերը Ակւեցան, կոյսերը պղծւեցան, տղամարդիկ ծեծւեցան ու սպանւեցան, և ապա կացիններով դռները խորտակելով շալակներով ու տոպրակներով հայոց տուները կողոպտեցին։ և այդ բոլորը տուներու մէջ քանի մը խիստ փնտուած յեղափոխական բռնելու պատրւակաւ միացած կառավարութեան պաշտօնեաներու հետ և գործելով սոցա հրամաններուն համեմատ։ Եւ առոր փոխանակ սայլերով լիցուն և երբեմն ալ յետիոտն ամեն կողմէ և ամեն գիւղերէ հայեր լեցւեցան բանտի բակն ուներսը. մինչև անգամ բանտի գարշահոտ ճեմիշներն ու արտաքնոցներն ձերբակալած հայերու համար ննջարաններ եղան և բանտի բացօքեայ բակը պատուհաններէ կապւած՝ շղթայւածներու համար պատսականաց տեղի թշւառ բանտարկւածներն իրենց քսակներն ու արժէքաւոր ինչ որ ունեին կամայ ակամայ բանտի մարդասպաններին յանձնեցին, որպէս զի գէթ արծաթի գնով գնեն մի քիչ հանգիստ Ամանք ալ բանտարկւեցան ածուխի շտեմարաններու մէջ, և այդ օրը յատկապէս ածուխ գնուեցաւ և այնոտեղ ձգւողներուն վրայ ածուխ, ջուր և կազ միասին թափւեցան ու սրսկւեցան։ Այգտեղ բանտարկւած սիրուն պատանիներն, պատւաւոր վաճառականներն ու երիտասարդները յետոյ դուրս ելան այդ տարօրինակ ու նորահնար բանտէն իբրև մի-մի ուրւականներ և աղտոտ, փիս խափշիկներ։ Աստ առաջ կը բերեմ բանտարկւածներէն անոնց անուններն, որք ամենէն խիստ տանջանաց ենթարկւեցան թիւրք պաշտօնեարու կողմէ։

1) Եաւարշ Եսայեան, թալասցի, 40 տարեկան, 4 զաւակներու տէր, տեսուչ և ուսուցիչ Վարդ-Պատրիկեան վարժարանի, վկայեալ ուսումնական խորհրդոյ կենտրոնական վարչութեան կողմէ: Սա առաջինն եղաւ. Կեսարիոյ և նորա շրջակայից բանարակելոց մէջ. տարեգլիմի տռաջին գիշերը, ժամը 7-ին, երկու հարիւրապետ, ընդհ. դատախազի օգնական և 30 զինեալ ոստիկաններ սորա տունը կը կոխեն, բոլոր գոյքերն, արկղներն ու մնտուկները կը խորտակեն բան մը փնտուելու. պատրւակով և իր գրական բոլոր թղթերն ու գրքերը միատեղ առած, զինքն ալ կը ձգեն բանտը, 48 ժամ շարունակ անօթի ու ծարաւ կը պահեն և 6 օր խոնաւմերկ գետնի վրայ կը պառկեցունեն, չխնայելով նաև գաւազանի հարւածները:

2) Սարգիս Թէգէեան, թալասցի, 41 տարեկան, կրկին զաւակներու տէր: Վայրագ գանակոծութենէ յետոյ ցեխի մէջ կը նստեցնեն և գլխէն վար սափորներով, ձմեռ ժամանակ, պազ ջուր կը թափեն. պեխը կիսովին կը փետուեն, թեւերը կապելով՝ գլխիվայր կը կախեն. Ճնկներուն մէջ մեծ քար զետեղելով ծունը դնել կուտան, քարէ սափորիկի սրածայր ըմսիչը նստուկին անցքը կը խոթեն և միւսի բերնին կը փչեն. կը սկսի նորս բերնէն ազբ դուրս գալ, փսխել, ասրա տաքցուցած շիշ կ'անցունեն միզանոցին մէջ և մարմոյն շատ տեղերը նոյնպիսի շիշերով կ'այրեն: Ութ օր շարունակ այլպէս կը չարչարեն և ի վերջոյ ամենանողորմ ու կեղտուտ զազանութեամբ բռնի կը սոխիպեն սորա և Զուքուրլի Յակոբին պատիւը միմեանց բռնաբարել տալ...:

3) Կարապետ Քէրթէնեան, թալասցի, 23 տարեկան, ուսուցիչ: Սորան ալ չարաշար կը դանակոծեն, 4 ժամ ոտքերէն գլխիվար կը կախեն, ջրալից հողի վրայ գիշերը մինչ առաւտ ծնկներու վրայ կը կանգնեցնեն, յզէն չւան անցնելով՝ գետնին վրայով քարշ կ'անեն. հազիւ թէ կ'ազատի խեղդամահ լինելէ և վերջն ալ 11 օր ածուխի շտեմարանին մէջ կը փակեն անօթի ու ծարաւ:

4) Ոռւբէն Քէհեաեան, թալասցի, 40 տարեկան, ամուսնացած. անխզմաբար կը ծեծեն, մերկացնելով գլխէն վար ջուր կը թափեն ձմեռ ատեն մը, ճնկներուն մէջ քարեր զետեղելով ծնրա-

դրել կուտան, ցեխի մէջ պառկեցնելով անգթաբար կը կոխոտեն, և այդ բոլորը կը տեէ 6 օր:

5) Ղազար Ա.Ե զիրեան, թալասցի 40 տարեկան, զաւակներու տէր. մերկացնելով ստէպ-ստէպ երկար ժամերով կը գանակոծեն մինչեւ արիւն:

6) Արսէն Գալֆաեան, թալասցի, 33 տարեկան, ամուսնացած. վկայեալ փաստաբան և փոխանորդ կառավարութեան գանձուն. 4 օր առանց հացի և ջրի թողնէլէ յետոյ գէնճիրլիք կոչւած շղթաներու և կազի պահարան խցիկի մէջ 11 օր շարունակ կը պահեն գրեթէ մերկ, չոր հացով միայն կերակրելով, անարգալից հայնոյանք տեղալով ազգի, ածնական ու ընտանեկան պատոյ դէմ:

7) Աբրահամ Խաչատուրեան, թալասցի, 28 տարեկան, ամուսնացած. կը գանակոծեն խիստ և ցեխի մէջ նստեցուցած շամբոյներով կ'այցըն մարմինը:

8) Հաճը Մաճառեան, կեսարացի, 20 տարեկան. մերկացնելով գլխէն ջուր կը թափեն ժամերով, 4 ժամ՝ ալ ցեխի մէջ ծընրադիր կընեն և տաքցուցած ունելիով ոտքերն ու ուսերը կ'այցըն:

8) Յակոբ Ճէպիտէլիքեան, կեսարացի 30 տարեկան. սա բոլորովին սխալմամբ բռնած էին ուրիշ Յակ. Ճէպիտէլիքեանի տեղ. 24 ժամ շարունակ ցեխի մէջ մերկամարմին գլխէն վար սափորներով ջուր կը թափեն, ապա մարմնոյ շատ տեղերը ունելիքով կ'այցըն, միզանոցի մէջ տաքցած շիշ կը խոթեն և այլ շատ չարչարանք կուտան, և միայն յետոյ, երբ կը հասկնայ միւթէսարլֆը լիէ ացդ անմեղլ սխալմամբ բռնած են, կը կանչէ իր մօտ և կը բաւականանայ այս քսամնելի խօսքերն ըսելով. ողլում, հաղգլուր հելալ էթ, սիզի եանլըշ կէթիրմիշլէր» (որդիս, իրաւունքդ նւիրէ, ձեզ սըխալ են բերեր):

10) Զուքուրլու Յակոբ, կեսարացի 45 տարեկան, զաւակներու տէր. կը գանակոծւի չարաչար և մերկամարմին սափորով միզ կը թափեն, կը լլին չարաչար. գլխիվս կը կախեն, բերանը բանալով կը թքնեն, օրերով անօթի կը թու. և այդ բոլոր չարչարանքները 12 օր կը տեէ:

11) Հաճի Ղազար Մաճառեան, կեսարացի, 60 տարե-

կան, զաւակների տէր. 42 ժամ՝ անօթի կը թողուն բացօդեաց տեղ, ձիւնի վրայ, այնպէս որ սաստիկ կը սառի. միւթէսարլվֆ փաշան վախնալով թէ չմեռնի և գործը ծանրանայ, թող կուտայ, բայց հաղիւ թէ բանտի գոնէն կ'ելնէ՝ խեղճ ծերունին կը մարի ու կիցնայ թաւալելով ձիւնի մէջ. ոստիկաններն բազմութեան առջե վերցնելով՝ կը տանեն և կը ձգեն իր տունը:

12) Մարտիրոս Ճիւանեան, էֆքէրէցի, 18 տարեկան, սոր շրջանաւարտ Մարզուանի անգլիական Անասոլեան Կոլէնի. կը մերկացունեն նախ և վայենսաբար կը գանակոծեն, ապա կախողան կը դնեն և վերստին կը ծեծեն, այնուհետեւ մերկամարմին կը պառկեցունեն ցեխոս և ջրալից գետնի վրայ և օրերով անօթի կը թողուն, նոյն իսկ միւթէսարլվֆ փաշան ինքն իր պաշտօնատան մէջ կ'աստակէ, կը ծեծէ ու կը հացհոյէ թշւառ պատանեակն:

13) Բարսեղ Տէօքմէնեան, կեսարացի, 27 տարեկան, սորան կը մերկացնեն և այնքան խիստ կը գանակոծեն, որ արիւն կ'երեայ, կուրծքի ոսկորները կը վնասւին և 15 օր շարունակ առատ արիւն կը թքէ:

14) Յովհաննէս Արզումանեան, կեսարացի, 28 տարեկան. սորան մեղաղրելով թէ կեսարացիներու կողմէ գործի մը համար Մարզուանի ընկերութեան պատուիրակ դացած է, աներեւակացելի կերպով կը գանակոծեն. ապա կը մեղաղրեն թէ իր, Յովհաննէսի, փաստաբան եղած օրերու մէջ սպանւած թիւրքն ինքն է սպաննած, մինչեռ թիւրքերու կողմէ սպանւած ըլլալն արդէն վազուց ստուգւած է, և հրացաններու կոթերով զինւորներն անգութ հարւածներ կը տեղացունեն վրան և տանջանք մը չմնաց որ շտացին նորան անգաղար:

15) Կիւլպէն կ Համալեան, թալասցի, 19 տարեկան. ոռքերը շղթայ և ձեռաց վրայ երկաթեայ ծանր ձեռնակապեր դըրւելով անօթի ու ծարաւ. թողւեցաւ 48 ժամ:

16) Մկրտիչ Սոլիեան, կեսարացի վաճառական, 25 տարեկան. ածուխի շուեմարանը ձգւելով վրայէն պարկերով ածուխ և կազ թափեցին, և այդպէս ամբողջ 12 ժամ:

18) Յովհաննէս Գարագիւլահեան, Գուլա անւանեալ, կեսարացի, 21 տարեկան. Ֆրէզուլլահ անուն հարիւրապետը

սորան կը ձեռբակալէ Մանճըսի մէջ և ծեծելով կը բերէ մինչև Եփքերէ և այգտեղ կառավարութեան կեդրոնը ախոռի մէջ մէկ ոտքէն գլխիվայր կը կախէ և գլուխը կը թաղէ ձիու աղբի մէջ. 24 ժամ այսպէս կախ թողնելէ յետոց՝ միւս օրը Կեսարիա բերելու տաեն ճամբան միւսթանթըք քեաթիպի (հարցաքննիչ) Ահմէտը ամենայն բռնութեամբ կը փորձէ ստիպել զՊուլա վկայելու համար, թէ կեսարիոյ այգիի մը մէջ թիւբքի մը սպանութիւնն արած է Յով. Արգումանեանը, սպասնալով թէ եթէ այդպիսի վկայութիւն չուայ չարչարանաց տակ իրեն սպաննել կուտայ: Կեսարիոյ հասնելէ յետոց սաստկապէս կը ծեծւի և շատ օրեր ուքերուն ծանր շղթայ անցուցած՝ անօթի ու մերկ կը թողուն զէնճիրլիք ըսւած խցիկի մէջ:

18) Եղիա Մէշճիւան, կեսարացի 22 տարեկան:

19) Կարապետ Փափազեան, պէլէկէսցի, 60 տարեկան:

20) Սերովբէ Փափազեան, , 33 ,

21) Յակոբ Փափազեան, , 34 ,

Այս չորս անձերը մինչև արիւն կը գանակոծեն և շիշերով ու տաքցած ունելիքներով չարաչար կը տանջեն ամբողջ օրերով:

22) Մամաս Քէօփրիւկան, պէլէկէսցի, 18 տարեկան. սորան երկար ժամերով կը ծեծեն, քատցած ունելիքներով խիստ կը չարչարեն և ասպա մէկ գիշերւան մէջ քանից թշւառի պատիւը կը բռնաբարեն դ ազանաբարոյ կառավարութեան գազանաբարոյ պաշտօնեաները:

23) Անտօն Ռշտունի, Կ. Պոլսեցի, 45 տարեկան, զաւակներու տէր. սա կը ձեռբակալւի Եփքերէ գիւղի մէջ 500-ի չափ պաշրպուգներու և ոստիկան զինորներու ձեռքով Ծննդեան օրերու մէջ: Այդ վայրենիներու ըրած գործերը Եփքերէի մէջ այդ պահուն՝ վերը կարծ գրեցինք: Բանտը փոխադրելէն յետոյ ամեն տեսակ չարչարանաց տակ կը ձգեն և կը փորձեն թունաւորել: Տեսնելով բազմաթիւ անմեղներու կրած տանջանքները, Ռշտունին հարցաքննութեան միջոցին նոցա արձակումը կը սպահանջէ, իր վրայ առնելով բոլոր երևակայելի յանցանքներ, յայտարարելով թէ ինքն հնչակեան կուտակցութեան գործադիր անդամ մ'է և միեւնոյն ժամանակ մերկացնելով ու հարւածելով կառավարութեան բռնակալ ու կեղտոտ արարքներն ու բռնած ընթացքը և պաշտպանելով ժո-

դովրդեան անբռնաբարելի ու սուրբ իրաւունքները: Թէ գործ դրւած քննութիւններու միջոցով և թէ այդ լեզվին համար մեծ կարևորութիւն մը ստացաւ Աշտունիի ձերբակալումը:

Եւէրէկի բանտին մէջ ջաղացպան Արիստակէս անուն 45 տարեկան անձը ամբաստանւելով նոյն տաճկական ցայտարարութեանց խնդրով, թէ իբր ինքն ալ փակցուցած է, անմեղ տեղը ամենասոսկալի անարգանքներու և տանջանքներու մատնած են. նախ 10-ի չափ սրիկաներ բանտի մէջ պատիւը կը բռնաբարեն և յետոյ 4 օր վզէն կը կախեն՝ անօթի ու ծարաւ պահելով: Գրեթէ մերձիման՝ կաղաչէ որ իրեն ջուր տան. ոստիկան մը ջրով լի սափորը կը մօտեցնէ և գլխուն զարնելով սափորը կը կոռրւի և թշշւառի գլուխը կը վիրաւորւի: Տեղակալին լուր կը տրւի թէ Արիստակէսը մեռնելու մօտ է. այդ ժամանակ կախւած տեղէն վարկառնեն և իբր մեռեալ, մերկամարմին, ձիւնի մէջ կը թաղեն ժամերով, մինչեւ որ կ'իմացւի թէ թշշւառը բոլորովին անմեղ է և վախնալով մահն՝ անմիջապէս կ'արձակեն:

Եւէրէկ բռնւածներու մէջ կը գտնւէր նաև կին մը՝ տիկին Սրբուհի Քէ լլէ ձեան: Այս զժբաղդ կինը բանտի մէջ շատանջանքներ կրելէ վերջ, հակառակ իր արձակած աղիողորմ ճիշերուն ու լացին, ուժ գաղանաբարոյ ոստիկաններու կողմէ բաց տեղ մը կը տարւի և վատաբար կը լլկւի:

«Նկարագրելով բանտարկւածների այս սոսկալի չարչարանքները, որ հրէշտառ կառավարութիւն մը կը կատարէ, նկարագրեմ նաև փետրւար 16-ի (1893 թ.) արարողութիւնը, որ նւազ սոսկալի չէր. այն է մեր փոխադրութիւնը Կեսարիոյ բանտէն Գաղատիոյ բանտը: Այդ թւին կէս գիշերն անցած՝ ժամ մէկին, ամենք 200 հոգի Կեսարիոյ բանտն ենք գեռ, երբ յանկարծ անարկու ձայնով մը բանտի գռներն կը բացւին, կոշտ ու կոպիտ բանտապանները և զինւորները հրմշուկելով կ'արթնցունեն մեզ և կէս քուն կէս արթուն կը հանեն մեզ մեր անմոռանալի անկողիններէ. ոմանք չիմանալով ինչ կայ՝ ալլայլեալ կը մարին կիյնան, ոմանք կը դոզան ահ ու սարսափի մէջ, ոմանք հնազանդելով իրենց բաղդին խոժոռ լոռութեան մը մէջ կ'ելնեն: Վերջապէս կը հանւինք բանտէն դուրս. իւրաքանչիւրի վզին ու ձեռքերուն շղթայ և ձեռնկատ դրելէ յետոյ, զոյգ-զոյգ:

և երբեմն 4—5 հոգի իրարու կը կապւին և ապա կառավարութեան դոնէն դուրս կը հանւինք: Ո՛չ ոք գիտէ թէ մւր կը տարւինք, երբ մէկէն կը տեսնենք այնտեղ նախապատրաստւած կառքերու երկայն շարք մը: Զինւորներու ու ոստիկաններու անպատճառ աբեր աջակցութեամբ կը լցւինք այդ չոր ու մերկ կառքերու մէջ, ոչ մաշկեակ կամ վերմակ, ոչ բազմոցի նման բան մը և ոչ իսկ ցրտին ու ձիւնին գէմ պատսալարելու ծածկոց մը. շատերուս ոտքերն են բուրիկ և զլուխը բաց, որովհետև ազօտ ճրագով, խորամութ բանտի մէջ հազիւ թէ վրանիս հագնելու միջոց ունեցանք, այնքան աճապարել կուտային մեզ: Վերջապէս զիշերւան խորին մթութեան մէջ, ևստիկ ձմեռով մը այդպիսի վիճակով ճամբայ ելանք՝ հեծեալ բազմաթիւ ոստիկաններու, պաշտօնեաններու և զինւորներու հակողութեամբ, բայց ուր՝ ոչ ոք գիտէր. կառուղին միայն կ'իմացներ մեղթէ Գաղատիա կերթանք, որ կառավարութեան կեղրոն է Կեսարիոյ և Եօզկաթի համար: Ամբողջ եօթն օր այդպիսի դժբաղդ և վերջին ծայր թշւառ ճանապարհորդութիւնն լրինք, երեկոները գոմերու մէջ հակողութեան տակ և քարերու, չարդերու, հողերու և տղբերու վրայ, իսկ ցորեկները ցրտաշունչ քամիէն, փոթորկէն, ձիւնէն ու անձրեէն կառքերու պատառուած ու խարխուլ ծածկոցներու տակ կքած ու չոքած՝ վերջապէս հասանք Գաղատիայ ուղղակի բանտը: Ճանապարհի չարչարանքներն ու տառապանքները լաւ հասկցնելու համար բաւական է ասել, որ Գաղատիոյ վատքանան արքայութիւն երեցաւ մեղ ամենուս համար: Անցան ժամանակներ, օրեր, ամիսներ, որ կը գտնուինք այստեղի բանտին մէջ և կը սպասենք մեր գատավարութեան, որ մօտերս պիտի տեղի ունենայ: Բայց այդ սպասումին մէջ մենք մեր ընկերներէն պիտի կորցնենք, որովհետև շատերը խիստ հիւանդացած են և այս օրերս ցոյժցաւալի կորուսու մը ունեցանք. մ' եռաւ Արսէն Տէօքմէն ճեան անուն 23 տարեկան երիտասարդը, որոյ ընդունակութիւններն ու բնութեան ազնւութիւնը խիստ սիրելի էին և ապագայ մը խոստացող: Արսէնը շատ չարչարանքներ կրեց բանտին մէջ. նա շատոնց արդէն հիւանդ կ'երեւէր, երբ մէկէն վերջին 15 օրւայ մէջ հիւանդութիւնը սաստիկացաւ և մահը չափշտակեց: Խեղճը իրմէ մեծ եղբայր մը ունէր բանտի մէջ, բայց ոչ եղբայրը և ոչ այլ ոք թող տւին տեսնելի հետը...»

Գաղատիացի Գատավարութիւնը Վեց ամիս բանտարկւած վիճակում ողահելուց և վերև նկարագրւած անասելի առաջանքների ենթարկելուց յետոյ՝ վերջապէս 1893 թ. Մայիս և Յունիս ամիսներում դատի ենթարկւեցան 56 հոգի, որոնցից 14-ը անդարտ արձակւեցան, իսկ մնացոծ 41 հոգին՝ իրրև անդամներ Հնչակեան կուսակցութեան՝ անբաստանւած այլ և այլ յանցանքներում, դատավարութեցան 17 հոգի՝ մահւան, 6 հոգի՝ 15 տարւայ, 8 հոգի 10 տարւայ և 10 հոգի, որոնց մէջ մի կին, 7 տարւայ բերդարգելութեան Վերջը, սեպտեմբեր ամսում, Տիգրան Կիւլպէն կենաց, մարզուանցի, 25 տարեկան, ուսուցիչ, ևս դատավարութեցան 10 տարւայ բերդարգելութեան:

Այդ դատավարութեան ընդարձակ տեղեկագրութիւնը, որ իր ժամանակին զետեղւեց «Արևելքի», «Հայրենիքի» մէջ և տաճկական թերթերում, կանխապէս գրւած ու խմբագրւած էր թիւրք կառավարութեան ձեռքով, որը ջանացել էր դուրս նետել՝ այն մի շարք գեղեցիկ սպասարկական ճառերը, որ արտասանել էին դատավարութեան միջոցին ամբաստանւածներից ոմանք, և անիմսնալի կերպով խեղաթիւրել, ազաւաղել էր հայ ամբաստանւածների ասածները թէ նախնական հարցաքննութիւնների և թէ դատավարութեան միջոցին: Տաճիկ կառավարութեան այդ տեղեկագրութեան մէջ որքան էլ ամեն ջանք թափւած է տարօրինակ, տղեղ, ստայօդ երբեմն մինչև իսկ վատ ներկայացնելու հայ ամբաստանւածներին, այնուամենայնիւ ուշադիր ընթերցողը նոյն իսկ տաճկական տեղեկագրութեան մէջ կը գտնէ շատ կէտեր, որոնց մէջ պարզ երեսում է անբաստանւածների կատարեալ ազնւութիւնը և հարցաքննութիւններում, տանջանքների տակ ու դատավարութեան մէջ նոցա բռնած օրինակելի, անվախ ու գեղեցիկ ընթացքը: Այսուեղ սակայն պէտք է ասենք, որ այդ 41 ամբաստանւածներից գուրս կար մէկը, կեսարացի Ռուբէն Ճէւահիքեան անուն անձը, որ տեղեկագրողի (մուխալիր) ստորգերը կատարեց և դրա համար ազատ արձակւեց, ի հարկէ իբր քաջալերութիւն իր անամօթ արհեստին:

Ներքեւ առաջ ենք բերում 41 դատավարութածների անունների ցուցակը:

- Յուցակ հաչ դատապարտածների Գագատիազում  
ա) Մահան դատապարտած.
- 1) Անտոն Ռշտոնի, Կ. Պօլսեցի, 45 տար., խմբագիր և ուսուցիչ
  - 2) Կարապետ Թոռմալեան, Մարգւանցի, 45 տար., ուսուցիչ Կոլէժի
  - 3) Յովհան. Գալաեան, Մարգւանցի, 28 տար., ուսուցիչ Կոլէժի
  - 4) Յակոբ Պահլաւունի Կէմէրէքցի, 42 տար., վաճառական
  - 5) Կարօ Քէրտմէնեան: Թալասցի, 24 տար., ուսուցիչ
  - 6) Մարտիրոս Ճիւանեան, Էւքարացի, 19 տար., ուսուցիչ
  - 7) Դանիէլ Վարդապետ, Տէրէվանքցի, 42 տար., վանահայր
  - 8) Կարապետ Ալանաձեան, Կեսարացի, 28 տար., վաճառական
  - 9) Յակոբ Ճէպիտէլիքեան, Կեսարացի, 30 տար., շաքարավաճառ
  - 10) Բարսեղ Տէօքմէնեան, Կէսարացի, 27 տար., վաճառական
  - 11) Միսակ Քէչէնեան, Խօզկաթցի, 34 տար., ուսուցիչ
  - 12) Միսակ Եազըճեան, Թալասցի, 23 տար., կառապան
  - 13) Թորոս Մառուկեան, Կիւրինցի, 22 տար., վաճառական
  - 14) Կիւլպէնկ Համալեան, Թալասցի 20 տար., հիւսն:
  - 15) Յովհ. Արզումանեան, Կեսարացի, 28 տար., քանդակործ
  - 16) Միհրիճան Խանապախեան, Թալասցի, 24 տար., հիւսն:
  - 17) Փանոս Եազուպեան, Թալասցի, 30 տար., հրացանաեործ
- բ) 15 տարի քերդարգելութեան
- 18) Մկտիչ Փափազեան, Մարգւանցի, 28 տար., խանութպան
  - 19) Յարութիւն Գարակեօզեան, Մարգւանցի, 25 տար., խանութպան
  - 20) Մարտիրոս Գալուստեան, Կէմէրէքցի, 40 տար., քարոզիչ
  - 21) Գաբրիէլ Վարդուկեան, Էւէրէքցի, 28 տար., կօշկակար
  - 22) Կարապետ Կիւրինեան, Թալասցի, 26 տար., նամակաբաշխ
  - 23) Յակոբ Թապազեան, Թալասցի, 42 տար., ժամագործ
- գ) 10 տարի քերդարգելութեան
- 24) Սենեքերիմ Քէպսապեան, Խօզկաթցի, 23 տար., ուսուցիչ
  - 25) Միհրան Վարդանեան, Զորումցի, 28 տար., խանութպան
  - 26) Յակոբ Տէօւլէթեան, Պալակասացի, 44 տար., խանութպան
  - 27) Ստեփան Պօլանեան, Էւքարացի, 25 տար., հարկահան
  - 28) Մուշեղ Զօրլուեան, Խօզկաթցի, 30 տար., կաղապարիչ
  - 29) Յակոբ Զօլագեան, Կեսարացի, 25 տար., կօշկակար
  - 30) Մամաս Ռէնանեան, Կեսարացի, 22 տար., մսավաճառ
  - 31) Յարութիւն Միմօնեան, Թալասցի, 48 տար., ապիստարար
- դ) 7 տարի քերդարգելութեան
- 32) Տիկին Մըրուհի Քէլլէնեան, Էւէրէքցի, 26 տար., տանտիկին
  - 33) Արսէն Գալֆաեան, Թալասցի, 33 տար., փաստաբան
  - 34) Շաւարչ Եսաւէան, Թալասցի, 40 տար., ուսուցիչ

- 35) Ղազարոս Աստեան, Հաճիգիւղցի, 24 տար., խանութպան։  
 36) Գալուստ Ուզունեան, Հաճիգիւղցի, 25 տար., վաճառական։  
 37) Սարգիս Մյաթիւեան, Հաճիգիւղցի, 30 տար., ուսուցիչ։  
 38) Խաչատուր Օղլագէնեան, Հաճիգիւղցի, 25 տար., ոստաչնանկ։  
 39) Բ ոմաննէս Տիրացուեան, Կէրմիրցի, 33 տար., կառապան։  
 40) Դանիէլ Գասաբարսեղեան, Կեսարացի 26 տար., ոստաչնանկ։  
 31) Յովհաննէս Գարաքիւլանեան, Կեսարացի, 21 տար., սպասաւոր։

— Բանտարկեալներ Բաղէշի (Բիթլիսի) բանտում։  
 Բաղէշը, որը գլխաւոր քաղաքն է մի նահանգի, որի մէջ մտնում  
 են նաև Մուշտի գաշտը և Սասունը, մէկն է հայ բանտարկեալների  
 ամենանշանաւոր կենտրոններից։ Այլտեղ էր որ երեք տարի գործեց  
 հայերի արիւն ծծողը և մեծ կաշառակեր Թահնին փաշան, մինչ  
 ներկայ թւականի վետրւար ամիսը, նա, որի անմիջական ձեռըն-  
 տութեամբ կատարւեց նաև Սասունի կոտորածը։ Բաղէշի կենդրո-  
 նական բանտում եղածների և սոցա հասցրած տանջանքների մա-  
 սին տեղեկութիւններ տրւեցին մեր տեղական հայ թերթերում։  
 թէև ոչ լատ ամենայնի իրար նման, որ ինչ վերաբերում է բան-  
 տարկւածների թւին և նոցա անուններին։ Առաջ բերենք մի  
 տեղեկագիր, թւադրած Բաղէշ, մարտի 28 և տպւած «Մշակ» լրա-  
 գրում 1895 թ., որ կը լրացնենք «Մուրճ»-ին ուղարկած տեղեկու-  
 թիւններով։

Բաղէշի բանտին մէջ կան 7 խցիկներ, 10—12 մարդ պարունա-  
 կիլու չսափ մեծութեամբ <sup>1)</sup> բայց իւրաքանչիւրի մէջ կան ակժմ 20—30  
 բանտարկեալներ, իրարու վրա խռնւած <sup>2)</sup>։ Առողջապահիկ ոչ մի միջոց-  
 ներ չկան։ կենդաննեաց զարշ արտաթորութիւնք, մարդկանց կրկղանք,  
 մլուկ, լու և ողիլ կուտակւած են բանտարկեալների հետ նոյն խղիկներու  
 մէջ։ Բանտարկեալ հակերը իրենց պիտուքը կը հոգան միմիայն դուրսէն  
 զափթիաններու միջնորդութեամբ և այս պատճառով ստիպւած են ամեն

<sup>1)</sup> Յօդւածագրի ասուածից որոշ չի հասկացւում թէ բոլոր 7 խցիկների մեծութիւնն է ալլ, թէ ամեն մէկ խցիկինը։ Ման. Ա. Ա.

<sup>2)</sup> Ուրիմն 200—360 հոգի։ Խակ համաձան մի ալլ աղբիւրի (Արձա-  
 գանք, № 82, թղթակցութիւն թւագրած Բաղէշ լունիս 30, ստորագրած  
 Բ-ի) Բաղէշի կենդրունական բանտում «գելարանների տակ հայ բանտար-  
 կեալ կա 70-էն աւելի», Ման. Ա. Ա.

անգամ՝ կրկինը վճարել։ Զրկւած արտաքին աշխարհի հետ ուղղակի չարաբերութիւն ունենալիէն, զուրսէն ուղարկւած նամակները երբէք չեն հասնիր իրենց հասցէին, և ինչ որ նոցա թուլ տրւի գրել, պէտք է լինի անպատճառ տաձկերէն, որի համար կը ծախսին 2 զրուց, և կամ նոյն գնով տոխաւած են հատուցանել զափիթիաներուն նրանց օրական կերակուրը։

Ըստ օրինաց, իւրաքանչիւր բանտարկեալ պիտի ստանալ 300 գրամ հայ. բայց իսկապէս կը ստանան 250 գրամ միան, այն էլ խիստ կեղտոտ և վատ եփւած, Եւ լաճախ ալս մնունդն իսկ կը զլանան, Զուրը խմիլ անհնար է. հայերը չաճախ կը խմեն «խուլաճի» ջուրը, ալս տակառներու մէջ մնացած ջուրն է, որ թուրքերը գործ նն ածել իրենց աբտեստի (կրօնական մաքրութեան) համար—և եթէ մին հտմաքակի ալս մտախն բողոքել և արգարութիւն պահանջել, իսկոն և եթ կը ձգւի մութ «զառապեղներու», որտեղ հայերը տաձկաց վայրագ քմահաճոչից գերի կը դառնան։

Ահա բանտի մէջ պատահած դէպքերը.

Գասպար Խապօքեան, Մուշի Աւզուդ գիւղէն, բանտապահը երկաթեաէ կուտ շղթաներով հարւածելով՝ ալս մարդու զլուխը և ձեռքերը բոլորովին ջախջախուի է։

Սիրուն Մանուկեան՝ վարդենիցի (Մուշ). զափիթիաները բոնութեամբ զանակոծել են և խեղդել։

Միհրան Դամատեան, կ. պոլսեցի, բռնւած Մուշի մէջ. խիստ կերպով զանակոծւած և չարչարանքներու ենթարկւած, Մէկ ոտքը ջախջախած, ոտքերը և ձեռքերը շղթանկապ ուղարկեցաւ Բաղէշ<sup>1)</sup>։

Մելօ Միսէլեան, Վրդո Պօղոսեան՝ մուշէղաչէնցի (Մուշ). անքան չարչարեցին բանտի մէջ, որ արձակւելէն մի քանի օր լետոյ մեռան երկուքն ալ։

Մկրտիչ Մղերդյեան՝ բաղէշցի. բանտէն աղատւելէն լետոյ անմիջապէս մեռաւ, դառն չարչարանաց հետեանօք։

Կիրակոս Աստուածատուրեան, Մօղըկանի դոնկրցու գիւղից. մեռաւ բանտի մէջ խիստ չարչարանքի միջոցին։

Մարտիրոս Մահակեան, Քդի գաւառի Արտղոնքերդ գիւղից. գրաւեցին ունեցած տաս օսմանեան լիրան և ալնքան խիստ կերպով չարչարեցին, որ 15 օր բանտարկութենէ լետոյ մեռաւ Բաղէշի բանտի մէջ։

Մալխսան Աղաճանեան, Մերոք Մալխսանեան՝ Աւզուդցի. անխիղճ կերպով զանակոծելէն լետոյ Մալխսաը չիկացած երկաթներով 8 տեղէ և

<sup>1)</sup> Դամատեանի մասին աւելի լի ու լի տեղեկութիւններ մեր ընթերցողները դեռ կը գտնեն քիչ ներքեւ։

Սերոբը 12 տեղէ դադեցին. մէկ զափթիէ իւր ... դրաւ Սերոբի բերնի մէջ:

Յակոբ Սերոբեան՝ Աւզուղցի. մերկացուցին զգեստներէն, հանելով նոյն խսկ շապիկ ու անդրվարտիկը, այնքան դանակոծեցին, մինչև որ ուշաթափ ընկաւ. այն ժամանակ երկաթեաւ անուր անցուցին պարանոցէն և ենթարկեցին զափթիաներու բռնաբարութեան և ապա ատրաշէկ պատերով 16 տեղէ դադեցին մարմինը. Հինգ օր գիշեր և ցերեկ, անօթի և ծարաւ ստիպեցին նորան լստընկալս մնալ. կրկին հարւածեցին փետելով մազերը<sup>1)</sup>:

Սրգօ Մինասեան, կարապես Մալխասեան, Գրօ Աստուածատուրեան՝ Աւզուղցի. խիստ կերպով գանակոծեցին, ստիպեցին երկար ժամանակ մնալ լոտընկալս և զլուխներու վրա թափեցին այն ամաններու պարունակութիւնն, որոնց մէջ բանտարկեալները սովորաբար կը հոգալին իրենց բնական կարիքը:

Խաչէկ Մինասեան. Մէջ չառւշը, պարան մը վիզը ձգած, աչնչափ քաշ տւեց, մինչև որ ուշաթափ գետին ընկաւ: (Յիշեալը մշեցի էր):

Գորգէ Մարտունիան՝ Շատախի Սէմալ զիւղէն, ենթարկւեցաւ անգութ և սարսափելի գանահարութեան, քաղեցին բոլոր մազերը մի առմի, ստիպեցին ոտընկալս մնալ ամբողջ 24 ժամ. այն ժամանակ մելազիմ Հաճի Ալի, բանտապահ Արդուլ-Քաղիր, ձեռքերը ու զլուխը միասին կապելով, ոտքերը իրարու հետ միացնելով իրբեւ շէթ ան թոփի (սատանի գնդակ, մի տեսակ խաղ) ոտներով աքացելով իրարու կը նետէին, և ալսպէս շարունակեցին մինչև որ հոգին աւանդեց: Գորգէ 43 տարեկան էր:

Գասպար Սիմոննեան՝ խարսեցի (Մուշ). Մէջ չառւշի, Խոքէնտէրի, և Հաճի Ֆայիմի հրամանով զափթիաները ծեծեցին 9 օր շարունակ, շէթան թոփի անելով վերոլիշեալ կերպով և բռնաբարելով մինչև որ մեռաւ, 35 տարեկան հասակում:

Միփթար Սափարեան, Խաչօ Բալուեան խախարլուցի (Բուլանըխ). սուաջին 15, խսկ երկրորդը 13 տարեկան, զափթիաներու լափիր բռնաբարութեանց և անսանձ կրից զոհ եղան երկուքն ալ:

Սողօ Շարուեան ալւարինջցի (Մուշ). 9 հոխանոց երկաթեաւ անուր վզին և ծանրագոյն շղթաներ ոտքին, քէլէ փէն եր (ձեռնակապ) ձեռքին, ուզարկեցին Մուշէն Բաղէշ. ամբողջ 3½, ամիս զափթիաները զնապահեցին իրենց սենեակներու մէջ. ինտոք երկար ժամանակ ստիպեցին զնա մնալ անսւաղ, գանակոծելով շարունակ, անպատկառ կերպով բըռնաբարելով, և երբ այն խիստ տանջանաց տակ կը նւաղէր, խսկոյն պաղ

1) Սեր տեղեկութեան հսմեմատ՝ Յակոբ Սերոբեան մեռաւ:

Ծան. Ա. Ա.

ջուր լեցնելով կը վերակենդանացնէին և կը վերսկսէին չարչարանքները՝ Քաղեցին մազերը, շիկացած երկաթներով դաղեցին մարմինը։ Սովոր Դամատեանի ծառան է և 30 տարեկան հասակում։

Սաղաթէլ Միրզոյեան՝ Խոշկէլտեցի (Բուլանուխ), անօթի և ծարաւստիպեցին երկար ժամանակ չոտնկալս մնալ, փետելով մազերը, անխըդճօրէն գանակոծելով և պարանը վիզն անցուցած քաշ տալով. երկու անգամ նւազեցաւ. բանտապահը կապեց զնա սանդուզի վրա և կօշիկներով սկսաւ հարւածել երեսը, լանջը և կունակը, թքնելով միանգամայն բերանում։

Մարգար Մանուկեան՝ վարդենիսցի. զափթիաները չարաչար կերպով գանակոծեցին Մուշեղաշինի մէջ. Բաղէշ բերելիս ճանապարհի վրայ կը ստիպէին զիրենք շալկել և տանել, և երբ ուժաթափ կ'ընկնէր գետին, կը սկսէին գաւազաններով հարւածել անխնալ. Մէկ ամբողջ գիշեր պահեցին կաշկանդւած ձիան կոլտերու մէջ. երեք օր շարունակ, զիշեր և ցերեկ, նօթի և ծարաւ, թով չտւին քնելու և ոչ իսկ ծխելու, որին չափազանց մոլի էր. և վերջու հրապարակաւ կախաղան բարձրացրին Բաղէշի մէջ շագանակութիւն։

Եղել են դէսլքեր, որ տանջանքներից ազատւելու համար բանտարկւածը ընդունել է մահմեդականութիւն։

Ահա մի այզպիսի դէսլք նոյն Բաղէշի բանտարկւածներից։

Գիոնիկցի ուս Յակօ, չկարողանալով տանել Դաշխանէ բանտի աներեակաւելի տանջանքները, բարւոք համարեց ընդունել մահմեդականութիւնը, և արդարե, չնորհիւ դորան՝ թեթեացաւ նորա վիճակը և լուսալի է անգամ, որ մօտերքս ևս ազատւի (քաղած մի թղթակցութիւնից, թւագրած Բաղէշ ապրիլի 3)։

Իուանեան Համբարձում (Մուրագ<sup>1</sup>)։

Այդպէս են ուրեմն կրած տանջանքները Բաղէշի բանտում։ Սակայն որքան հոգի քաղաքական գործերի համար բանտարկւած են եղած Բաղէշի բանտում այս վերջին հինգ տարիներս—այդ դեռ մնում է բաց խնդիր։ Բայց թէ որքան և յատկապէս որոնք են ներկայումս, այսինքն մինչև ներման հրաման արձակելլը, այդ մասին մենք ունինք մեր ձեռքի տակ «Մուրճ»ի մի թղթակցից ստացած մի ցուցակի, որի մէջ մենք գտնում ենք նաև անուններ, չչիշատակւած վերևի ցուցակում։ Դոքա են՝

Մշեցիք՝ Սոնեփան վարժապետ (վախճանւած), Վահան էֆէնդի

<sup>1)</sup> որի մասին դեռ խօսք կը լինի ներքեւ։

Վողեան (ներւած), Աղաբէկ Իղէնկիւճեան, Մուշեղ Յովհաննիսեան:

Ս. Կարապետ վանքի միաբաններից՝ Մովսէս սարկաւագ:

Բաղէշից՝ Մարգար Բագալեան, Մուշեղ Յովհաննիսեան:

Գոմերցի՝ Ղուկաս վարժապետ և ոչս Յովհաննէս:

Խաչգեղցի՝ Ոմն Գասպար (վախճանւած):

Բացի այդ՝ մեզ յայտնի են նաև 29 հոգի, որոնց մի մասի միայն անուններն են յայտնի բացց ոչ ազգանունները, իսկ միւսների մասին յայտնի չէ ոչ անունը և ոչ որոեղացի լինելը:

Մտնում են այդ մեզ անյայտ ազգանուններով բանտարկեալների մէջ նաև 17 հոգի մի խումբ բայց տարկեալներ, որոնք ձեռբակալւեցին միաժամանակ Ս. Դանիէլի վանահացը Սիմէոն վարդապետի հետ 1893.ի վերջերը, — այդ հաստատ չգիտենք. բացց եղելութիւնը մեզ այսպէս է հասած.

Սիամանակ Սիմէոն վարդապետի դէպքի հետ՝ խուզարկութիւններ կատարեցին նոյն վիճակում Բաղէշի (Քիթլիսի) նահանգապետ Թահովին փաշացի կարգադրութեամբ մի բինբաշի (հազարապետ) ձեռքսվ, որ շրջում էր 15 զապթիաններով: Խջեանելով Կոփ աւանում Ղազարի օդագում, կանչեց իւր մօտ Խշէի-Մելիքի աղայ Մխիթարին և համզաշեխցի մեղ արդէն ծանօթ Ռշօփ աղայ Մխիթարին, որոնք չականէ անւանէ ցուց տւին իբրև էեղափոխականութեան պարագլուխների — Մշում՝ Գոնչովիան Մելիքին (նոյն և Մշեցի նալբանդ), Լզաէ Լեռն պատուիին (վարժապետ), Մուշտուլւաք ոչս Եղօխն և Գասպարին, Խոդղելուկուց բերել տւին Միրզօ Գասպար Միրզովեանցին, Կոփէցի Քերովիք վարժապետ Խլդատեանին, բաքարլեցի Բազգասար և Զաքո ոչմներին, ուրիշների հետ միասին ընդամենք 17 հոգու, որոնց բինբաշի քննիչը ներկայացրեց Քիթլիսի փաշալին, որը ծանր կապանքների մէջ բանտարկեց նոցա մութ և մահաշունչ զնդանում: Դոքա ամենքը ձեռբակալւելու ենթարկւեցին ծանր դանահաւալութեան, մինչև որ քննիչը, «մուխապիրների» (զաւածաններ) միջոցով, կաշառք չստացաւ ամեն մէկից. ատպէս՝ Մելքոնի հարազատները տւեցին մուխապիրներին 20 ոսկի (լիրա), 8 հալապի մահուդ և երկու կտոր պարսկական ընտիր շալ. դորանից մի մասը տրեց քննիչին. ոչս Եղօն և Գասպարը վճարեցին 10-ական ոսկի, Միրզայեանը 5 ոսկի, Քերովիք վարժապետը 10 ոսկի. Բաղզասար և Զաքո ոչմները՝ 22 ոսկի: Բայց կաշառքը միայն գանահարութիւններից ազատւելու համար էր և ոչ բանտարկութիւնից:

Բանտարկեալների բարեկամները դիմեցին Բ. Դուռն, ապացուցանելով նոցա անմեղութիւնը: Զինուրական քննիչին կանչեցին Ա. Պոլիս, ուր, համոզւելով նոցա անմեղութեան մասին, շատացան միմիայն պաշտօ-

Նանկ անելով քննիչին և խիստ լանդիմանութիւն կարդալով շահախնդիր գալիմադամին իւր «առախօս» մուխպիրներով»<sup>1)</sup>:

Այդ 17 հոգուց գուրս՝ նոյն այդ ժամանակները, այն է Սիմեոն վարդապետի հետ միասին, որպէս մեր ընթերցողները կը տեսնեն այդ վարդապետին նւիրած տողերից, ձեռքակալւեցին հոդօնցի Արէ Թմօ, 10 հոգի Համզաշէխ գիւղից և 3 հոգի ուսուցիչներ, որոնցից 3—4 հոգի, որպէս մեզ յայտնի է, Աքիա պքսորւեցին, մնացածները, երեխ, Կոփի, Մուշի և հաւանականաբար յետոյ Բաղէշի բանտը փոխադրւեցին:

Այսպիսով ուրեմն մեզ յայտնի են 110 հոգի Բաղէշի բանտում եղած հայ քաղաքական գործերի համար բանտարկւածներ, ոմանք վախճանւած, ոմանք արձակւած, իսկ մեծ մասը մինչ յուլիսի 13-ը մնացածներ:

Այդ ամբողջ թւից 21 հոգի, որպէս մենք տեղեակ ենք, Համբարձում Բոյեածեանի ընկերներն են՝ Մուշից փոխադրւած Բաղէշի բանտը:

Բաղէշի բանտում եղածների մէջ առանձին ուշք են գրաւում Միհրան Դամատեան և Համբարձում Բոյածեան-Մուրադ:

Միհրան Դամատեան: Սորա մասին Դէյլի Նիւսի թղթակիցը տւեց այդ թերթի համարում առ 29 ապրիլի հետևեալ տեղեկութիւնը. «Դամատեանը մի ուսուցիչ էր Մուշում: Թիւրքերը կասկած ունեին թէ նորա գովրոցն է կենտրոնը շրջակայքում նիւթւող գաւադրութեան: Այդ գովրոցի բոլոր վարժապետները մի քանի անգամ ամբաստանւած էին իբրև գաղտնի ընկերութեան անդամներ: Դամատեանի նախորդներն ուսուցչական պաշտօնում՝ պ.պ. Փորտուգալեանը և Սարիցեանը՝ աքսորւած էին: Նոյն ինքն Դամատեանը, որ արգելւած ընկերութեան ամենից ընդունակ, ամենից հաստատակամ և քաջարի անդամն էր, ձեռքակալւեց Մուշում 1893 թ. յունիս ամսին և Բիթլիս (Բաղէշ) տարւեց: Ճանապարհին զինուորները հրացանի կոթով նորա ոսր կոտրում են, որպէս զի նա չկարողանաց փախուստ տալ: Թահսիմ փաշան շատ տան-

<sup>1)</sup> Համեմատէք նաև «Արձադանք» № 45, «Մուխպիրներ» լողւածը, Կրպէ ստորագրութեամբ, թւագրած Քիշնե, 1895 մարտ 29.

ջրւմ և հարց ու փորձում է նորան Բիթլիսում և վերջապէս 1893 թ. դեկտեմբերին ուղարկում է Ա. Պոլիս: Այնտեղ մահման են գատապարտում Դամատեանին, բայց, դեռ վճիռը չիրագործւած, նա անհետանում է: Խւր բարեկամների ասելով նա ճողովրել է բանալից Պոլիսը տառանող երկրաշարժի ժամանակ (1894-ին). իսկ թշնամիները տարածում են թէ նա գնել է խւր ազատութիւնը Սասունի կոտորածին մեծապէս նպաստող մերկացումներ անելով: Ի պատիւ Դամատեանի սղետք է նկատել թէ նորա դէմ այդպիսի ամբաստանութիւն անողը մի մօլիունդ լուսաւորչական հայ է, որ վստահանում է պնդել թէ կաթոլիկ Դամատեանը դաւադրութիւն նիւթելիս՝ ուրիշ ոչ մի նպատակ չի ունեցել, բայց միան կործանել Գրիգորեան եկեղեցու անդամներին:

Դէյլի Տելեգրաֆի թղթակիցը խւր վեցերորդ սղոստացին նամակում տեսք այս կարծ տեղեկութիւնը. «Դամատեան, որ մի քանի ժամանակ առաջ բռնւեց թիւրքերի ձեռքով, բայց յետոյ խորհրդապէս անյայտացաւ»:

Դամատեանի մասին յայտնի է որ նա բանաստեղծ ևս է և նորա երգերը ամենասիրուածներիցն են Տաճկա-Հայաստանում:

Համբարձում Բոյեաճեան (Մուրալ): Այդ նշանաւոր գործիչը մեր ընթերցողներին արդէն յայտնի է «Մուրճ»-ի անցեալ համարից, ուր բերւած էր սեփական վկայութիւնը իւր բանապէն կեանքի մասին: Բացի իւր սեփական վկայութիւնից, մենք ունինք նաև տեղեկութիւններ հայկական թերթերից Համբարձում Բոյաճեան-Մուրալի կրած չարչարանքների մասին, որոնք չեն շեղւում մեզ արդէն յայտնի տեղեկութիւններից: Ահա, օրինակ, ինչ տեղեկութիւններ ենք դանում «Մշակ» լրագրի նոյն այն թղթակցութեան մէջ, թւագրած Բաղէշ<sup>1)</sup>, մարտի 28, որ արդէն մի անգամ յիշել ենք վերև:

Համբարձում Բոյաճեան (Մուրալ), Հաճինցի (Մզմանա), ձեռքակալւաց Հարտք գիւղի ալրի մէջ 23 օգոստ. 1894-ին: Երեք օր շարունակ արեի տակ թողեցին, մինչև որ հիւանդացաւ, օգոստոսի 28-ին զինւորները Համբարձումին իր ընկերներով միասին բերին Սէմալ՝ Զեքի վաշակի մօտ: Ակստեղ խիստ կերպով գանակոծւեցան և բանտարկւեցան եկե-

<sup>1)</sup> Բաղէշ հայկական անունն է Բիթլիսի: Ծան. Ա. Ա.

զեցու մէջ. նոցա թով չէին տար եկեղեցուց դուրս գալ իրանց բնական կարիքը հոգալու։ Ամբողջ երկու ամիս Համբարձում իր 21 ընկեր ներով բանտարկւած մնաց Մուշի բանտում. մէկ ամսւակ ընթացքում նոցանից 5-ը մեռան խիստ չարչարանաց հետևանօք. ամենաքը շղթաչափ էին. Բաղէշ ժամանելուց 8 օր լեռով երկուս ևս մեռան, իր դատապարտութենէն 4 օր լառաջ Համբարձում խիստ տալատանաց ենթակաև եղաւ. 24 ժամ շարունակ անօթի և ծարափ՝ ստիպւց չոտնկալու մնալ. Սարսափելի կերպով բիրերով կը ծեծէին, մազերը կը վետէին. 9 հոխա ծանրութեամբ երկաթեաէ շղթաներ ձեռքն անցուցած, ոտնակուպերը աւելի ծանր. Ալֆմ և նա ենթակաև է մշտական է չարչարանաց. շղթաները աւելի ծանրացած են. քիւրդերը կը հրճէին նորան ավանելով և հարւածելով. Նա ալֆմ բանտում արտաքոյցները մաքրելու պաշտոն է վարում։

Նոյն լրագրի մի այլ թղթակցութեան մէջ (Եկոր սառրագրութեամբ, թւագրած Բաղէշ, մարտի 5-ին), Մուրադի մասին կարդում ենք.

Նւրոպական քննիչներին արւեց և Համբարձում Բոյանեանի գործը Թահսին փաշափի պաշտոնանկ լինելուց<sup>1)</sup> առաջ Մուրադի համար, որ Սասունում բռնւած և իր ընկերներով բանտարկւած էր Բաղէշի մէջ.—մահւան պատժի վճիռ էր արծակւած. Սական նախ քան նրան կախազան հանելը, և. Պալսից եկած հրամանի համաձան, աշխատում էին նրանից թուղթ առնել, որ նա ապստեղեցրել է սասունցիներին անգլիական հիւպատուների դրդմամբ, որոնք նրան խոստացել են փող և օգնութիւն, եթէ հայերը ապստամբւին. Նոյն իսկ բանտապետը, գիշեր ժամանակ, նրան վախեցնելու համար, երկու անգամ կախազան է բարձրացրել,—բաց անընկնելի Մուրադը մերժելով մերժել է ալդ տեսակ սուտ ցուցմունք տալ.

Թահսինի պաշտոնանկ լինելէն լետու, թէ Մուրադի և թէ Բոլոր բանտարկեաների վիճակը թեթեացաւ. Նրանց պարանոցի և ձեռքերի ու ոտքերի շղթաները հանեցին և թով տեցին որ մի փոքր չունչ քաշեն. Հաստատ սլատմում են որ բանտարկեալներն էլ բողոքներ են հասցրել եւրոպական քննիչներին.

Բանտարկւած ծները Վանում:

Այն ինչ որ էր Թահսին փաշան Բաղէշում, հայերին բանտ նստեցնելու նկատմամբ, այդ նոյնն էր Թահսին փաշան Վանում։ Մենք

<sup>1)</sup> Թահսին փաշան պաշտոնանկ եղաւ վիւրու. 16-ին. Ծան. Ա. Ա.

ունինք տեղեկութիւններ նախ 104 հոգու բանտարկութեան մասին, սկսած 1892 թւականից մինչև վերջը 1894 թւականի:

Վասպուրականում (Վանինահանդ) 1892 թւականի ընթացքում (Բահրի փաշայի պաշունավարութեան ժամանակ որ նորերս միացնալաշտոնանկ եղաւ) բանտարկւեցին 48 հոգի, որոնցից մինչ այս վերջին ամիսներս միայն 25 հոգու գործը քննւած էր. զոյցանից չորսին ոստիկան նաբիի սպանման գործի համար՝ վեցամեայ բանտարկութեան են դատապարտւած, տասը հոգի իբրև յեղափոխական կոմիտէների (իսկական թէ կարծեցեալ) անդամներ՝ 3—3<sup>1</sup>/<sub>2</sub> տարւայ բանտարկութեան. չորսը իբրև (իսկապէս թէ կարծեցեալ) կոմիտէի գլուխներ — մահւան պառժի էին դատապարտւած. դոքա են՝ Մկրտիչ Մաքսապետեան, տէր-Սարգիս աւերակցի, ոչս Գէորղ, ոչս Կարապետ (ոչս կոչւում է գիւղական տանուտէրը). երկուսը՝ Փառուղցի Սերոբ և Շահէն, նոյնպէս իբր կոմիտէների անդամներ, դատապարտւեցին չորսամեայ բանտարկութեան: Մնացած 24 հոգին բանտերում մինչ ներկայ տարւայ մայիսը սովում էին իրանց գործի քննութեան! Դոցանից 10 հոգի կամեղցիներ են (Շատախի գաւառ), երկուսը վանեցի, մնացածները՝ զանազան տեղերից:

1893 թւականի ընթացքում Վանում բանտարկւել են 10-ից աւելի երիտասարդներ, իբր յեղափոխականներ (միւզիր):

1894 թւականի ընթացքում բանտարկւած են 46 հոգի: Սոցանից ութը հոգի բանտարկւած են իբր ամբաստանւածներ մի յինապետի սպանութեան համար. դոքա են՝ Մաթիաս Աէֆէրեան, Կարապետ Տէր-Յարութիւննեան (վանեցիներ), Սուրադ Բաղէշցեան, Աւետիս Սէֆէրեան, Մկրտիչ Տէր-Թումանեան 17 տարեկան, Ռաշիդ Յարութիւննեան, Վարդան Պլուզեան, Յակոբ Տէր-Մկրտչեան (շատախիներ) Դանիէլ Կարապետեան և Աւետիս Քէլէկեան — ամբաստանւած իբր փախատականների պատուարողներ. չորս հորի՝ Դանիէլ և Գէորգ վարդապետներ և սոցա ծառաները՝ Մանուկ և Յովհաննէս՝ ամբաստանւած են իբրև գիւղերում շրջող յեղափոխական քարոզիչներ. Սուրբ Վարդան գիւղից չորս հոգի՝ Մարգիս Յարութիւննեան, Վարդան Յովհաննէս Յովհաննեան, Յակոբ Բարսեղեան — ամբաստանւած են իբրև յեղափոխական կոմիտէների պատկանողներ. Գարեգին Բաղէշցեան (վանեցի) — իբրև փախատական և նախկին դատապարտեալ: Ներսէս Մալոյեան — իբրև թղթակից

արտասահմանեան թերթերի. 26 հոգի ամբաստանւած են Բողոք-Քեասանի կուի առիթով, որը, ինչպէս յայտարարեցին թիւրք լրագիրները, տեղի է ունեցել 1894-ի նոյեմբերի վերջերին. դոքա են՝ Խաչառուր Նաթանեան, Ռուբէն Նաթանեան, Արշակ Տէր-Յարութիւնեան, Խաչառուր Մահլէպաշեան, Դաւիթ Շաղոյեան (վահնեցիներ), Սարգիս Ասկոյեան, Պադար Յուսիկեան, Յարութիւն Մելիքեան, Մկրտիչ Վարդանեան, Յակոբ Գրիգորեան, Պաղսար Լաւորեան, Խանակ Մարգարեան, Բաղդասար Ինկոյեան, Այքնօ Բաղդասարեան, Թովմաս Մաթոսեան, ոմն Պօղոս, Յովսէփ Մրիպեան, Աղէքսանդր Պարզոյեան, Նազարէթ Բաղդասարեան, Մատթէոս Յովհաննիսեան, Պետրոս Ասգուրեան, Պետրոս Սահակեան, Սիանոս Վարդանեան, Ղազար Աւաղեան, Խաչառուր Այգագեան, Մանուկ Հախվերգեան: Այդ վերջին 26 հոգու ամբաստանութեան առիթով ահա թէ ինչ տեսակ վկայութիւններ են եղել: Բոնութեամբ 18 վկաներ են կանչում՝ քիւրդ, եղիդի և հայ, որոնց թւում և արծէցի Յովհաննիսը. վկաները, բացի վերջինից, բոլորն էլ յայտնում են թէ իրենք իրենց աչքով ոչինչ չեն տեսել, այլ միայն լսել են, որ այդ 26 հոգին Բողոք-Քեասանի էշգեաներից (աւագակներից) են. իսկ Յովհաննիսը իրեն ականատես է ձեւացնում և մի քանի զրպարտութիւններ է անում. բայց յետոյ, անդիմական հիւպատոսի և ուուսաց հիւպատոսարանի թարգմանի ներկայութեամբ, յայտնում է թէ իւր արածը զրպարտութիւն է եղած, որ նա ցոյց է տւել Թաքար աղասիի ճշնման տակ—կապւել, ծեծւել և խիստ տանջանքների է ենթարկւել, և թէ ինքը ապացոյցներ ունի որ կուի օրը Բողոք-Քեասանում չի եղել: Այս ցուցմունքներից յետոյ նորան իսկոյն բանտարկում են և տանջանքների ենթարկում: և ահա մի քանի օրից յետոյ նա կրկին հանդիսանում է իրը վկայ, և այս անգամ, ետ առնելով իւր վերջին ցուցմունքները, փորձում է հաստատել առաջւայ իւր արած ամբաստանութիւնը: Գորանից յետոյ նա արձակուում է բանուից...

Դոցա գոցա գործը քննւեց, որքան մենք տեղեակ ենք միշացուկ թղթակցութիւնից, ներկայ տարւայ մայիսի 4-ին միայն. դոցանից 18 հոգի անզարտ արձակւեցին. Մաքսապետեան, Գարեգին Բաղէշցեան և Աւերակի հիւսն կոչւած մէկը դատապարտեցին 101

տարւայ ուրեմն մշտընջենական բերդարգելութեան. Աւերակցի տէր-Սարգիսը նոյնակս դատապարաւած էր ցմահ բերդարգելութեան, բայց պատրիարքից կանչւած լինելով՝ թողին որ Կ. Պոլիս երթայց Յայտնի են նաև դատապարաւածներ 12 տարով՝ կալապենտութեան՝ Կինտոեան Յակոբ, 6 տարւան թիապարտութեան (քիւրէկ ճեզասը) Պէօշեօեան Աւետիս, Սեղրակ, Մելքոն, չաւուշի լաճ Աւետիս, Անտրկապողեան Յակոբ և իւր եղբայրը, Պազպաննի Նշան, Չաբիճեան, Քամբակդիզեան, Յար. Սոլքարոյցեան, Խաչառուր Խաթանեան, Վահան Սոսոյեան և Եօժէ հոգի Պողազ-քեսենցիներ: Վերջապէս 3, 4 և 1—2 տարւայ բայտարկութեան դատապարաւած էին Եսիկեան Միհրդատ, Մալոյեան Մովսէս, Պէլէքեան Սահակ, Սէմերճեան, Եիրոյեան, Շալճեան, Վեռնդ և Նազարէթ Կարոյեան<sup>1)</sup>:

—Յիսուն (50) արմանցոց բանտարկութիւնը Երզնկայում: Ալքան օղի Հաճի Գալուստը և իւր վեց ընկերները:

Պէտքը պատմւում է այսպէս<sup>2)</sup>:

1892թ. գարնան հւնիր Փեքլիւան անունով թիւրքը Բոլուկ-Արմատան<sup>3)</sup> գիւղացի խեղղւած և մասամբ ալրւած գտնւեց իւր անկողնում: Ո՞վ էր նորան սպանողը: Ամենից աւելի կասկածելին էր հարկաւ այն հաջո, որ Փեքլիւանի կնոջ հետ չարաբերութիւն էր ունեցել և հէնց նորա սպանութեան գիշերը փախել էր յատնի չէ թէ ուր: Սական դէպքի ազդ պարզ բացատրութիւնն ամեննեխն չէր չարմարում թիւրք պաշտօնեաների շահերին: Նոքա սկսան տարածել թէ Եսմեր Փեքլիւանը կառավարութեան գաղոնի լրաեսն էր, որին պատւիրած էր հսկել չատկապէս հայ «քոմիտակի» ետեից (ի գէպէ չիշել թէ ինչ սոսկալի նշանաբան էր թիւրքերի բերնում քոմիտաջի խօսքը՝ բոլղարներին կախելու համար), և իսկոչն ձեռքակալեցին լիսուն արմանցի հայ, մնջապարու համարելով նոցա Փեքլիւանի սպանութեան գործում: Այդ լիսուն հոգուն շղթաբակապ տարան Երզնկաչի բանտը: Նոցա թւում գտանւում էր և մերձաւոր վիճակի առաջնորդ Վարդահուլի տէր Վարդան եպիսկոպոսը, առաւել քան ութ-

<sup>1)</sup> Այս վերջին 30 հոգիք արձակւած են բանտից լուլիսի 13-ի հրամանով ներման մասին (Համ. Մշակ № 88 թղթ. վանից):

<sup>2)</sup> Համեմատել Պէլէք Նիւա 29 ապրիլի 1895թ.

<sup>3)</sup> Բոլուկ Արմատան և Գուչուկ Արմատան երկու գիւղեր են Էրզերումի նահանգի Երզնկաչի գաւառում, Կուրու-Զալի գաւառակում:

սունամեալ ծերունին, իւր փոքրիկ թոռան հետ, որ ճանապարհին մնում է:

Արմունցոց այդ գործի հետ թէև ուղղակի կապ չունի Ալքանօղլի Հաճի Գալուստի և ընկերների գործը, բայց թրքական արդարադատութեան մէջ այդ երկու ջոկ-ջոկ գործերը իրար հետ կապւեցին. այնպէս որ վերի պատմութիւնը իւր լրումը առանում է միայն այդ երկրորդ գործի հանգամանքների պատմութիւնով։ Ասցդտեղ ընթերցողները պիտի ծանօթանան նաև բանտարցին մի կարգի հետ, որով 57 բանտարկւածներից մի-երկու տարում կենդանի մնում են միայն 35 հոգի։ Ահա գործի հանգամանքները.

—Ալքանօղլու Հաճի Գալուստ և ընկերներ։ Միենան ժամանակ, երբ վշեալ 50 արմտանցոց լերզն են տանում, Արմունի գալմագամը, չուզենալով հաւերին կեղեքելու պատեհ առիթը բաց թողնել, սկսաւ մի առ մի ամբաստանել բոլոր արմտանցի հաւերին և բըռնել տւաւ ամենից առաջ Հաճի Գալուստ անունով երեսնամեաւ չքեղ տղամարդուն, որ Ալքանօղլուի հարուստ ընտանեաց ներկալացուցիչն էր։ Գաւաղրութեան լանցանքի մէջ մեղադրաւծ Հաճի Գալուստը փութաց վճարել գալմագամին 1000 լիրա և գորանով համոզեց նորան որ ինքը անպարտ է։ Բայց միայն առժամանակ, Գալուստի տան հարստութիւնը հոչակւած էր (40—50.000 լիրաի կարողութիւն) և քաջ լաւտնի է թիւրք պաշտօնեաներին։ Ալքանօղլուները խոհեմութիւն ունեին Արմտանում չպահելու իրենց տոհմական հարստութիւնը այլ զետեղել էին Կ. Պոլսի Օսմանեան բանկում։ Սակայն տան խուզարկութիւնից երևաց, որ ազդտեղ էլ գումար կայ և թիւրք պաշտօնեաները չափարարեցին թէ դա՝ դաւաճան «քոմիտա»-ի հանգամակած զրամագլուխն է։ Օսմանեան բանկը հաստատեց որ գումարը տարիներից ի վեր եղել է իւր մակը մատենում և անկասկած պատկանել է Ալքանօղլուի գերդաստանին և ոչ մի ուրիշին։ Պաշտօնական խոշոր տւազակների համար գա զգալի հարւած էր. բայց մանր զողերը դարձեալ շարունակում էին փող կորզել Հաճի Գալուստից և միւս հաւերից և դաւալիրութեան մէջ լանցանոր համարել նոցաւ։

1893 թ. սկզբին Հաջի Գալուստի փողերը (բայց Պոլսում ի պահեստ դրւած դրամից) երեխ թէ սպառւել էին և կամ թէ նա մտածելիս կը լինէր թէ բաւական է որքան իրեն կթեցին. նոչ և իցէ, այդ գարնան նա լեռները փախաւ վեց ընկերի հետ միասին,—բոլորն էլ զինւած մարտինիի հրացաններով։ Հաւանական է թէ նորան դէպի փախուստ դրդողն այն երկիւզը կը լինէր թէ նա իւր բոլոր հաստութեամբ հանդերձ երբէք չպիտի կարենար թիւրք պաշտօնեաների իւր դէմ լարած որողալ-

թից ազատւելու, Նամանաւանդ որ, ինչպէս կարծւում է, նա լարաբերութիւն ունէր Դամատեանի հետ:

Լեռներում Հաճի Գալուստը և իւր ընկերները մի քանի ամիս ապրում են լոյն պալիկարների նման, սական առանց որ և է վեաս հասցնելու ում և իցէ: Վերջապէս 1893 թ. լուսիսի 23-ին նոքա գարանում են Մելիսների կոչւած տեղում Տեֆայիա կազակի գալմագամին, որ մէջ-լիսի մի քանի անդամների հետ գնացել էր Երգնկազից մինչև կարաշաբար տանող ճանապարհն աչքից անցնելու համար, և լարձակում են վրան: Ազդ գալմագամին և նորա ընկերներին մի լաւ զմբելոց վետով՝ խլում են նոյց ռեւուէրները, բաց ուրիշ վեաս չեն հասցնում: Տեղական իշխանութիւնը գալմագամի գանգաւաը լսելուն պէս՝ զինւորների մի ստար վաշտ է ուղարկում Հաճի Գալուստի խմբի դէմ, որ փոքր ինչ հալածելուց վետով՝ պատսպարւում է մի մեծ քարայրի մէջ՝ Բոլուկ Արմտանի մօտերքում: Դոցա քարայր մտնելը տեսնում են մի զապթիէ (զինւոր) և մի պահապան, և մարդիկ օգնութեան կանչելով՝ սկսում են պաշարել քարայրը: Մինչև զինւորների և թիւրք ամբոխի վրա հասնելը՝ Գալուստի ընկերներից մէկը սպանուում է, իսկ զապթիէն՝ վէրք ստանում: Աւ-նուհետե բորբոքում է մի կոփու, որ տեռում է ամբողջ գիշեր: Առաւօտեան 26 լուսիսի 1893 թ., գիւղի քահանան և Հաջի Գալուստի մաքը, գալ-մագամի խնդրանոք, մօտենում են քարայրի մուտքին և աղաջում միջի մարդկանց՝ վերջ տալ արիւնհեղութեան, ասելով որ նոքա ներումն կը ստանան եթէ միան անձնատուր լինին: Նոքա անձնատուր են լինում ալդ պայմանով և շղթայակապ տարւում են Երգնկազի բանտը, ուր մինչև ապօր էլ նստած են: Մինչև 1893 թ. զեկուեմբերը նոքա չեն լիկում բանտի մէջ, թէն կառավարութիւնը մնունդ չի տալիս նոյցա: Հաճի Գալուստաը պարտաւորւում է կերակրել ոչ միան իւր հինգ կենդանի մնացած ընկերներին, որոնցից մէկը մեռնում է վէրքից, — առ և այն 50 արմտանցոց, որոնք բանտարկւած էին մի տարի առաջ դոք-տոր Փաշայեանի<sup>1)</sup> հետ միասին: Սական 1893 թ. Ծննդեան տօնի երեկուան թիւրք պաշտօնեաները գտնում են մի փախուստի գաւադրութիւն, որին հաւասար մասնակից էին եղել քրիստոնեաներ և թիւրքեր, և ալդ բոպէից սկսած քրիստոնեակ կալանաւորներին կապում են կրկին շըդ-թան երով, ձգում են զնդանների մէջ և շատ անդթարար վարւում հետ-ները: Իրբե հետեանք ալդ բանի, անցեալ 1894 թ. զարնան 57 հոգուց կենդանի է, ին մնացել 35-ը: 1894 թ. փետրւարին ալդ բոլոր հիւանդ կալանաւորներին կանչում են քննութեան, Քննութիւնը լինում

<sup>1)</sup> Ալդ Փաշայեանի մասին խօսք կը լինի իսկան:

է դունիքակի, Կալանաւորներին արգելում են փաստաբան հրավրել, թուզ չեն տալիս մինչեւ անգամ վկաներ կանչել, 57 հոգու ամբողջ զատը՝ հարցու փորձով, քննութեամբ և դատապարտութեամբ՝ տևում է միան մէկ նիստ: Այդ խաղը վերջանում է նորանով, որ կալանաւորներից 22 հոգուն դատապարտում են բանտարկութեան 101 տարի ժամանակով և 27-ին՝ տաժանակիր աշխատութեան՝ զանազան ժամանակներով:

Դատարանի վճիռը երկար ժամանակ գաղտնի էր պահում թիւրքիր կողմից, և միան Բրիտանական դեսպանի կրկին և կրկին գիմումների չնորհիւն է, որ վերջապէս անցեալ տարւազ վերջերին նոր մեծ վիզիրը հրապարակ հանեց նրան: Եւ նկատեցէք, թէ ինչ մեղադրական խօսք'ր է կցում նա դատարանի վճռի սպատէնին: «Նոքա ամբաստանւած էին, զրում է նորին վսիմութիւնը, բոլոր 57 կալանաւորներին ակնարկելով, մի փաշակի սպանութեան և ալրման համար, դաշմազամին մեծ ճամբու վրաչ կողոպտելուն համար և կազմերական զօրքի դէմ 38 ժամ կուելուն համար»: Այդ պարզամիտ մեղադրանքը, որ առանց առ և ալի խառնում է 1893 թ. ձեռքակալւած վեց հոգուն՝ բոլորովին ուրիշ բանի համար 1892 թւին բռնւած 51-ի հետ, և վերջինների լանցանքի համար մահւան դատապարտում և՛ս աւելի առաջ բռնւածներին,—մի գեղեցիկ արդարագատութիւն է,—զուտ և եղակի թուրքական:

Երզնկացի բերդումն էր, որպէս տեսանք, նաև զոքտոր Փաշալեան: —Դոքտոր կարապետ Փաշաչէ եան: 1892 թ. սեպտ ամսին դոքտոր կ. Փաշալեանը, որ Սըւազի անգլիական հանքավին ընկերութեան բժիշկն էր, հրաւէր ստացաւ Կարտ-Հիսարի դաշմաղամից որ իբր թէ շատ հիւանդ է: Բժիշկը խոկոն ճանապարհ ընկաւ և, Կարտ-Հիսար հասնելուն պէս, բռնւեց և շղթավակապ տարւեց Երզնկա: Նորա գէմ եղած ամբաստանութիւնը հիմնած էր զլիսաւորապէս մի հաւ ջորեպանի ցուցման վրայ, որ ինքն էլ ձեռքակալւած լինելով իւր մօտ վառօղի պաշար գտնելուն համար, ասել էր թէ այդ վառօղը ստացել է դոքտոր Փաշալեանից՝ Արմտանի կոմիտէին հասցնելու համար: Փաշալեանի ձեռքակալւելուց փոքրինչ իւսուց Երզնկալում տեղի գտած զատական քննութեան միջոցին ջորեպանն երես առ երես բերւեց դոքտ. Փաշալեանի և նորա բանտարկիցների հետ, բայց չկարողացաւ հաստատել թէ ճանաչում է դէթ մէկին: Խակ երբ որ մատուացովց արին դոքտ. Փաշալեանի վրայ, ջորեպանն ասաց թէ դա իրեն վառօղ տուղ մարդը չէ: Այլ ևս մի քանի հարցմունք ստանալուց վետով ջորեպանը խոստովանեց որ իւր բոլոր պատմութիւնը ծալրէ ի ծալր հնարել է մի բարեկամի խորհրդով՝ միմիան իրեն արդարացնելու համար: Զնապած ալդ մերկացման՝ դոքտ. Փաշալեանը զարձեալ բանտ տարւեց շղթալակապ: Մենք տեղեակ երք որ նա մահւան դատապարտուեց, բայց Անգլիակի միջամտութեամբ ազատւեց և ալժմ Պոլսումն է ապրում:

Եթէ բնաջինջ անելու համար կարելի էր ամբողջ գաւառներից այս վերջին տարիներում հայերին քշել, եթէ, ուր հարկն է, պէտք էր նոյն իսկ խմբերով սրի անցկացնել, ինչուս այդ եղաւ Ամսունում, այն ժամանակ հասկանալի կը լինի, որ մի ազգային կառավարութիւն ամենւին ետ չէր քաշւիլ այդ նոյն հայ ժողովուրդը տնտեսապէս քայլացիլ, մնանկացնել, սորիալով որ նոքա ժողնեն իրենց հայրենիքը և զնան ուր կամենում են Ներքին քաղաքական նոպատակներով երբ մի ժողովուրդի զէմ լարւած է սիստէմական հալած անքի մի նախամտածւած սիստէմ, — այդտեղ ամեն ինչ թոյլատրելի է, և ամենից առաջ՝ ժողովրդին կողուղտելը ու նորան չարչարելը։ Ահա, օրինակ, մի եղելութիւն որ մենք գլունում ենք պատմւած Դէղլի Տելեգրաֆի գործակալի Ե-երորդ նամակում։ Այդ եղելութիւնը վերջանում է 25 հոգու բանտարկութեամբ։

«Խնուսի գաւառում, որի գավառամը մի վատ համբաւ վայելող մարդ է, այդիների հարկը երեք տարի առաջ լանկարծակի բարձրանում է մինչև մի անելուր և իրօք սոսկալի աստիճան, այն է երկու հարիւր և վիսուն (250) տոկոս։ Աս այնպիսի մի չար անիրաւութիւն էր, որ անհնարին էր չըողոքել։ Գիւղացիք արտասուաթոր աչքերով աղաչեցին իշխանաւորներին իշեցնել հարկը մինչև իւր նախկին չափը, ասելով թէ նոքա աղապէս բոլորովին ձեռք կը վերցնեն ակնեպանութիւնից։ Արդարութիւնը հարկադրում է իսկ ասել, թէ այդ համարձակութեան համար նոյն շնորհաւում, այլ վունտում են և հրամաչում չմոռանալ, թէ նոքա պարտաւոր են վճարել, և գոհութեամբ կը վճարեն։ և, զարմանալի բան, թիւրքերը չէին սխալել. որովհետ բանը նրանով է վերջանում, որ ժողովուրդը պէտք եղած գումարը գտնում է, հարկը վճարում և դադարում տրանչալ։ Այնունետեւ գալիս է մի նոր գնահատութիւն, և այդիների վրաէ մի այնպիսի հարկ է դնում—մարդ պիտի գիւղադնական ճիգ թափէ որ ոչ միայն հարիւրներով բարձր էր իսկական սակից, այլ հազարներով։ Այն ինչ տարեկան միւս տուրքերի գումարն անգամ, որ գատապարտւած էին հատուցանել թշւառ գիւղացիք, ոչ միայն աւելի էր ազգիների բոլոր բերքի արժէքից, այլ և նոյն իսկ կալւածների վաճառման գնից։ Եւ գիւղացիք զգացին թէ անհրաժեշտ է մի բան անելը Բացի թիւրքերից նոքա ոչ ոք չունէին, ում որ հնար լիներ դիմելու, և զիմեցին թիւրքերին։ Գիւղացոց քսանեհինգ պատգամաւորները միասին գնացին գավառամի մօտ, որ բնակւում էր Խնուսաբերդում, վայելելով մի շատ լաւ առողջութիւն և դարչելի համբաւ։ Աս քաղցրութեամբ ընդունեց նւիրակներին և հարցրեց, թէ ինչ կարող է անել նոցա շահերը պաշտպանելու համար։

Գիւղացիք ահ ու դողով պատմնեցին իրենց գէպքը և կարճ կտրեցին, թէ գազմագամը մեծ չնորհք արած կը լինի, եթէ բարեհածի միան 250 տոկոս վերցնել իրենց ալգիներից ու պարտէղների խկական հարկի արժէգնից վեր, ավախնքն աշնչան, ինչքան որ պահանջել էր մի քանի շաբաթ առաջ: Մինչ նւիրակները խօսում էին, զապթիէնները, որոնք գայնագամի ծածուկ հրամանով թագն ած էին նրբանցքում, լանկարծակի ներս մոտան և բոլոր քսան ու հնգին բանեցին: «Բարս տարէք ալդ սրիկաներին», գոչեց գայնագամը, «Յառաջ, տղերք», գոռաց զափթիէնների մեծ աւորը: Եւ թափորը շարժւեց: Ճանապարհին հինգ հոգի կարողացան փախուստաւալ, միւսն երը փակւեցին մինչ տ'են դաբեր զնդանի մէջ: Այս դէպքը պատահել է Խնուռափ գաւառոփ Զառորմա գիւղում: Այդպիսի դէպքից լասով հարկաւ սիրտ չէին անիլ գանգատելու իշխանութեան միւս գիւղացիք, որոնք հարկերի օրինական գնից միան 400 կամ 500 տոկոս աւելի են հատուցանում: Եւ եթէ թիւրքերին թուլ տրու ամ շաւզոր առաջ տանել իրենց վարչութիւնը, և միւ կոնտրու չնշանակի Եւրոպակի կողմից, — ապ ես ոչ միւ հաչ չպիտի մնաչ Տաճկաստանում»:

### Բանտարկութիւն 72 հոգու:

Սան տարւաչ ապրիլի 2-ին կարինի նահանգի Խլիջացի գաւառի Կէզգիւղում մի պատանի, եկեղեցի գնալու ժամանակ, երեխալքար արձակում է վեց հարւածանի ատրճանակ, առանց մարդու վլասելու: Զանի վրայ հաւաքւում են թիւրքերը և ատրճանակ արձակողին ու նորա հետ մեղսակից ճանաչւած 7 ալը հաչ պատանիներին քշում են գայնագամանիստ Խլիջա գիւղը, ուր նոցա ներկազացնում են իր լեզափոխականների, միւնուն ժամանակ մատնանիշ լինելով նոյն Կէզ գիւղի 72 ալը բնակիչ երիտասարդների վրայ, իր դաւադիրների: Ամբաստանւածներին շղթայում են և ալդ 80 հոգուց բաղկացած խումբը ոստիկանական խիստ հակողութեամբ կանաչ կիւրակի օրը հացնում են կարին (Երզերում) և զցում Դաշխանէ կոչւած կենտրոնական բանտը: Բայց զոցա բանտարկութիւնը տեսում է միան 24 ժամ, չնորհիւ հացոց առաջնորդի դիմումներին, Եղելութեան մանրամասնութիւնները հաղորդւեցին եւրոպացոց տեղական հիւպատումներին և Պոլսի գեսպաններին:

—Մարտիրոս Տէր-Գասպարեան և երկու ընկերները 1894-ի գարնան, պատմում է Դիլլոն իւր տամներորդ նամակում, Ելփիս գիւղում Մահմուդ աղա Շուքրի անունով մինը հրամագում է գիւղացոց եօթն հատ կով տալ իրեն: Երեք-չորս շաբաթ անցնելուց վետոց Կրթաբաս գիւղում հարկանանները փորձում են սպանել Մարտիրոս Տէր-Գասպարեան հային, որովհետեւ գիւղացիներից ոմանք չէին կարողացել տուրքի ապտուիկ մասը վճառել: Հարկանանները հինգ անգամ հրացան են պարպում Մարտիրոսի վրայ, բայց վրիպում են: Խեղճ մարդը, փախուստ տա-

լոմ, դիմում է Հասան-կալէի դտվմագամի պաշտպանութեան և տանում է նորա մօտ երկու արժանահաւաա վկաներո Գագմագամը անմիջապէս առանց վարանելու, բանտարկում է Մարտիրոսին և նորա երկու վկաներին, որոնք մինչև ալսօր էլ (ապրիլ 1895 թ.) Հասան-կալէի բանտումն են:

Նարմանի գիւղացին երից 100 հոգու բանտարկութիւնը, որի մասին «Մուրճ»-ին հետևեալ մանրամասներն են հաղորդւած:

Տիգրան Օքոնեանը, Շամիլ մականունով, կազմէլ էր աւագակացին խումբ 1892 թւականին, Երզերումի շրջակացքում, գլխաւորապէս թիւրք պաշտոնեաների, բէզերի, վաշխառուների վրայ յարձակումներ գործելու համար: Այդ միջոցին ախալցխացի Վարդան Աղամեան Վեքեղաս գիւղում խանութ է պահում եղել, իբր ծպտեալ յեղափոխական, «Շամիլի» խմբին ամեն տեսակ մթերք և ապաստարան մատակարարելու համար՝ նարմանցիների միջոցով, որոնցից մինչ 15 հոգի նոյն իսկ մասնակցում են եղել Օքոնեանի խմբին (նարման մի գիւղ է Երզերումի նահանգում): Երբ կառավարութիւնը գտնում է նարմանցոց մասնակցութիւնը՝ էկզեկուցիա է նշանակում նարման գիւղի վրայ և բանտարկում մինչ 100 հոգի որոնց մէջ և ռուսահպատակ Վարդան Աղամեանին: Բանում գորա մնացին մինչ երկու տարի: Ռուսաց հիւպատոս Մաքսիմովին յաջողել էր Աղամեանին, որը մահւան էր դատապարաւած, վերցնել իւր հսկողութեան տակ, տեղափոխելով նորան հիւպատոսարանի բանտը, ուստից նա, սակայն, փախաւ և առա 1893-ին միացաւ Արաբօ մականւանւածի հրոսակացին մի փոքրիկ խմբին և այդ խմբի հետ միասին գտաւ իւր մահը Խնուսի և Մուշի միջի ճանապարհին՝ քիւրդերի հետ ունեցած ընդհարման միջոցին: Նարմանցիների պատժելով՝ Օքոնեանի խումբը ցրւեց, իսկ ինքը Օքոնեանը սպանւեց Տիգրան Կարեկցեանի ձեռքով Թիֆլիսում: Այդ սպանութեան գործը քնընեց Թիֆլիսի նահանգական դատարանում նոյն 1893 թւականին:

Արաբօ, որի մասին այս բովէին յիշառակութիւն արինք 80-ական թւականների երկրորդ կիսում, հայերին պաշտպանելու համար աւագացին խումբ էր կազմած և շրջում էր Մուշի դաշտում, հեռու արշաւանքներ գործելով նոյն իսկ Տաճկա-Հայաստանից հեռու տեղեր: Ենորհիւ իւր բնաւորութեան մի քանի գծերի՝ նա

ապաստան էր գտնում զվարապէս քրդերի մօտ, մինչդեռ հայերը այդ բանից զգուշանում էին: Կառավարութիւնը յաջողեց նորան ձեռքակալել 1891 թ-ին և բանտարկել նորան Սամոնի բերդում, որտեղից նա փախաւ, և յետոյ նորից խումբ կազմելով, 1893-ին, Մշոյ և Խնուսի մէջ եղած ճանապարհին սպանւեց իւր խմբի հետ, որի մէջ էին Լեռն, Աւո և վերը յիշած Վարդան Ազամեան:

—Ալաշկերտի գաւառի 35 հայ դատապարտւածները: Ալաշկերտի գաւառից ներկայումն աքսորի և բանտերի մէջ գտնող դատապարտւած հայերի մի անւանացուցակ գտնում: Ենք «Արձագանք» լրագրի մի թղթակցութեան մէջ, թւազրած Ալաշկերտ, 5 յունիս (1895 թ.), «Ալաշկերտցի» ստորագրութեամբ (թերթի № 70). այդ ցուցակը, ըստ երեւութիւն, լիակատար է և ճիշդ: Ահա այդ ցուցակը, ուր անունները դասաւորւած են ըստ քաղաքների կամ գիւղերի, բայց ուր չկան սեղեկութիւններ թէ որ բերդերում կամ աքսորավայրերում են գտնում նոքա: Հաւանական է, սակայն, որ նոցա մեծ մասը Երզերումի բերդումն են:

ա. Թոփրաւ-կալէ, որ է գալմագամիստ քաղաք. 1) Թագէսս աղա Գրիգորեան. 2) Աւետիս աղա Գրիգորեան. 3) Բարսեղ աղա Զաքարեան. 4) Գրիգոր աղա Սուքիասեան. 5) Յովհաննէս Էֆէնդի Մուրադեան, Սարգիս էֆ. Մուրադեան (եղբալընիր). 7) Թոփրակ-կալէի Հայոց Միացեալ Ընկերութեան վարժարանի ուսուցիչներից մշեցի Գէորգ Էֆէնդի Մարգարետունի. 8) Խուլթէցի Տուլդուխեան Յարութիւն Էֆէնդի. 9) Նոյն տեղի գպրոցի տնօրէն-ուսուցիչը. 10) Աբրահամ Բրկէեան. 11) Սահակ աղա Գրիգորեան (անվայտացած ցանոնի իշխան Նազարէթ<sup>1)</sup> աղայի հօրեղբալը). 12) Սարգիս Պետրոսեան. 13) Բարսեղ Մանուկեան. 14) Ահմադալի վիրաբնակ Թոփրա-կալէ Հազրօ Մերկեան. 15) Աւետիս Պետրոս սեան. 16) Պետրոս Բոլեածեան, որ չկարողանալով կրնլ բանտի տանջանքները՝ կրօնափոխ եղաւ. 17) Նահապեան վարժապետ Շահինեան. 18) Համբարձում Շահինեան. 19) Վաղարշակ Տէր-Յարութիւնեան, ակժմ աքսորւած Աքիալի Շամ-Ցըլիպոլիս նահանդը:

բ. Ա. հմատ գիւղից. 20) Մելիք աղա Գանտիլեան, որ բանտի մէջ վախճանւեց. 21) Յովհան աղա Գանտիլեան, առաջնի եղբալը. 22) գիւղի Պլուզ վարժապետ:

<sup>1)</sup> Այն Նազարէթ, որ մի քանի ամիս առաջ ձեռքակալւեց Թիֆլիսում՝ տաճկաց հիւպատոսի պահանջմամբ? Ծան. Ա. Ա.

գ. Խաչլու գիւղից. 23) Օխէշեան ռէս Պետրոս և 24) Բադօ  
անունով մի երիտասարդ:

դ. Խաստուր գիւղից. 25) տանուտէր Միսօն. 26) ռէս Լճէլի  
Յուսէր. 27) Բամամեան Յակոբ, 28, Բամամեան Արշակ (Եղբայրներ),  
վերջինս աքսորւած է Հռոդոս կղզին. 29, 30 31 և 32-րդ՝ ռէս Սարգիս  
և ուրիշ երեք անձեր, որոնք մեռան բանտի՝ նախապէս կրած տանջանք-  
ների հետեանքներից:

ե. Զէգկան գիւղից. 33) Քէշիշ օղլու ռէս Աբրահամ.

զ. Խաչաբէկ գիւղից. 34) ռէս Աւէն.

է. Բլուր - Եղնթափառ 35) ռէս Յովհաննէս, որը երբ ազատ-  
ւեց հնգամեաչ բանտարկութիւնից, կառավարութիւնը վճռեց ընտանիքով  
աքսորել նորան, որի համար նա մի գիշերով անւախտացաւ իւր ծննդա-  
վայր գիւղից.

Ֆոլորը միասին, ուրեմն, 35 բանտարկեալ, որոնցից 4-ը մե-  
ռած են, 2-ը աքսորւած, մէկը մահմեղականութիւն ընդունած:

Մի թղթակցութեան մէջ թւագրած Բասեն, 10 մայիս (1895)  
Հասան-Կալէի և Կարինի բանտերի մէջ «միմիացն այժմ»  
և «մօտիկ օրերի» բանտարկւածների թիւը հաշւած է «մօտա-  
ւորապէս 157 անձ»:

Բանտարկեալների թիւը Նապին-Գարհիտարում:  
Նոյն լրագրի մի այլ թղթակիցը, մի գրութեան մէջ, թւագրած  
Նապին-Գարահիտար, 3 մայիսի (1895 թ.) վկացում է որ տեղա-  
կան բանտում ևայժմ 30 հատէն աւելի երիտասարդներ կան,  
որոնք, չնորհիւ վատահոգի Վարդեան Արամի մատնութեան, տա-  
րիներով և ամիսներով կը տառապեն այնտեղ: Ասոնք բոլորն ալ  
վեղափոխական» յանցանքով են ամբաստանւածն:

Բանտարկութիւնները տարածւում են ոչ միայն գրականապէս  
անպաշտպան աշխարհականների, այլ և իրենց դիրքով աւելի ապա-  
հով եկեղեցականների վրայ: Կ. Պոլսի պատորիաբքարանը կատարեալ  
հնարաւորութիւն ունի գէթ բանտարկւած հոգեւորականների ցու-  
ցակը պաշտօնապես ինքը հրատարակել կամ հրատարակել տալ թէ-  
կուզ կիսապաշտօնական ձեռվ. այդ դեռ կատարւած չէ, թէև ներ-  
կայ պտրագաներում ացդադիսի հրատարակութիւնը ոչ միայն օգտա-  
կար. այլ և ուղղակի պարտականութիւն պիտի սեպէր:

Կրօնաւորների հետ բանտերում պէտք է կարծել թէ վար-  
սում են աւելի քիչ բարբարոսաբար քան աշխարհականների հետց  
բայց և այնպէս, հասած տեղեկութիւնների համեմատ, բանտերում  
նոցա հետ վարւում են չարաչար կերպով։ Մեր ընթերցողներին ար-  
դէն յաջոնի է Ներսէ և վարդապետ Խարախանի անունը,  
որ Սասունի կոսորածից երեք տարի առաջ մի ընդարձակ տեղեկա-  
գիր էր կազմած նաղէշի նահանգի ընդհանուր վիճակի մասին, Փրան-  
սերէն լեզով, ուղարկելով այն Կարինի առաջնորդ Վեռնդ եպիսկո-  
պոս Շիշմանեանին՝ անգլիական փոխհիւպատոս Հոլւարդին հասց-  
նելու համար. Կարինի առաջնորդը, սակայն, վախ կրելով տեղ չհասց-  
րեց, և միայն վերջերս, Դէյլի Տեղգրաֆի թղթակիցը ձեռք բե-  
րեց այն և հրատարակեց անգլիերէն լեզով ցիշեալ թերթի ապ-  
րիլի 13-ի համարի մէջ։ Այդ տեղեկագրի մէջ նա դուշակեց Սա-  
սունի կոսորածը։ Եւ ահա այդ նոյն Ներսէս վարդ. Խարախանեան-  
իւր տեղեկագիրը կազմելուց քիչ ժամանակ անցած՝ բանտարկւեց  
և մնաց բանտում երեք տարի, ազատելով միայն այս տարւաց  
ապրիլին, սատիկահական հսկողութեամբ և. Պոլիս տանւելու. համար:  
Նորան տւած չարչարանքների մանրամասնութիւնները մեզ յայտնի-  
չեն, բայց Կ. Պոլից եկած մի տեղեկութեան համաձայն՝ թիւրք-  
կառավարութիւնը բանտի մէջ նորան սարսափելի չարչարանքներ է  
տւած, և այդ չարչարանքների պարզամտութիւնն անգամ սարսուռ  
է ազգում մարդուս, և հայր սուրբին մինչև այժմ ողջ մնալը  
հրաշքի պէս բան է։

Բարտարկւածներից մէկն էր նաև Ֆրնուզի (Կիլիկիա, Սիս)  
վանահայր Նիկողոս եպիսկոպոսը<sup>1)</sup> և նորա հետ միասին չորս վար-  
դապետներ։ Այդ վարդապետներից մէկին այն աստիճան ծանր չար-  
չարանքներ են տւած եղել, որ խեղճ մարդը Պոլսի նաւահանդսոին

---

Ալստեղ վիշտած Ֆունուզի վանահայր Նիկողոս եպիսկոպոսը մէկն է  
այն չորս եպիսկոպոսներից, որոնք, բանտից ազատելով՝ Բ. Գուան գի-  
մեցին բաղոքելու համար Կիլիկիայի կաթողիկոս Գրիգորիս եպ. Ալէաթ-  
ճեանի ընտրութեան դէմ, մի վարժունք, որ լուզեց ամբողջ հայութիւնը և  
առաջ բերեց քաջարի հովիւ Ա. պատրիարք Խոմիրլեանի այն լաւարա-  
րութիւնը, որի մասին մեր ընթերցողները կը կարդան «Մուրճ»-ի ներ-  
կաւ համարի լուրերում.

մօտեցած պահուն իրան կորցնում է և աղաղակում է ձև իլա իլլալահ, Մուհամմէդ Ռեսուլ ուլլահ», որից եզրակացնում են թէ մահմետականութիւն է ընդունում. սակայն Պոլսում ոստիկանական մի խցիկի մէջ բանտարկւած ժամանակ յայտնել է որ յիշեալ բացականչութիւնը նա բերնից թուցրել է խելայեղութեան վայրկենի մէջ և որ ինքը մնում է հաւատարիմ իւր կրօնին:

Ներսէս Ծ. վարդապետ Խարախանեանի ձեռքակալութեան հանգամանքները ահա թէ ինչպէս է պատմում: 1893 թ. երաշտութեան պատճառով Մշու Ս. Կարապետ վանքի ցանքսը այնքան քիչ բերք տւեց, որ Ներսէս վարդապետը, օրհնութեան թղթերով այս ու այն անհատին ապարդիւն կերպով դիմումներ անելուց յետոյ, անձամբ դիմեց Մշու փաշացին և թույլտուութիւն ստացաւ իւր թեմում շրջել ցորեն հաւաքելու համար: Հանգանակութիւնը նա սկսեց Բուլանըին դաւառակի Կոփ գիւղից, որ մինչ 350 տուն հայ բնակիչ ունի, հիւրասիրւելով Քոսացի-Մխիթար էֆէնդու քնակարանում: Նա շրջեց այդտեղ տեղական Յարութիւն աւագ քահանացի, հիւքմաթի անդամ Գասօ աղայի, Քերովը վարժապետի և մի քանի այլ անձերի հետ ու հաւաքեց 40 քիլօ ցորեն, այնուհետև շրջեց թեմի միւս գիւղերը և մինչ կէս ամիս հաւաքեց 700 քիլօ ցորեն:

Հանգանակութեան համար թեմը շրջելով՝ Ներսէս վ. Խարախանեան հետաքրքրուում էր նաև թեմի եկեղեցիների, հոգևորականների դրութիւնով, քննում էր և վճռում պատահած վէճերն ու բողոքները լսու հոգեորին: Ի միջի այլոց նա լուծեց Եռնճալի գիւղացի Մխիթար Մելիքեանի որդու ամուսնութիւնը իւր մօրեղբայր Թեղուտ գիւղացի Մանուկի աղջկաց հետ: Մելիքեան Մխիթարը, զայրացած այդ բանից, միացաւ Զիարէթ գիւղացի ոէս Թալմօի և մի քանի ուրիշ դաւաճանների հետ, որոնք և ներկայացան Մշու գայմաղամին, յայտնելով նրան թէ Ներսէս վարդապետի հանգանակած ցորենը ոչ թէ Ս. Կարապետ վանքի համար է, այլ մի հայ յեղափոխական ընկերութեան համար: Մուշի դայմադամը այդ բանը հեռագրով հաղորդեց Էիթլիսի (Բաղէշ) նահանգապետին. վերջինս էլ Բ. Դուան: Եւ ահա մի գիշեր կանոնաւոր զօրքի զինւորներով շրջապատռում է Ս. Կարապետի վանքը, ձեռքակալուում է Ներսէս

վարդապետը, որին ձեռները կառած նստեցնում են իւր ձիու վրայ, և իրանց հետ տանելով նամակների մի տուփ՝ Խարախանեանին փոխադրում են Բիթլիս և գցում բանտի մի խոնաւ և մութիցիկ:

—Սիմէոն վարդապետ: Ներսէս Ծ. վարդապետ Խարախանին բանտարկումից կարճ միջոց յետոց բանտարկուեց նաև Կոփայ Ս. Դանիէլ վանքի վանահայր Սիմէոն վարդապետ<sup>1)</sup> Յովհաննէսեան, տէր իսրայէլ քահ. Քիրկասեանի (որ յետոց աքսորւեց Աքիայ) և 12 համզաշէխցիների հետ: Ահա այդ դործի հանդամանքները:

Սիմէոն վարդապետին թշնամնում է Բուլանըի գաւառի Ռտնչորդի գիւղի քահանակ տէր Գեորգը, որը չանդգնել էր այն Քատըպ-Մուրասուից կաշոււած քիւրդերի ձեռքով խլւած նորահարսին պսակել մի համզաշինցի տղավի հետ և որի համար այդ քահանան, հարամանով Մշու առաջնորդ Ներսէս Ծ. վարդապետ Խարախանինեանի քննւեց Սիմէոն վարդապետի ձեռքով, որը նորան չանցաւոր ճանաչեց, առաջնորդը, կրօնական ժողովի որոշմամբ, քահանաւին ենթարկեց եկեղեցական ապաշխարութեան Ս. Առաքելոց վանքում, ուստից սակածն, երկու ամիս լետու ինքնազլուխ անհետացաւ՝ թելաղութեամբ և խորհրդով ապօրինի պսակւած համզաշէխցու հօրեղօր (Ռշօի տղայ Միթիթարի) և չափոնի դաւաճան Զուլիի տղայ Վէռլի: Սիմէոն վարդապետը տէր Գէորգին զափտիաների ձեռքով ուղարկեց Մշու կրօնական ատեանը, ուր այդ հաչ քահանան, սակածն, ուրացաւ քրիստոնէութիւնը: Չնակած դորան, Ներսէս վարդապետը, միմիան Տաճկաստանում հասկանալի հանդամանքների չնորդիւ, թուլատրումէ այդ քահանաւին վերազառնալ իւր գիւղը և հովել իւր ժողովուրդը: Ահա այդ տէր Գէորգի հետ, մի քանի ժամանակից լետու, թշնամութեամբ զէպի Սիմէոն վարդապետը միանում է զաւաճան ճանաչած Զուլիի տղայ Գէռն, որին Շէլիազուր մի գիւղացի մերժում է տալ իւր գեղեցկութեամբ չափոնի աղջկան ի կնութիւն: Միանում է դոցահեան նաև վերը լիշած Ռշօի տղայ Միթիթարը, և երեքով միասին զիմում են Բուլանըի զաւմագամ Հաշիմ բէկին, չափանելով նորան թէ վարդապետների լորդորանքով երիտասարդները ընկերութիւն (ջանփիտան) են սարքել՝ էղափոխական նպատակներով

<sup>1)</sup> Կարծեմ նորա ազգանունն է Յովհաննիսեան, մէկը Աքիա աքսորւածներից (աես Աքիա աքսորւածների յուցակը լողւածիս վերջում): Մեր ընթերցողները կը կարդան մի ալ տեղ նաև Սիմէոն վարդապետ Ղեղնղեանի անուն որ կամ ալ անձն է և կամ սխալ է,

արտասահմանից զէնք ու ռազմամշերք փոխադրելու համար, և որ Սիմէ-ն վարդապետը զլուխն է ալդ ընկերութեան. Չնայած որ նոցա մատնա-նիշ արած եկեղեցիներում ոստիկանութիւնը ոչինչ չգուաւ, բայց դաւա-ձանները նպատակին հասան: Բուլանըխի գալումագամ Հաշմ բէկի ծանու-ցագրի հիման վրաէ Մուշի գաւառապետ փաշան մի ուռցրած հնուագիր տւեց, որի հետեանքը եղաւ Կ. Պոլսից եկած հրամանը անմիջապէս ձեռ-քակալել չանցաւորներին և նոցա ուղարկել Կ. Պոլսի Համաձան ալդ հրամանի ձեռքակալեցին և բանտարկեցին Բուլանըխի Կոփ աւանի «Հուքմաթ»-ում (բանտի անուն) և Մուշի բանտում Սիմէօն վարդապետ Յովհաննէսեան, Համզաշէխ զիւղի տէր Խորաէլ քահանայ Քիրկասեան, Հողօցի Արէ Թմօն և ալ 10 հողի Համզաշէխ զիւղից և 3 ուսուցիչներ:

Ահա և մի շարք այլ հոգեւորականներ՝

— Սոյն թւականի մարտի 26-ին, շղթալակապ և ոստիկանական խիստ հսկողութեամբ Կարին բերւեցին Խնուս գաւառի Ղարա-Չոպան զիւղի ծերունի Տէր-Յովհաննէս քահանան, Բալազիկ քաղաքի երիտասարդ տէր-Ներսէսը, Արծը գաւառի առաջնորդական տեղապահ Գէորգ վարդա-պետը և երկու վահնեցի քահանաններ. 8 օր Դաշխանէ բանտում մնալուց վեառյ մեռելոցի վիշտակութեան օրը նոքա նոյն կապանքներով և հսկո-ղութեամբ ուղարկեցին Կ. Պոլսի. Դոցա ձեռքակալումը կատարւած է մի հազ մասնիչի և մի թիւրք Փանատիկոսի ցուցմունքի վրաէ թէ իբր, զրդ-մամբ Կովկասում շրջագանելուց վերադարձած մեզ անլազտ ազգանունով Գէորգ վարդապետի, Խնուսի Ղարաչոպան բաժնում տէր-Յովհաննէսի տունը դառնո մ է ինդափոխականների կենդրոնավայր, ուր պիտի ստաց-էին արտասահմանից եկած չեղափոխական ծրաբները, որոնք պիտի ցըր-էին նոյն զաւառի Արոս զիւղի բնակիչ Մքէ Յովհանի միջոցով, իբր թէ ապացուցւած էր որ ալդ եղանակով արդէն ծրաբներ ստացւած են եղել և ցրւել.

Մեր այս յօդւածում բանտարկւածների թւում պատահել են արդէն յաճախ այլ հոգեւորականների անուններ, որոնց մի առմի նորից կրկնելը աւելորդ ենք համարում Կ. Պոլսի լրա-գիրները ասպրիլին հաղորդեցին որ ս. Պատրիարք Հօր ներկա-յացան հետեւալ 12 եկեղեցականները, որոնց տաճիկ տէրութիւ-նը, անշուշտ Անզլիայի ճնշման ներքոյ, վերջապէս արձակել էր բանտերից: Դոքա են Կարապետ եպիսկ. Հալէպից. Աւոնդ քա-հանայ, Հալէպից. Նշան քահանայ Սուեֆանեան, Բիլանցի, Հա-լէպից. Սիմէօն վարդապետ Աւոնդեանց, Բուլանիցի, վանահաց Կոփայ Ա. Դանիէլի. Աբրահամ վարդ., Մշեցի, միաբան Ա. Առա-քելոց վանքի. Խաչատուր քահ. Տէր-Յարութիւնեան, ալաշկերտոցի.

Տէր-Թաթուլ քահ. Կարմիրեան, չարշամբացի. Վարդան վարդապետ Բրոխորոնեան, քեմախցի. Միքայէլ քահ. Թահմազեան, սամսոնցի. Արիստակէս վարդ. Աճեմեան, Գաղանճեան Յովհաննէս եպիսկոպոս. 1) Կարապետ քահ. Երէցեան, Արմտանցի:

Աքիաջի հայ աքսորականները.

Ներկայ յոդւածում մի քանի տեղ յիշատակւեց Աքիայի անունը, իբրև աքսորավագար: Այդ առիթով նկատենք որ մի շատ գնահատելի ցուցակ հրատարակեց նորերումն Լոնդոնում ող. Ա. Նազարբէդ մի բրոշիւրի մէջ, որ ծանուցւեց «Մուրճ»-ի անցեալ 6-րդ համարում<sup>2)</sup>: Ցուցակի մէջ թւած են այն դատապարտածները, որոնք իրենց սպատիժը կրում են Աքիայի բերգում: (Սիրիայում, Բէյրութի նահանգ): Այդ ցուցակը մէնք առաջ ենք բերգում այս ոեղ ամբողջապէս, յարակցելով, որ այգտեղ զետեղած անուններից մեր ներկայ յոդւածում յիշւած են միան 6 - 7 հոգի խկ բոլոր մնացածները նոր անուններ են՝

№	Անուն	Նոհանք	Քաղաք էամ	Չեռքակալման	Աժորէ
1	Նաթանեան Կարապետ	Վան	Վան	1892	1892
2	Դիւլպենկեան Դասպար	Կ. Պոլիս	Կ. Պոլիս	1889	1891
3	Տոնապետեան Պետրոս Ժուրնալիստ <sup>3)</sup>	»	»	1892	1893
4	Մարիմեան Պետրոս <sup>4)</sup> Նկարիչ	Տրապիզոն	Տրապիզոն	1890	1891

1) Այդ այն եպիսկոպոսն է, որը անցեալ ամիս լինելով դաւածան և պիտույքումների թւում, ենթադրւած էր Սիսի կաթողիկոս ընտրելու, ընդդէմ արգէն ընտրւած Ալէաթմանի:

2) The voice of the armenian revolutionists upon armenian problem and how to solve it, Լոնդոն 1895.

3) Այդ նա է, որին մատնել էր նախկին էջապիտիւական, նախկին «Դանուբ» լրագրի հրատարակիչ և ապա դաւածան և մատնիչ քժ. Թիւթիւններն, որին սպանեցին և Պոլսումներկայ տարւակ լուսիան, Ծան. Ա. Ա.

4) Պետրոս Մարիմեանի մասին լաւտնի է, որ նա ներկայ ապրիլին ազատւեց աքսորից: Նա ձեռքակալւել էր լաւտնի Մամրէի մատնութեամբ 1890-ին նույնիբերին, աքսորւեց Աքիա առանց դատաստունի, այնտեղ նա բանտում բաւական ժամանակ մնաց, խկ վերջերս նա այդ քաղաքում պիտի ապրէր ոստիկանական հսկողութեան տակ: Ծան. Ա. Ա.

№	Անուն	Նահանգ	Քաղաք կամ գյուղ	Զեմբեկալման	Առողջի բարին
5	Կլիմեան Գրիգոր ուսանող փաստաբան	Ա. Պոլիս	Ա. Պոլիս	"	"
6	Բալբալեան Նիկողոս	"	"	"	"
7	Դակիսեան Միսակ	"	"	1893	1893
8	Աջեմեան Արիստակէս քահանակ	"	"	1891	1891
9	Բոզամեան Երևանդ	"	"	1892	1892
10	Սերոպեան Ելբանոս	"	"	1893	1893
11	Յակոբեան Ղազարոս	"	"	1891	1892
12	Կիրակոսեան Մկրտիչ լուսավետ	Բաղէշ	Կոփի	"	"
13	Ղոկասեան Գէորգ	"	Մուշ	"	"
14	Զաքէսեան Նազիկ	Բրուսա	Էսպիշեր	"	"
15	Գէորգեան Յակոբ	Բաղէշ	Կոփի	"	"
16	Յովհաննէսեան Սիմէօն քարդապետ	"	"	"	"
17	Քիրկասեան տէր-Խորակէլ քահանակ +	"	Համզաշէլս	"	"
18	Յովհաննէսեան Նելսոն +	"	"	"	"
19	Հարէկեան Թիմո +	"	"	"	"
20	Բդուկեան Մանուկ +	"	"	"	"
21	Մալիք + Մելիք +	"	Տոնժալու	"	"
22	Յնդուկեան Եղիշէ	"	Համզաշէլս	"	"
23	Տէր-Արթինեան Վազարշակ	"	"	"	"
24	Մուբառակեան Ալլրօ	"	"	"	"
25	Տէր-Միթթարեան Օհան	"	Մուշ	1890	1892
26	Քրինջուկեան Վահան	"	"	1891	1892
27	Հախիկեան Մադաթ	"	"	"	"
28	Սեփերեան Միսօ	"	"	"	"
29	Կուլումջեան Ալիսակ	"	"	"	"
30	Պետրոսեան Մօսօ	"	"	1892	1892
31	Մարտիրոսեան Մարտիրոս	"	"	1891	"
32	Սամոսեան Վազարշակ	"	"	1892	"
33	Հայրապետեան Սիմօն	"	"	"	"
34	Սալիւան Կարապետ	"	"	"	"
35	Ալեմշարեան Ղազար	"	"	"	"
36	Եղիազարեան Մարգար	"	"	"	"

№	Անուն	Նոհանք	Քաղաքական գիշել	Զեմբակալնուն տարբն	Աժարք տարբն
37	Սուրադեան Օհանէս	"	"	1892	1892
38	Տէր-Աւետիսեան Համբօ	"	"	1891	"
39	Մամիկոնեան Աբր. վարդապ.	"	"	1892	"
40	Կալաջնեան Սաղաթել	"	"	1891	"
41	Խանամիրեան Օւօ	"	"	"	"
42	Պոտիկեան Արշաւիր	"	"	"	"
43	Գրիգորեան Գասպ.	"	"	"	"
44	Մկրտչեան Արթին	"	"	"	"
45	Կոտորեան Յակոբ	"	"	"	"
46	Ցովհաննէսեան Մակար	"	"	1892	"
47	Կիւլպենկեան Տիգրան	Սըւաս	Մարտւան	1893	"
48	Գալստեան Մարտիրոս	"	Կեմերիկ	"	"
49	Գարագեօղեան արթին	"	Մարտւան	"	"
50	Վարդուկեան Գաբրիէլ	Անգորա	Եւերէկ	"	"
51	Գաբաղեան Յակոբ	"	Կեսարիա	1892	"
52	Կուրինլեան Կարապետ	"	"	"	"
53	Փափազեան Մկրտիչ	Սըւաս	Մարտւան	1893	"
54	Դէալեթեան Յակոբ	Անգորա	Կեսարիա	"	"
55	Վարդանեան Միհրան	"	Զորում	"	"
56	Բոյեածեան Ստեփան	"	Կեսարիա	"	"
57	Զորլուկեան Մուշ	"	Խողլատ	"	"
58	Զոլակեան Յակոբ	"	Կեսարիա	"	"
59	Սիմոքեան Արթին	"	"	"	"
60	Քեաբարձեան Սեն.	"	Եռզգատ	"	"
61	Օնանեան Մամաս	"	Լեսարիա	"	"
62	Կոտորեան Բարսեղ	Կ. Պոլիս	Կ. Պոլիս	1892	1894
63	Քէլիկեան Յակոբ	"	"	"	"
64	Նատուրեան Արթին	"	"	1890	1890
65	Զանդուկեան Արթին	"	"	"	"
66	Զատոլեան Միսակ	Բաղէլ	Մուշ	1891	1892
67	Մկրէչեան Մանուկ	"	"	"	"
68	Ցովհաննէսեան Կսպօ	"	"	"	"
69	Կարակեօղեան Դէորդ	Կ. Պոլիս	Կ. Պոլիս	1878	1890
70	Կարակեօղեան Մինաս	"	"	"	"
71	Ենոքեան Արմենակ	"	Կոաչմէն	1884	"
72	Յուսիկեան Օննիկ	"	"	1888	"
73	Միքայէլեան Տիգրան	"	"	1889	"

№	Անուն	Նահանգ	Քաղաքական գիւղ	Զարդարվածան	Ազարքի
74	Խաչատրեան Արթին †	"	"	"	"
75	Շուշանսեան Աւետիս	Խարպուտ	Խարպուտ	1891	"
76	Թոմաջանեան Յովակիմ	"	"	1892	1892
77	Սողոմոնսեան Սահադ	Բաղէց	Մուշ	1891	"

Ահա բոլորը, ինչ առ այժմ կարող եղանք հաղորդել մեր լնթերցողներին: Մենք չենք զբաղւել թէ նոյն այս յօդւածի մէջ յիշատակւած բանտարկութեան դէպքերը ինչ համագումար են կազմում: բայց մեր տպաւորութիւնը այն է թէ մի.երկու հազարներ է, և թէ ինչ բանտային տանջանքների մէջ—այդ արդէն տեսանք: Ժամանակով անշուշտ մենք կարող կը լինենք շատ պակասներ լրացնել: Այդ դէպքերի լրութեան մէջ պիտի ցոլանայ Տօմկա-Հայերի և թշւառութեան և թէ միանգամայն հերոսութեան պատկերը: Հերոսութեան ենք ասում, որովհետև այդ սոսկալի վիճակը հետեւանք է հայութեան հաւատարմութեանը դէպի այն սուրբ գաղափարները, որոնցից այնքան ճնշւած և հարստահարւած հայը չի կամենում հրաժարւել՝ լոկ անասնական հանգստութիւն գոնելու համար մի անհնարին կառավարութեան մէջ.

ԱԻԵՏԻՔ ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ:

## ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ, ԱՆԳԼԻԱՅԻ թագուհու գահական ճառից և Գլադըստոնի 25 լուլիսի արտասահմած ճառից լետոյ՝ նոր կենդանութիւն է ստանում. Հեռագրի համաձայն պահական ճառում (և օդոսա.) վշւած է Հայաստանում կատարւած սարսափների մասին, որոնք գըրգըրեցին քրիստոնեակ ազգերի, մանաւանդ անգլիացոց, զարովթը թագուհին անհամբեր սպասում է սուլթանի վճռին այն ու փորմների վերաբերութեամբ, որոնք առաջարկած են Անգլիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի համերաշխ գործող դեսպանների կողմից»։ Գլադստոնի ճառը, որի մասին վշատակութիւն կաէ ներկայ համարի ժամանակակից տեսութեան մէջ, իւր ամբողջութեամբ տեղ կը գտնի ամսագրիս չաջորդ համարում։

ԲԱՆՑԵՐ ԵՒԻ ԲԱՆԱԾԱԿԵԱԼՆԵՐ չողւածը որ տպագրում է ներկայ համարի ժամանակակից տեսութեան մէջ, կ'ունենաէ իւր լրացումը «Մուրճ»ի վիտագաչ համարներում, որ չափով որ մեզ տեղեկութիւններ կը հասնեն հավական քաղաքական գործերի համար բանտարկւածների մասին ալս վերջին հինգ տարիներում։

ՎԵՀԱՓՍՈՒ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ. «Մուրճ»-ի անցեալ համարում վեհ. կաթողիկոսին թողինք ֆէոդոսիալում, ուր Նա հիւրասիրւեց նկարիչ Ավվագովսկու տանը. Յուլիսի 1-ին «Նիկոլայ» շոգենաւով կաթողիկոսը մնինց թէողոսիալից, Աերչի նաւահանգիստում դիմաւորեցին քաղաքական ուստիկանսապեսը և հասարակութիւնը աղ ու հացով. Ամսի 3-ին—ժամանումն Փոթի, ուր Նորան գլմաւորեցին կատալարութեան ներկայացուցիչները, քաղաքակին ինքնավարութեան ներկայացուցիչները և ժողովուրդը. Դիմաւորելու էր եկել Թիֆլիսի միացաւ շքախմբին մինչև թեմի սահմանից Կաթողիկոսի դուրս գալը, այն է մինչև Ալախքալաքից դէն), Քաղաքագլուխ պ. Նիկոլաձէն մատուց ծաղկէ փունջ, հասարակութիւնը աղ ու հաց, Կաթ.

գնաց հալոց եկեղեցին, մաղթաճք կատարեց, կարճ քարող խօսեց, ապա լ ջեանեց պ. Զալալեանի տանը, Ամսի 4-ին գիշերը կաթողիկոսը մեկնեց Բորժոմ: Միխալլովի կատարանում դիմաւորեցին, ժողովուրդ և պալատական կոնտորի կառավարիչը: Ընդառաջ էր եկել և Գորու լաջորդը: Վեհը ազօթեց եկեղեցում ու շարունակեց ճանապարհը մինչ Բորժոմ, ուր ընդունելութեան և ճաշի հոգսերը իրենց վրայ էին առել ամարանոց եկածներից չորս բագուցի՝ Համբ. Մելիքեանց, Պետր. Զոհրաբեանց, Սահ. Աղամեան և Ալեքսանդր Եղիազարեան: Բորժոմ ընդառաջ էին եկել Ախալցխափի հայր գործակալը և պատգամաւորներ՝ Կարապ. Մարտուքեան, Առաքել Մելքոնեան, Գրիգոր Մովսիսեան և մի քահանաց: Ախալցխալում մեծ ընդունելութիւն, նմանեցրած Ներսէս Աշտարակեցու ընդունելութեան, որից դէս զեռ կաթողիկոս չէր այցելել Ախալցխան: Ընդառաջ էին զնացել 60—80 ձիաւորներ Հալքիկի անունը կրող դրօշակներով: Ախալցխա ժամանեց լուվիսի 4-ին ժամ 3-ին կէսօրից լեռով: Նախ ազօթեց Ս. Փրկիչ եկեղեցում, որի գաւթում դիմաւորեցին քաղաքալին ինքնավարութեան բոլոր անդամները և համբարութիւնը՝ զրօշակներով: Եկեղեցուց ուղևորւց դէպի պատրաստած բնակարանը Կարապետեան տղալոց ուսումնարանի երկչարկանի շինութեան մէջ, որի վերի լարկը լատկացրած էր կաթողիկոսին և թեմական առաջնորդ Գէորգ արքեպիսկոպոսին, ներքին լարկը՝ շքախմբին: Մատուցեց աղ ու հաց ընդունելութեան մասնաժողով՝ անդամ քաղաքալին աւագ պ. Նիկ. Տէր-Դրիգորեանի ձեռքով— արծաթէ մատուցարանի վրայ, փորագրութեամբ «Հալքիկին, Ախալցխալի հաջ հասարակութիւնից», Խանութիւները փակւած էին: Ժամ 5-ին վեհարանում ճաշ տրւեց, որին մասնակից եղաւ Հալքիկը, շքախումբը, քաղաքալին աւագը, պատգամաւորները, Ս. Փրկիչի երեցփոխը, Կարապետեան զպրոցի աւագ ուսուցիչը, հայր գործակալը, հոգնոր կառավարութեան անդամները և Արասթումանից եկած պատգամաւորները: Ճաշի ժամանակ երգում էր օրիորդների երգեցիկ խումբը: Երեկովեան հրավառութիւն, Ընդունեց գաւառապետին: Երեկովեան ներկալացան Ախալցխաքի պատգամաւորները: Յաջորդ օրը այցելեց Ս. Փրկիչ և Լուսաւորիչ եկեղեցիները: Ընդունելութիւն ալկիններին և օրիորդներին: օր. Ե. Մամիկոնեան Կարդաց ուղերձ, ուր ասւած էր նաև թէ ալդ օրը լաւերժացնելու համար վճռել են մի սանունի պահել օրիորդաց Եղիսաբէթեան դպրոցում: Հալքիկ օրհնեց և գովեց: Ամսի 8-ին եկեղեցի իջաւ, երկար քարող խօսեց, հոգեհանգիստ կատարւեց Ս. Փրկչի եկեղեցու մէջ թաղւած Կարապետ արքեպիսկոպոսի գերեզմանի վրայ (նորա առաջ-

Նորդութեամբն է որ Կարնեցիք գաղթեցին Ախալցխա 1828 թվին):  
Թողնելով Վարդավարի տօնի համար պատարագ մատուցանելու կարապետ եպ. Ազվագեանին, Վեհափառը իւր շքախմբով ուղեւորեց ամսի 8-ին Արամաթուման, ուր հասաւ ժամ՝  $7\frac{1}{2}$ : Բժիշկ Ա. Քաբալեան, մէկը հասարակութեան պատգամաւորներից, աղ ու հաց մատուց, տիկինների և օրիորդների կողմից ծաղկէ փունջ մատուց տիկ. Անանեան, Թագաժառանգի կողմից բարի գալուստ մաղթելու ներկագացաւ բարոն Շտամբելէր: Ներկագացան Ալեքսանդրապոլից եկած պատգամաւորներ՝ Տէր-Պետրոսեան և Քորանեան, ժամ՝ 9-ին Վեհափառին այցելեց հոգմարշալ իշխ Տրուբեցկօչ՝ Թագաժառանգ Յսսարենիչի կողմից: Ժամ՝  $12\frac{1}{2}$ -ին Վեհը իւր շքախմբով այցելութեան գնաց Թագաժառանգին: Ընդունելութիւնը տեսեց 15 բոպէ: Ապա փոխ այցի գնաց իշխ. Տրուբեցկօչին, որից էտու դիտեց շինելիք հաջոց եկեղեցու տեղը, այցելեց ուսւաց եկեղեցին, ուր դիմաւորեց ուսւացանան՝ եկեղեցական զասով, օրհներգութեամբ—շարականով:

Ամսի 10-ին վերադարձ Ախալցխա, ժամ՝ 1-ին: Մեծ ոգեորութիւն ժողովրդի: Վեհարանի դահլիճում երգեցիկ խումբ, կազմւած դպրոցների երկու սեռի սաներից, քաղաքակին դպրոցի աշակերտներից՝ երգեցողութեան ուսուցչի զեկավարութեամբ, գուրսը՝ գաւթում՝ երգում էր մի այլ երգեցիկ խումբ: Առանձին ուշադրութեան արժանացաւ Յ. Քաղաքաբեան անունով մի տղայ՝ 10—11 տարեկան՝ իւր երգով ու ջութակի վրայ խաղով: Կաթողիկոսը ցանկութիւն չափուեց եկող տարի նորան տանել էջմիածնի ճեմարանում կրթելու:

Յուլ. 11-ին ուղենորութիւն Աքալքալակ, շքախմբով ու կամաւոր բազմաթիւ այլ ուղեկիցներով: Վերջիններս վերադարձան թրքաբնակ Մինաջա գիւղի մօտերքից: Ճանապարհին շարունակ դիմաւորում էին գիւղական բնակիչներ՝ Ասպինջալից, Օրզալից, Կորխից, Դելիսկալից: Մինչ 100 ձիաւորներ Հայրիկի անւան դրօշակիներով ընդառաջ էին գնացել, որպէս և Ախալքալակի նորա մօտ 70 գիւղերի բնակիչներից մի քանի հազար հոգի սպասում էին: Հայրիկը ընդունեց հասկանալի ողենորութեամբ: Բնակարան պատրաստած էր Օհանջանեան նահապետական մեծ ընտանիքի տանը, որի հանդէան է քաղաքի պարտէլը: Վերջինիս վանդակապատի վրայ զրւած էին ճրագներ, լապտերներ Հայրիկի անւան տառերով: Երեկովեան ճրագալառութիւն պարտէլում և Գովշանթափա կոչւած բլուրի վրայ որ Հայրիկի բնակարանի հանդէսին է երկու վերստ հեռաւորութեամբ: Յուլիսի 12-ին սկսւեց ընդունելութիւնը: Կաթողիկոսը լսեց

գանգատներ քահանան աների վրա ։ (Ախալքալակի գաւառի քահանաների մասին տես մի հիմնաւոր ուսումնասիրութիւն Արսէն վարդապետ Ղլտճեանի, «Մուրճ» 1894 թ. № 9). Կաթողիկոսը լաւանեց որ ամեն ուրեմք բողոք և դժգոհութիւն է նկատած և որ Էջմիածին համելով՝ պիտի մտածի ան գարմանների մասին, որոնք կարող լինեն ժողովրդի և քահանաէի չարաբերութիւնները բարւոքել: Ներկալացան պատւառը քաղաքացիք, արհեստաւորներ, դպրոցի խումբը, Ընդունելութեան մասնաժողովի անդամները և տղեական երիտասարդութիւնը: Մատուցւեց ընթերցարանի տեղեկագիրը Երեկոնք հրավառութիւն:

Ցույիսի 13-ին ուղեղորութիւն դէպի Ալեքսանդրապոլ: Ճանապարհին հազ գիւղերի գիմաւորութիւններ աղու հացով. բազմաթիւ ձիաւրներ, Ուղեկցում էին և գաւառապետը ու պրատի կառավարիչ Աղասիկեան, Ալեքսանդրապոլի գաւառի սահմանի մօտ քաղաքից 44 վերստ հեռու Ղաղանջի հայ կաթոլիկների գիւղը պատրաստել էր պոստի կալարանը՝ կաթողիկոսի զիշերելու համար, և վրաններ՝ շքախմբի համար: Դիմաւորելու եկած էին Ալեքսանդրապոլի հազ հոգենոր և աշխարհական ներկալացուցիչները, որպէս նաև Ալեքսանդրապոլի հայ-կաթոլիկաց առաջնորդ Պօղոս վ. Նահապետեան, երեք քահանաներով և մի քանի քաղաքացիներով: Կաթոլիկ ազգաբնակութիւնը քահանանով հանգերձ՝ սպասում էին Նորա գալուստին, խոտ ու ծաղիկներ էին շաղ տւել ճանապարհին, իսկ մինչ եկեղեցու մուտքը գորգեր էին փուած: Իջնելով կառքից՝ Ահա-փառը ընդունեց քահանաէի մատուցած բուրւառը և խունկը, որ Նա օրհնեց. երգեց Էջմիածին ի Հօրէ, Կաթողիկոսը լորդորեց ժողովը դին որ իրար սիրեն, իրեւ համարիւն հարազատ եղբարներ:

Ալեքսանդրապոլ ժամանեց Նորին Օծութիւնը լույիսի 14-ին, Ազգանոն նաև հայ-կաթոլիկ համախնքը արժանավայել կերպով մասնակցել է ընդհանուր տօնախմբութեանը. կաթոլիկաց եկեղեցու զանգահարութիւնը միախառնւում էր հայ լուսաւորչական եկեղեցիների զանգահարութեան. կաթոլիկաց հոգենոր դասը՝ Գար. վ. Նահապետեան և երեք քահանաներ՝ զգեստաւորւած կանոնել են լուսաւորչական հոգեսրականների հետ Հայունիկի կամարի տակ. Հայրիկը ընդունեց նաև, լույիսի 15-ին, կաթոլիկ հոգեսրականներին, 16-ին Հայրիկը փոխացելութեան համար ուղարկեց կաթոլիկաց առաջնորդի մօտ Ալեքսանդրապոլի լուսաւորչական զաջորդին, և կոնսիստորիայի մի ալ անդամին, նոյն օրը ներկալացաւ Կաթողիկոսին հայ կաթոլիկ համացնքը և միւս օրը կաթոլիկ թէ հոգեսրական և թէ ժողովուրդ ողջ երթի գնացին Հայրիկի մօտ: Եւ վերջապէս 17-ին, երբ

մեկնեց Կաթողիկոսը Ալեքսանդրապոլից՝ կաթոլիկ եկեղեցու զանգակները չախնեցին Վեհի զնալը և շատ հայ Կոթովլիկները կառքերով միացան լուսաւորչականների հետ մինչ Պարաքիլիսա ճանապարհ գցելու, ուր Նոյնպէս հայ կաթոլիկ քահանաները, նման լուսաւորչական քահանաներին՝ ընդունեցին Կաթողիկոսին զգեստաւորած:

Յուլիսի 20 ին Աշտարակի վրայով, երեկոյեան ժամ 7-ին Նորին Վեհափառութիւնը ժամանեց Ս. Էջմիածին, ողջ առողջ, ուղեկցութեամբ մինչ հարիւր ձիաւորների, հայերից և ուներից. Ճեմարանը և նորա վանդակապատը զարդարւած էին զրօշակներով և ոստախիս կամարներով. Մայր տաճարում և գաւիթում մեծ բազմութիւն սպասում էր Կաթողիկոսի գալուստին: Վեհափառը համբուրեց Խջման տեղը և ապա բարձրացաւ վեհարան հանդիսատ առնելու:

Վեհափառի ուղեսորութիւնը դէպի Պետերբուրգ և վերապարձը տեսեց ացագիսով ուղիղ եօթն ամիս, սկսւած լինելով ճանապարհորդութիւնը 1894 թ. գեկտեմբերի 19-ին:

ԿիլիկիԱՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ. «Մուրճ» ի անցեալ համարում չափնեցինք որ չորս եպիսկոպոսներ, որոնք նոր բանտից ազատւել էին, բողոք չարուցին Գրիգոր եպիսկոպոսի ընտրութեան դէմ: Այդ բողոքով նոքա դիմել էին Բ. Դուան: Մենք գեռնս անցեալ անդամ չափնեցինք, որ այդ բողոքագրութեան գործում հաւանականորէն սովորականի կառավարութիւնը ինքը խառն է, իր գրգոր: Մեր ենթադրութիւնը չետու եկած տեղեկութիւններով հաստատւեց: Հաստատւեց որ Բ. Դուանը ոչ միան բողոքադիրը ընդունել է, այլ և գրգել է և թելադրել երեք եպիսկոպոսներին և մի վարդապետին՝ բողոք գրելու որոշ բովանդակութեամբ: Այդ նոքն հոգեսորականներին շուտով Բ. Դուանը ճանապարհածախս տևեց՝ Կիլիկիա վերադառնալու և նոր ընտրութիւն կատարել տալու համար: Նոքա մեկնեցին Կ. Պոլսից՝ առանց գիտութեան Ս. Պատրիարքին Դաւադրութիւնը ակներեն էր: Առ այդ Ս. պատրիարք Մատթէոս արքեպ. Խղմիրլեան փութաց մի կոնդակով քանդել այդ անարժան հոգեսորականների և տաճիկ կառավարութեան խաղերը՝ հրաժարեցնելով այդ հոգեսորականներին բոլոր հոգնոր և ազգակն պաշտոններից: Այդ կոնդակը, որ կարենոր վկանաթուղթ է, առաջ ենք բերում ալսոեղ, բաց թողնելով միան սկզբի ողջոնի խօսքերը:

«Ընդ տիրաւանդ ողջունիս և երկնապարգի օրհնութեանս չափա առնեմք Զեղ ամենեցունց՝ սիրելեացդ ի Քրիստոս թէ տաճն Կիլիկիա Կաթողիկոսական Աթոռն Տ. Մկրտիչ Կաթողիկոսի վախճանմամբ թափուր մնալուն պատճառաւ՝ Ազգակն Կեղրորական վարչութեան

խառն ժողովով որոշմամբ Գեր. Տ. Գրիգորիս Ս. Արքեպիսփոպոս Յովհաննէսեան լուղարկւցաւ վԱտանա՝ իբրև Գործադիր Տեսուչ կատարել տալու համար Կաթողիկոսական նոր ընտրութիւնն, և հետեւաբար վիճակալին Ընտրողական ժողովն, որ կը կազմւի Կիլիկիոց առաջնորդական վիճակաց կրօնական և աշխարհական ներկազացուցիչներէն և Սոու վանուց մէջ գտնւող միաբան եպիսկոպոսներէն ու վարդապետներէն, գումարելով Առանալի մէջ, ստուար մեծամասնութեամբ քւէից, կոչեց ՔԱթոռ Կաթողիկոսութեան Տաճն Կիլիկիոց Ամեն. Տ. Գրիգորիս Ս. Արքեպ. Ալէաթմհան, որու ընտրութեան օրինաւորութիւնն՝ Ազդ. Կեդր. Վարչութեան Խառն Ժողովն ստուգեց ու հաստատեց, քննելէ ինտու վիճակալին Ընտրողական ժողովով հաւաքական եկեղեկագիրն ու չարակից գրութիւններն:

«Մական Մազրաքաղաքիս մէջ ասանջականւած Կիլիկեցի եկեղեցականներէն ոմանք, Ֆունուզի Նիկողայոս, Գաղանձեան Յովհաննէս և Մամիկոննեան Արքահամ Եպիսկոպոսունք և վարդապետ ոմն Կիրակոս անուն, չդիտցիր ինչ շարժառիթներէ ազգւած՝ Բ. Գրան դիմելով գրաւորապէս բողոք բարձին աչ ընտրութեան դէմ և պահանջումներ չարուցին; Բողոքարկուք՝ սոսկ սպասարկու պաշտօնեածներ եկեղեցւու՝ կը համարձակէին հոչակել զիրենք մի միակ ժառանգորդ Սաու Աթոռուն, և կը պահանջէին՝ որ Կաթողիկոսի ընտրութիւնն Սոու վանուց Միաբանութեան կողմէ կատարւի և միաբաններէն մին ընտրէ միան, կը պահանջէին միանգամ ընդ միշտ խափանել Պատրիարքարանի զարաքերութիւններն Կիլիկիոց Կաթողիկոսական Աթոռուն և վիճակաց հետ և նախատինքներ ընելով թէ Պատրիարքարանի և թէ Սրբազն ընտրելոյն անձին դէմ՝ Բ. Գրնէն արտօնութիւն կը ինդրէին ի Կիլիկիա երթալու և աչ պալմանացներք կատարելու Կաթողիկոսական ընտրութիւնն, խոստանալով ժողովուրդն հաւասարմութեան շաւղի մէջ պահել և անդորրութիւնը ըստ առաջնորդն վերահաստատել, որպէս թէ Կիլիկիոց ժողովուրդը տարբեր ընթացքի մը հետեած լինէր և կարօտէր իրենց երաշխաւորութեան:

«Յիշեալ եկեղեցականք աչ իմաստ բողոքագրերու նեքն իրենց ստորագրութիւնը դնելով հանդերձ համարձակած էին խարդախել նաև Ռւլնիոց Գեր. Տ. Կարապետ եպիսկոպոսի ստորագրութիւնն և զան դնել իրենց մէկ բողոքագրին ներքն, որու դէմ Տ. Կարապետ եպիսկոպոսի կողմէ բողոք բարձւելով քննւեցաւ աչդ կէտն և ստուգեցաւ խարդախութիւնն:

«Եւ թէպէտ բողոքարկու եկեղեցականք կոչւեցան ի Պատրիարքարան բացատրութիւն տալու համար իրենց ընթացից վրայ, սա-

կան նոքա մերժեցին ներկալանալ պատասխանելով, թէ Կիլիկիոց Աթոռող մատին իրենց հետեած ընթացից համար պարտաւոր չեն համարիր զիրենք որ և է անձի բացատրութիւն տալու, և ասպէս համարձակելով անպատասխանատու նկատել զիրենք՝ խոչս տվին Մաքրաքաղաքէո առանց Պատրիարքարանի հաւանութեան, ինչ որ կը հակառակի եկեղեցական կարգապահութեան և Ազգ. Պատրիարքարանի առանձնաշնորհմանց:

«Արդ Ազգ. Կեդր. վարչութեան Կրօնական ժողովն իր ամսովս 4-ի գումարման մէջ չիշեալ եկեղեցականաց այս արարքն քննելէ լետու.

«Նկատելով որ հնարներ կը նիւթեն նոքա, որպէս զի որ և է ձեռով բեկանի Կաթողիկոսական ընտրութիւնն, որ կատարւած է ըստ կարգաց և կամոնաց Հակաստանեաց Աւղափառ Ս. Եկեղեցւու և վիճակակին ժողովրդեան աղատ կամաց օրինաւոր արտաքայտութիւնն է.

«Նկատելով որ Կաթողիկոսական ընտրութեան իրաւոնքն, վորձելով վերագրել միմիան Սոու վանուց միաբանութեան՝ Կուզեն ընդդունել թէ Հակաստանեաց եկեղեցւու ընտրական սկզբունքներն և թէ Կիլիկիոց ժողովրդեան ընտրական իրաւոնքն իւլել իրմէ և բրոնանալ Աթոռին վրաւ.

«Նկատելով որ Կաթողիկոսական հոգեոր վերին պաշտօնն լոկ Սոու միաբանաց իր ժառանգական իրաւոնքն հոչակելով և Պատրիարքարանի Կիլիկիոց Աթոռին ու վիճակաց հետ ունեցած չարաբերութիւնն ժխտելով ազգին եկեղեցական ու վարչական միութեան կապերն խզելու փորձ կը փորձեն.

«Նկատելով որ Կիլիկիոց ժողովրդեան մէջ երկապառակութիւն չարուցանելու տրամադրութեամբ փախուստ կուտան Մաքրաքաղաքէս.

«Եւ նկատելով որ նոյն իսկ ստորագրութիւն կը խարդախեն, Կրօնական ժողովն այս նկատողութեանց առջև չիշեալ չորս եկեղեցականաց արարքն իրենց կոչման և ուստին պարսականութեանց հակառակ գտաւ, և միաձանութեամբ որոշեց զանոնք դադրեցնել հոգեերէ և աղջալին պաշտօն կատարելէ ցնոր տնօրէնութիւնն.

Ակրօնական ժողովու սոյն որոշումն հաստատելով և մեք՝ մեր այս շրջաբերական կոնդակաւ կը ծանուցանեմք բոլոր պաշտօնէից եկեղեցեաց Մաքրաքաղաքիս և զաւառաց, թէ ի վերև չիշեած Կիլիկալոս, Յովհաննէս և Աքրանամ եպիսկոպոսունք և Կիրակոս վարդ. արքիլւած ևն մինչ ցնոր անօրէնութիւն հոգեոր և աղջալին պաշտամանց կիրառութենէ և կաղաչնմք զԱստած զՀայր մեր երկնաւոր, որ առաքելական Հակաստանեաց Ս. Եկեղեցւու փառաց և հա-

ւատացելոց շինութեան և միութեան համար միշտ իրական բանին ու օգուտը խորհող, խօսող և զործող ամեն աստիճանի հայ եկեղեցակաները փրկէ ամենաչն չարէ և պահէ լավա տեսակ վորձութենէ՝ և Ս. Եկեղեցւոք օրինաց, կարգաց և կանոնաց հաւատարիմ ու հնագանդ և ազգակին իրաւանց անվթար պահպանման նախանձախնդիր մեր բարեպաշտ ժողովուրդը պահպանէ բարձրեալն Աստւած իւր Ամենախնամ Աջոն հովանոցն ներքեւ, ամէն:

Տւեալ ի Պատրիարքարանի Հայոց Կ. Պոլոտ 7 լուլիս 1895 և ի տոմարական թւականին ՌՅՒԿ, թիւ 26.

ՆԵՐՄԻՍԵԱՆ ԴՊՐՄՆՈՑԻ ՏԵՍՉԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ: «Մուրճ»-ի անցեալ համարում հազորդեցինք արդէն, որ չիշեալ դպրանոցի հոգաբարձութեան կողմից կատարած ընտրութիւնը դպրանոցի տեսչութեան պաշտօնի համար, այն է պ. Կոն Սարգսեանցին, Կաթողիկոսը չէր հաստատել: Ըստ կանոնադրութեան, հոգաբարձութիւնը, ունենալով նախագահ թեմական առաջնորդին, կատարում է տեսչի ընտրութիւնը ձաների առաւելութեամբ և ընտրւածը ներկայացնուամ է կաթողիկոսին, ի հաստատութիւն: Կաթողիկոսը կամ հաստատում է և կամ չի հաստատում. վերջին դէպքում հոգաբարձութիւնը կատարում է նոր ընտրութիւն: Ներկայ պարագայում նախագահը (թեմական առաջնորդ) համաձան չէր հոգաբարձութեան ընտրութեանը ընտրւած անձի վերաբերութեամբ. բայց հոգաբարձութիւնը, հիմնելով իւր կայացրած վճռի վրայ, արդէն հրաւիրել էր պ. Սարգսեանցին ստանձնելու դպրանոցի գործերը մինչև կաթողիկոսին զեկուցում տալը և նորանից հաստատվիլը: Խմանալով այդ՝ առաջնորդ-նախագահը գրաւորապէս չափնել է հոգաբարձութեանը, որ մինչ կաթողիկոսի կարգադրութիւնը, նա փակում է հոգաբարձութեան նիստերը և արգելում է պ. Սարգսեանցին դպրանոցի գործերը ընդունել և վարել և այդ առթիւ առաջնորդը զեկուցանում է կաթողիկոսին մի գրութեամբ 22 լունիսի, համարով 339: Երբ կաթողիկոսը, վերապարձին Պետիրբուրգից, Բորժոմ էր գտանում, հոգաբարձութեան երեք անդամներ ներկայացան Նորան աչդ խնդրով որից էնտոց, Վեհափառ Հայրապետը Ախալքալաքից ուղարկեց թեմական առաջնորդ Գէորգ արքեպ. Սուրբնեանցի անունով մի կոնդակ, թւագրած 12 լուլիս 1895 թ., համար 348: Աչդ կոնդակի մէջ, դէպքերը համառօտակի թւելուց և լաւանելուց էնտու թէ պ. Լ. Սարգսեանին ընտրութեանը հաւան չէ և ոչ էլ կարող է հաստատել նորան իբրև տեսուչ Ներսիսեան դպրանոցի, այլ նաև պատրիքելով առաջնորդին որ հոգաբարձութեան (ասւած է՝ խորհրդարան) նիստերը բացելով՝ ձեռնարկէ նոր ընտրութեան, կոնդակը շարու նակուամ է ակսպէս:

«Գիտէք Դուք զկոչումն պաշտօնի Զերու և Մենք դարձեալ յուշ առնեմք Զեզ, զի Դուք իբրև փոխանորդ պատասխանատու ի կողմանէ Մերու, ունիք լիազօր իրաւունս կասեցուցանել զընտրութիւն, եթէ հոգաբարձական ժողովն ինքնակամ ազատութեամբ իրաւունս համարի ինքեան, զի չազդմ պարագափի ոչինչ զօրէ ձանից առաւելութիւն, եթէ ընտրեալ անձն չունիցի զարժանաւորութիւն և լարմարութիւն այնմ պաշտօնի. Գիտէք Նաև թէ ոչ միայն Հալոց Հալրապետ, այլ և Դուք ընդ Մեզ հաւասար պատասխանատու եմք առաջի Աստուծու, առաջի Տէրութեան օրինաց և առաջի Հակաստանեաց եկեղեցւոց սրբութեան, եթէ Ներախւեան դպրանոց վրիպի իւր հոգեոր ուղղութեան նպատակէն:

«Լիալու եմք, զի Դուք զայս ընտրական ինսդիր Զեր խոհական իմաստութեամբ այնպէս կարգադրեսջիք, որ այս ևս չասուցանէք բան առ Մեզ, բայց եթէ միայն սոսկ և պարզ տեղեկագիր Աւ ինձ ըստ ամենանի սիրելի է, զի պատւարժան հոգաբարձութիւն, լարդելով զբան Հալոց Հալրապետին, համաձայն և համերաշմ զործեսցէ ընդ Զեզ, իմաստուն հեռատեսութեամբ խորհելով, թէ քանի անդէպ է ի ժամանակիս զարմիկ չարուցանել զայսպիսի մասնաւոր և անախորժ խնդիր, որ ծառայէ չաւէտ երկպառակութեան և ոչ խաղաղութեան».

Նոր ընտրութեամբ՝ վիշեալ դպրանոցի տեսուչ, 19 ին լուլսի, ընտրւած է պ. Սամուէլ Քալազեան, որ և առաջարկւած է Կաթողիկոսին ի հաստատութիւն:

**ՕԳՆՈՒԹԻՆ ՍԱՍՈՒՆՑԻՆԵՐԻՆ:** Խմբագրութիւնս ստացել է Մուշի առաջնորդարանից մի գրութիւն ստորագրութեամբ առաջնորդական տեղապահ հակոց Կինձի Վարդան վարդապետ Յակոբեանի, վանահօր Մուշի Ս. Առաքելոց վանքի Յովհաննէս վարդապետ Մուրագեանի, առաջնորդարանի քարտուզար Յ. Թուխիկեանի, Հակոց. Միաց. Ըսկ. Մշու վարժարանների տեսուչ Տ. Վարժապետանի և բողոքական քարոզիչ Յակոբ Միրզոյեանի, ուր նկարագրւում է սասունցոց անօդնական գրութիւնը և շատերի սովամնն լինելու վտանգը.

«Սասուն-Դալւորիկ աղետալի, ամենայցաւալի և սրտաճմիկ անցքերը, քառասունէ աւելի զիսդերու արեցաւեր լինելն, գովից, ընչից և անասնոց գրաւիլն ու թալանւիլն և կոտորածէ զերծ մնացած ազդ վատարաղիկներու ի սփիւռ աշխարհի մուրացկանութեան համար թափառաշըջիկ լինելնին համայն ազգանոց չափս է արդէն:

«Յորչափ կարելի էր Մշու քաղաքացիք և զիւղացիներն ապաստան ու պարէն տալով ցարդ օգնութեան հասան, բայց մշեցիք ևս ոչ նւազ վիճակակից են դաւառացիներու. ուստի անհնար է օգնու-

թեան այլ ևս հասնելու փրկել սովամահ կորնչելէ այդ անտուն, անտէր, անպատճապար և զրկեալ ամենաշւառները:

Հետեանքն բնականաբար մահ պիտի լինէր սովալըլուկներու որք համանգաման կրած էին մերկութեան և անպատճապարան մնաց լու դժնղակ ազգեցութիւնը. ներփակ ցուցակն աւելի պերճախօս պիտի լինի, լորում նշանակած են սովամահ կորնչողները (մեզի պաշտոնէ հաղորդած) և թէ որչափներ կան դեռ անցաւու:

«Արու՝ նկատելով այդ խեղճերու ամենադառն կացութիւնը, նկատելով մշեցիներու օգնութեան հասնելու անբաւական և անձեռն. հաս գոնսիլն և, որ առաւելագոյն է, նկատելով որ նօթութիւնն սկսած է իւր զոհերն ունենալ՝ կուգամք հրաւէր կարդալ համազգականոցմ լանուն կրօնի բարեպաշտական զգացմանց, լանուն մարդասիրութեան և լանուն հաջութեան՝ օգնութեան հասնել Սասուն-Դալուրիկի կոտորածէ զերծ մնացած սովալըլով թշառներուն:

«Համան պատարժան ազգայնոց լուսան պիտի փրկէ կեանքեր, պիտի սրբէ անզաւակացեալ մարց, ի սուր և ի հուր մատնեալ այրիներու և որբերու արցունքները»:

Այդ գրութեանը կցւած է «Աշնանէ ի վեր սովամահ մնոնողներու պաշտօնական ցուցակ» իրենց անուններով, ուր վիշւած են 46 հոգի սովամահ եղածներ Սէմալ, Շէնըկ, Հիթենք գիւղացիներից. չհաշւած Աղբիկիւղի սովամահ եղածներին:

Յիշեալ մասնաժողովը մէկն է այն մասնաժողովներից, որ կազմել է պատրիարք Իզմիրիեան Հայոստանում. Նւէրները ուրեմն կարելի է ուղարկել Կ. Պոլիս պատրիարքին.

**ՔԱՂԱՔԱՑԻՆ** ԽՆՔՆԱՎԱՎԱՐՈՒԹԻՒՆ. Պետական խորհուրդը, քննելով ներքին գործերի մինխատրի առաջարկը՝ 1892 թւականի քաղաքակին ինքնավարութիւնը մտցնել կովկասի այն քաղաքներում, որտեղ չեն մտցրած 1870 թ. քաղ. ինքնավարութեան վերաբերեալ օրէնքները, որոշեց Թիֆլիսի նահանգի՝ Թելաւ, Սղնախ, Գուշեթ և Ախալքալակ, Բագրատ նահանգի՝ Գուբա, Լենքորան և Շամախի, Երևանեան նահանգի՝ Ալեքսանդրապոլ, Նոր-Բայազէդ, Նախճանան և Օրդուբատ, Քութաչիսեան նահանգի՝ Սուխում և Օզուրգէթ, Կուրքամսին նահանգի՝ Ս. Խաչ, Դաղստանեան շրջանի՝ Թէմիր-Խան-Շուրա, Դերբէնդ և Պետրովսկ—քաղաքներում գոլութիւն ունեցող քաղաքակին վարչութեան փոխարէն՝ մտցնել 1892 թւականի չունիսի 11-ին բարձրադրուն հաստատած քաղաքակին ինքնավարութիւնը.

Ա. Դաղստանի շրջանի Թէմիր-Խան-Շուրա քաղաքում թուղարել քաղաքակին ինքնավարութեան պարզ ձեւ՝ այն կարգով, ինչպէս ցուց է տրւած քաղաք. կանոնադրութեան 22-րդ չօգւածում:

III. Վերովիշեալ տեղերում քաղաքալին ինքնավարութիւնը մտցնելու համար անհրաժեշտ կարգադրութիւնների իրազործումը նահանգական և քաղաքական պատգամաւոր առեանների վրայ դնել՝ ներքին գործ. մինիստրի ընդհանուր առաջնորդութեամբ և վերահսկողութեամբ:

IV. Կարսի շրջանի քաղաքներում, նորնափէս և Բաքվի նահանգի Գեօքչայ և Սալիխան աւաններում և Զաքաթալալի շրջանի Զաքաթալա քաղաքում քաղաքալին տնտեսութեան կառավարութիւնը թողնել անպէս ինչպէս որ կակ, այն պայմանով, որ այդ տեղերում 1892 թ. քաղաքալին ինքնավարութիւնը մտցնելու առաջարկը իւր ժամանակին ներքին գործերի մինիստրին ներկայացնելի ի հաստատութիւն:

Թագաւոր կազմը պետական խորհրդի բացատրած կարծիքը 1895 թ. մայսի 29-ին բարեհանեց հաստատել և հրամանեց գործադրել:

Ազսպիտով ուրեմն, որ ինչ վերաբերում է Անդրկովկասին, 1892 թւականի ինքնավարութիւնը մտցնում է 19 քաղաքներում, որոնց քնակինների ընդհանուր թիւն է մոտ 200,000 հոգի:

Մինչև այժմ Անդրկովկասի այն քաղաքները, ուր գոյութիւն ուներ քաղաքալին լայնածաւալ ինքնավարութիւնը, հանեալներն էին՝ Թիֆլիս, Բաքու, Երևան, Գութալիս, Բաթում, Փոթի, իսկ կրծառ ծաւալով՝ Գորի և Ախալցխա:

**ՀԱՅՈՅ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ՖՈՆԴԻ օգտին ստացանք պ. Գէորգ Ղազարեանից (Արտ) 1 ռուբլի: Ընդամէնը ցալժմ ստացած ենք 33 ռ. 50 կոպ: ԳԱՂԹ ԳէՊՈ Թիֆլիսի կուբանի նահանգի (Հիւսալին կովկաս) Ղարաբարգա, Ռուռուսի, Կոնոկով, Կուրոկով գիւղերի (Առւ) լեռնական մահմեղական ընակիչներին թուլատրած է Թիւրքիա գաղթել: Մինչ լուլիս ամիսը թուլատութիւն էին խնդրել գաղթելու 647 տուն (2.059 հոգի). բայց ինդիբներ տալը շարունակում է, անպէս որ դադթողներ կը լինեն երեխ մինչ 1000 տուն: Ազատ մնացած հաղերի վրայ մտադրութիւն կաէ բնակեցնել կովկասեան հին դինուրներին:**

«ՄՇԱԿ» ԼՐԱԳՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԻՒՆՑ: «ՄՇԱԿ» լրապետ հրատարակիչ Մարիամ Մշկանի մահով, որ տեղի ունեցաւ ամսութիւն, թերթի հրատարակութեան իրաւունքը, ըստ կտակի հանգստեալ տիկնոջ, անցնում է լրագրի հիմնադիր հանգուցեալ Գրիգոր Արծրունու եղբօր՝ պ. Անդրէաս Արծրունուն, որ ներկայումս պրոֆեսոր է Ախէնի բազմաբևեստեան դպրոցում: Համաձայն այդ կտակի՝ «ՄՇԱԿ»-ի ղեկավարութիւնը պիտի պատկանի խմբագրական խորհրդին, բազկացած ապագայ խմբագրից, ապագայ հրատարակչից, պ. Յովհաննէս Տէր-Մարկոսեանից և ալ. Խ. Մալումնախից, Խալ-

եթէ պ. Անդրէաս Արծրունին հրաժարակութեան իրաւունքից, և կամ նորա մահւան դէպքում, թերթի հրաժարակութիւնը անցնում է հանդուցեալ Մարիամ Մելիք-Ազամալեանի անշափահաս քրոջորդի կոնսու Տիգրանեանին, և անշափահաս եղբօրդի Յովսէփի Մելիք-Ազամալեանին:

Պ. Անդրէաս Արծրունին ընդունել է կտակը և դատարանի կողմից հաստատել իւր իրաւունքների մէջ:

**ՀԱՅԵՐԵՆ ԼԵԶՈՒՆ** պետական գպրոցների աշակերտների համար: Յակոնի է ամենքին, որ պետական միջնակարդ գպրոցներում (գլոմերատներ, ռէալական դպրոցներ) հայերէն լեզուն հայ աշակերտներին և աշակերտունիներին դասաւանդուում է աճնպէս, որ մեծ մասամբ աւարտուները ոչ խօսել և ոչ կարդալ-զրել են սովորում: Այդ հանգամանքի նշանակութիւնը ակներեւ է ամենքին: Աւարտողները յետառ դժւար կարողանուում են ձեռք բերել մայրենի լեզով խօսելու և գրել-կարդալու հարկաւոր վարժութիւնը. և մեր թէ մատուցը մասնաւորապէս և թէ գրականութիւնը առանասարակ սակաւ բացառութիւններով մնում են նոցա համար խորթ ամբողջ կեանքի ընթացքում:

Հրամակութիւնը ծանր ծնողներին և այդ կարգի աշակերտների ուշադրութիւնը այդ ծանր հանգամանքի վրայ խորհուրդ տալով որ այդ աշակերտները, փոքր խմբերով՝ հայոց լեզվի գասեր առնեն մասնաւոր ուսուցիչների մօտ:

**ՄԱՍՆԻՉ ՄԱՍԻՐԵ**, Ներկայ լուրիսի 22-ին, Կ. Պոլսում, Խոմկիտարիի քաղաքամասում, գիշերը սպանւեց այն մատնիչը, որ վարդապետ եղած ժամանակ Մամբրէ անսուն էր կրում, իսկ կարգալոց լինելուց չետուք՝ իւր աշխարհական անունը Ալէքսան Պէնթան: Նման մատնիչ բժիշկ Յիւթիւնձիւրի, որ սպանւեց Պոլսում լունիս ամսին, մատնիչ Մամբրէն ևս տարիներ առաջ լեզափոխական էր. 1890 թ. առաջն չարժուների մէջ զեր կատարեց նա իւր պարագլուխներից մէկը, որ եկել էր Պոլսի Բարձրիդի ս. Յովհաննէս վանքից և միացել Համբարձում Բոլաճեանին (Մուրադ), Միհրան Դամասեանին և ուրիշներին, որոնք ձեռքակալեցին, բացի մի օտարահպատակից և Մամբրէից, որը արդէն մատնիչի դեր էր կատարում: Նորա ցուցմունքներով կատարեցին ձեռքակալութիւններ Պոլսում և Տրապիզոնում: Եգտւելով մատնիչի վրութիւնից՝ նա վախի մէջ էր սպահում այն ամենքին, որոնցից կամենում էր գրամ կորզել:

**ԻԶՄԻՐԼԵԱՆԻ ԼՈՒՍՍԱԿԱՅՐԵՐԵՐ**: Խմբագրութեանու մէջ ստացւած են Կ. Պոլսի քաջարի հայոց պատրիարք Մատթէոս արքեպ. Խզմիր-լեանի լուսանկար նոր պատկերները իննը տեսակ մեծութիւններով

և գիրքերով, զործ լուսանկարիչ Մ. Կոնտաճեանի (M. J. Contadzian), որ ունի իւր արհեստանոցները Պարիղում և կ. Պոլսում: Գները սկսած 30 կոպէկից մինչ 1 ռ. 50 կոպէկ: Ստանալու համար կարելի է դիմու Տիֆլոս, տիոգրաֆիա Ռոտոնդի, Ղ-իւ Դաвид Սարգսյան:

**ԳՈՐԾԱՐԱՆԱԿԱՆ ՅՈԲԵԼԸԱՆ ԲԱԲԱՑԵԱՆԻ:** «Մուրճա-ի անցեալ համարում մենք ծանուցինք պ. կարապետ Բաբայեանի մետաքսի մանարանների գոլութեան 25 ամեակի մասին: Մեր թղթակից պ. Աւ. Դաւթեան, որ ներկայ է եղել լոբելնական ճաշկերովթին, մեզ ուղարկել է մի մանրամասն նկարագիր, որից կարեոր ենք համարում քաղել հետեւալները.

«Գործարանը իւր բարերար ազդեցութիւնը տարածում է տեղական ազգաբնակութեան վրայ: Վերջինս, Օրդուրաթում, բաղկացած է ամենասնեծ մասամբ թուրք ազգաբնակութիւնից, որը մեզանում առհասարակ լաւտնի է իւր աւազակաբարու բնաւորութեամբ: Սական նկատւած է, որ, գործարանը հիմնելուց լետու սկսել է կամաց կամաց աւազակութիւնը վերանալ նորա միջից, որովհետեւ գործարանը միջոց է տալիս մօտ հարիւր հոգու իրենց ձեռքի աշխատանքով մի կտոր հաց վաստակելու: Թուրք կինը, որը իր տան չորս պատից դուրս ոչինչ չէր ճանաչում, աւսոր գործարանի չնորհիւ դուրս է կանչել դէպի ինքնուրուն աշխատանքի ասպարէզ: Բայց այդ քաղլը շատ էլ նեշտ կերպով չի կատարել թուրք կնոջ համար: Խաւարի զաւակները այս դէպօւմ էլ առաջ գալով՝ կամենում էին կապանքների շղթաները ամբացնել: Դա լինում էր մի քանի ու է ի գ'ների միջոցով, որոնք ինչ ինչ հաշիւներ ունենալով գործարանատիրոջ դէմ, բացատրելում էին թէ թուրք կինը, գործարան լաճախիլով, բարուականութեան դէմ է վարում: Ասկան ազդ նոցաչի լաջողում, որովհետեւ կառավարութիւնը, որ միշտ պաշտպան է ամեն հասարակօգուտ ձեռնարկութեան, այս դէպօւմ ևս պաշտպան է հանդիսանում պ. Բաբայեանցին և զսպում է խոռվութիւնները: Ներկալում կանաչք անարգել շարունակում են լաճախել գործարանը: Նոցա թիւը համնում է 40-ի, որոնց թւում և ութ հայ կին: Խակ կին և տղամարդ բանւորների թիւը մանարանների երկու գործարաններում համնում է 100-ի»:

Ճաշկերութին հրավիրւած են եղել մինչ 150 հոգի՝ Օրդուրաթից և Գողթան գաւառից: Ներկայ էին նաև Նախճաւանի գաւառապետը, Նընանի Նահանգական զատախազի օգնականը: Ի թիւս մինչ 50—60 հեռագիրների՝ կար նաև Նընանի Նահանգապետի հեռագիրը, որով չնորհաւորութեան հետ միասին լայտնում էր որ պ. Բա-

բայեանի մասին շուտով պատիւ կ'ունենաէ զեկուցանելու Կովկասի կառավարչապետին:

ԴԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԱԿԱՆ ՍԱՀԱՅՈՒՆՆԵՐԸ սկսում են բացել կան անց համար: Ամենից առաջ Հետելքերգի համալսարանը եղաւ, որ կանանց թուլ տւեց դասեր լսելու բնագիտական-մաթեմատիկական բաժնում: ալժմ Բրեսլավի համալսարանն է, որի ակադեմիական սենատը նորերս վճռեց թուլ տալ աղջիկներին և կանանց, որոնք վարժուհու դիպլոմ ունեն՝ լսել դասախոսութիւններ իր կողմնակի լսողներ: Այդ վճիռը կացացաւ իր պատասխան մի խնդիրքի, որ ներկացացրել էր համալսարանին Verein für Frauenwohl (Կանանց վիճակը բարւոքող ընկերութիւն): Նույն ընկերութիւնը դիմել էր նաև Պրաւիալ ժողովրդական լուսաւորութեան մինիստրին: Վերջինս սակայն չէր թուլ տեսլ իրեն ցուցմունքներ անելու, չկամենալով խառնւել համալսարանական ինքնավարութեան մէջ: (Պէտք է նկատել որ Գերմանիայում համալսարանները ինքնավար են, և ամեն մէկը զորահամար ունի իւր սենատը՝ բաղկացած պրոֆեսորներից, շատ տարբեր Ռուսաստանից, ուր համալսարանները բոլորովին ենթարկւած են կառավարութեան):

ԽՌՈՂՈՂԻԹԻՒՆՆԵՐ ԹԱԼԻՔԻԶՈՒՄ: Յուլիսի 22 և 23-ին հայի և մսի թանկութեան պատճառով մահմեդական ժողովուրդը մեծ խռովութիւններ արեց, չարձակւելով Ատրպատականի ընդհանուր կուսակալի տան վրայ: Ամբոխը սպատիւնեց սուսաց հիւպատոսին, որը պաշտպանութիւն ցուց տեսց դիմելով պարսից կառավարութեան՝ ժողովուրդը հանգստացնելու համար: Խռովութեան մէջ մասնակիցներին նաև կանաքը:

ԵՐԿՐԱՆԱՐԺՆԵՐ ԱՆԴՐԱԿԱՍՊՈՒԹԻՄ: 27-ն չունիսի դիշերւալ ժամ 2 և 28 րոպէ Ասխարագում զգացւեց սաստիկ երկրաշարժ, երկու ստորերկրեաց հարւածներով, որոնցից առաջնին հետևեց խուլ ձայն: Տների պատերը սոսկացին, իսկ մի քանիսները ճեղքեցին: Խիստ հարւածները նոյն ժամին զգալի եղան Անդրկասպի՞ի նաև ազլ տեղերում: օրինակ երկաթուղու 134-րդ վերստի վրա՞ երկրաշարժից ցածացաւ գետինը 200 սաժէն (428 մէտր) երկարութեամբ: մանաւոնդ խիստ էր շարժը ուղիի 174-րդ վերստի վրաէ Կիզանջակ'ում, ուր վայր ընկած մի խողովակով սպանւեց մի աղջիկ: Կազանջիկ կաչարանի շինութիւնը նշանաւոր ճեղքւածներ ստացաւ: 651-րդ վերստի վրայ Տեղեն կաչարանի ժամացոլցը կանգ առաւ:

Անդրկասպիում ալս տարի դորանով երկրորդ երկրաշարժն է լինում: առաջինն էր 5-ն չունւարի, որով կործանւեց Պարսկաստանի կուչան քաղաքը:

Երկրաշարժը գլխաւորապէս տարածւեց Ասխարադից դէպի

արևմուտք, մինչ կասպից ծովի արևելեան ափերը: Ուզուն Աղավիդ տեղեկացրին, որ ծոցի լատակը և ինքը գետինը երկու ոտնաչափ ցածրացան. Փարւատէրի խորութիւնը առաջւայ 8 ոտի տեղ՝ այժմ 11 ոտաչափ է: Ծովի ջուրը հաւասարւել է ափունքի հետ, այնպէս որ վտանգ է սպառնում ծովալին հեղեղի:

**ՀԱԻԹԻԱՆ գիւղը.** Պարսկաստանի Սալմաստի գաւառում, բաղկացած 320 զուս հայ տներից, ասլրիլի 1-ին չետ զնեց գիւղի հողերը, թէգականից գարձնելով գիւղական սեփականութիւն: Գիւղի հողերը մի ժամանակ Ատրպետականի փոխարքայ և Պարսկաստանի գահաժառանգի անձնական գանձարանի հարկատու գիւղ էր, բաց աւելի քան կէս զարուց ի վեր բացի տարեկան որոշ տուրքից՝ գիւղը ազատ էր տասանորդի հարկից, տարապարհակ աշխատութեան հարկից և այլն, այնպէս որ Հաւթւանը աւատական գիւղերի դրութեան մէջ չէր: 1894-ին սական Դահաժառանզը, գիւղը իւր սեփականութիւնը ճանաչելով, ծախու դրեց Հաւթւանի գիւղի հողերը, առաջարկելով հաւթւանցիներին զնել գիւղի տեղը. բաց գիւղացիք չուզեցին: Գիւղը գնեց Թաւրիզի քաղաքավուս, քաղաքի հաջ թաղերի դատաւոր Ղալաբէզը 4200 թումանով (մօտ 20000 ֆրանկ), որը կամեցաւ Հաւթւանում մտցնել աւատական (Փէօրալ) դրութիւնը, Դորանից սկսւեց խոռվ դրութիւն, որ առաջացրեց նաև բազմաթիւ բանտարկութիւններ: Դործը վերջացաւ նորանով, որ, միջնորդութեամբ հաջոց առաջնորդի, գիւղը գնեց հողերը Ղալաբէզից 7000 թումանով (մօտ 35.000 ֆր.), որով և զարձաւ սեպհականատէր իւր հողերի, շարունակելով վճարել գանձարանին միան նախկին որոշ տուրքը:

**ՊԱՐԼԱՄԵՆՏԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ.** Պահպանողական կուսակցութիւնը վճռողական լաղթանակ տարաւ: Ընտրւած հն պահպանողականներ՝ 341 հոգի, լիբերալ-ունիտնիստներ՝ 70, լիբերալներ՝ 177, պարնելականներ 12, հակապարնելականներ 70 հոգի:

† **ՍՏԱՄԲՈՒԼՈՎ (Ստեփան),** Բոլգարիակի նախկին առաջին մինիստր և դիքորատոր, վախճանւեց չուլիսի 6-ին, զոհ գնալով սպանիչների աւած ծանր վերքերին: Ծնւեց 1853-ին Բոլգարիակի Տրնովո քաղաքում, ուսեց Օղեսակի հոգեսոր սեմինարիացում, որ նա թողեց՝ հայրինիք գնալուն տաճկական բարբարոսութիւններով բռնկւած ապստամբութեան և չեղափոխական խմբերին մասնակցելու համար, որոնց ոգին դարձաւ նա ու 1875 թվին գլուխ էր անաջող վերջացած մի ապստամբութեան: Նա ապաստան գտաւ Ռումանիացում, շարունակելով լեղափոխական դործը: Ռուս-տաճկական պատերազմին նա իբր կամաւոր մասնակցեց: Պրինց Բատտեմբերգի Բոլգարիակի իշխան ընտրւելուց իւսու՝

նա ընտրւեց Տրնովի պատգամաւոր ազգային ժողովի, ուր երկու տարի նախագահ եղաւ: Երբ 1886 թ. օգոստ. 21-ին չեղափոխութիւնը դահնիեց արեց իշխանին՝ Ստամբուլով խորտակեց Սոֆիակում կազմը և ամսագրեց ժամանակաւոր կառավարութիւնը, ինքը նոր մինիստրութիւն կազմեց և իւր ընկերների հետ երկրի խնամակալը դարձաւ, չաջողցրեց Բատտեմբերդի վերադառնալը, որ եկաւ ու ինքնակամ հրաժարական տալով հեռացաւ: Ստամբուլովի ազգեցութեամբ էր որ ազգային մեծ ժողովը իշխան ընտրեց 1887 ին պրինց Ֆերդինանդ Կորուգին, որը սական պաշտօնապէս չճանաչւեց Ռուսիակից և միւս պետութիւններից: Գաճի գլխաւոր նեցուկը եղաւ Ստամբուլով, աւելի ու աւելի զրդութով իւր գէմ Ռուսիակին: 1893-ին նա չաջողցրեց Ֆերդինանդի ամուսնութիւնը Պարմի կաթոլիկ իշխանունի Մարի-Լուիզի հետ և չաջողցրեց որ ազգային ժողովը ընդունել այն օրէնքը, որով գաճակալը չպէտք է պարտաւորիչ կերպով լուսադաւան լինի: Ալդքան զօրաւոր իշխանութիւն բանեցնելով՝ նա ստիպւած էր կուել իւր ներքին թշնամիների դէմ, որոնց հետ նա վարւեց անողորմ կերպով: Մեծ զրգութնաք լառաջացրեց նա իւր գէմ, ի միջի ալոց, գնդապետ Պանիցային մահամ զատապարտելով: 1894 ին իշխան Ֆերդինանդ իրան ստիպւած տեսաւ զոհել իւր առաջին մինիստրին: Անցեալ աշնանը ազգային ժողովը որոշեց պարլամենտական դատ սկսել Ստամբուլովի դէմ՝ նորա կատարած ազօրինութիւնների համար: Կամենալով արաւասահման գնալ՝ նա անցագիր չստացաւ, քննիչ մամնաժողովի պահանջմամբ, նա գիտակ էր, որ իւր թշնամիները նորան սպանելու հն պատրաստում: Եւ նա սպանեց այն ժամանակ, երբ բոլգարական մի պատգամաւորութիւն, առաջնորդութեամբ Ալիմենտ մետրոպոլիտի, ներկայ լուկիսին Պետերբուրգ ուղերձուեց՝ Ալեքսանդր III-ի գերեզմանի վրայ ուսկէ պսակ գնելու: Մի զուգապիտութիւն, որ շատերին ենթադրել տեսեց թէ կատարւած սպանութիւնը քաղաքական հիմք ունէր: Սակայն աւելի հաւանական է կարծել որ նորա սպանութիւնը կատարւած է պարզ վրէժինդլութիւնից՝ Պանիցայի և ալոց բարեկամների կողմից: Նորա չուզարկաւորութիւնը և թաղումը տեղիք տեսեց մեծամեծ շփոթութիւնների և անպատճենների, լոգուտ Պանիցայի և ալ մահամ պատժւածների:

Ինչ էլ որ լինեն Ստամբուլովի սպանութեան խկական շարժաւիթները, ալս մէկը հաստատ է որ Ստամբուլովը, իւր ութամեակ կառավարութեան միջոցին՝ Յոլգարիակի համար սաեղծեց պատւաւոր անուն և դիրք, երկաթի կամքով գործելով որպէս հալրենասէր, որին վիճակւած էր կուել նաև արտաքին զօրել ազգեցութիւնների հերի տակ զործող թշնամական կուսակցութիւնների հետ:

† ԳՆԱՅՈՒՏ (Ռուդոլֆ), որ վախճանւեց լուլիսին, նշանաւոր իրաւագէտ էր և քաղաքագէտ, ծնւած 1816 թ. Բերլինում, ուր 1844-ից սկսած պրոֆեսոր էր, 1858-ից՝ լիբերալ անդամ պրուսական պատգամաւորաց ժողովում, 1867-ին՝ ռեզիստացի անդամ, 1875 ին՝ բարձր վարչական գատարանական խորհրդական, մանաւանդ վաստակ ունեցաւ նորագոյն գերմանական գատարանում գրածքն է «Անգլիական վարչական իրաւունքը ներկայումս», ապա՝ Խնքնալվարութիւնը Անգլիակում (գրած 1871 թ.), Անգլիակի սահմանադրական պատմութիւնը (1882), և այլն.

† ՄԱՐԻԱՄ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵՍԻ. Կարճատես հիւանդութիւնից լետոյ լուլիսի 17 ին վախճանւեց «Մշակ» լրագրի հրատարակիչ Մարիամ Մելիք-Աղամալեան 45—46 տարեկան հասակում. Մ. Մելիք-Աղամալեան մէկն էր այն ոչ բազմաթիւ հայ կանանցից, որոնք ձգտել էին Ուստաստանում և արտասահմանում կրթութիւն ստանալ և հասարակական ու գրական կեանքին հետեւ. Ազդ սերնդից, որ աւագ սերունդն էր կովկասեան հայ կին գործիչների, որը իրեն նւիրեց մանկավարժական ասպարէզին, որը գրական և որը ազ հասարակական գործունէութեան: Հանգուցեալը, նախկին տիկին Քոչարեանց, 70-ական թւականների վերջներից սկսած կենակից եղաւ հանգուցեալ Գրիգոր Արծրունուն, անբաժան մանակցութիւն ունենալով նորա լրագրական գործունէութեանը մինչ Արծրունու մահը. Արծրունու մահւամբ՝ նորա կտակով՝ «Մշակ»ի հրատարակութեան իրաւունքը անցաւ տիկ. Մարիամ Մելիք-Աղամալեանին, որը, որպէս պէտք է եղրակացնել ազդ թիրթի խմբագրական ջօղւածից, գրւած նորա մահւան աւիժով, զլսաւոր զեկավար անձն էր ներկալանում թիրթի ուղղութեան գործում Գ. Ալծրունու մահից լետոյ Հանգուցեալը դուստրն էր անցեալ տարի վախճանւած լայտ նի Վահրաման Մելիք-Աղամալեանի: Նա թաղեց Գր. Արծրունու գերեզմանի կողքին, Թիֆլիսի Խոջիվանք կոչւած զերեզմանաստանում:

† ՏՈՒՏՈՒԽԵԱՆ Յարութիւն. Ներկայ լուլիսին վախճանւեց Տաճկա-Հայաստանի թաղէշ քաղաքում Յարութիւն Տուտաւինան, որ լաւանի էր իր գրող, իր ուստացիչ և իր հասարակական գործիչ: Նա նւիրած էր գաւառին և մանաւանդ իւր հայրենի գաւառին ու գիւղացուն: Առանձին սիրով նա վերաբերւեց գէպի իւր ծննդավայր Պուլթիկ գիւղը, որի մասին նա տպեց մանրամասն մենագրութիւն հայ թերթերի մէջ: 80-ական թւականների երկրորդ կետին նա հրատարակեց Մասկու մէջ գաւառներում արած իւր ճանապարհորդութեան նկարագրութիւնը, ուր ցուց էր տուլիս պատմական և աշխարհագրական հմտութիւն: Ապա նուն Մասիսի և ապա Արևելքի մէջ

մի շարք լոգւածներ տպեց հայ գիւղացու ընթանումների, հաւատավիքների և առանձնակատկութիւնների մասին. Վերջերքս նա թղթակցում էր Հայոցնիքին: Գովկած էր մանաւանդ նորա ինքնատիպումը: Խնդնուալիներէնին և անգլիականին: Զգտելով դէպի գտառը՝ անցեալ տարի նա նորից գնաց հայոցնի Բաղէց, ուր նշանակւեց անօրէն երկու վարժարանների: Նա թաղւեց քաղաքի Կարմրակի կոչւած եկեղեցու պարտիզնում, որով Բաղէցի հասարակութիւնը ուղեց լարդել հանգուցեալի արժանիքները:

## ՆՈՐ ՍՏԱՑԻԱԾ ԳՐԻՔԵՐ

- 1) ? ? ?—1. Մըցող պատգամաւորները  
 2. Հայրական ուր  
 3. Դախապաշտումնք
- Անգլիականիցից թարգմանեց Խանգաղէ Հրատ. Թաւր. Հ. Կրթ. Աէր ընկերութեան: № 1. Թաւրիդ, տպ. Հայոց Արամեան գպրոցի 1895, գինն է 10 շահ (10 կոպ.)
- 2) MOMSEN, THEODOR.—Die armenischen Handschriften der Chronik des Eusebius (առաջած՝ Hermes. Zeitschrift für classische Philologie. dreissigster Band. Berlin, Weidmannsche Buchhandlung, 1895.) առանձին արտառապւած է, ոչ վաճառելի:
- 3) Տէր-ՍԱՐԴԱՐԵԱՆՑ, ՄԵՐԶԱՅ.—Գիւղի շուրջը: Շուշի, տպ. Մահտեսի Յակոբեանի. 1895, գինն է 20 կոպ.
- 4) ՇԱՀ-ՆԱԶԱՐԵԱՆՑ ՍԻՄԷՈՆ.—Նիրեցիոնանութեան հարցը Մոսկվակում: Մոսկւա տպ. Բ. Բարխուզարեանցի 1895. (Ճրի?)
- 5) ԱՆԴԵՐՄԵԿՆ.—Վայրի կարապներ (Հրատարակութիւն մի խումբ օրինարդների): Թիսկիս, տպ. Յ. Մարտիրոսեանցի, 1895, գինն է 8 կոպ.
- 6) ՔԻՇՄԻՇԵԱՆՑ, Ա.—Նախազիտիլիք բուսաբանութեան: Հրատ. Թիֆլ. Հայոց Հրատ. Ընկ., տպ. Շարաձէի, գինն է 80 կոպէկ:

ՎՐԻՊԱԿՆԵՐ պ. Սէլանի «Սասուն» լոգւածում (տես նաև «Մուրճ» 1895 թ. № 5). «Մուրճ» 1895 թ. № 10, 1469. (այսինքն էլ 2469, տող 3) Պրոկոպիոս (և ոչ Օկրոկոպիոս). «Մուրճ» 1895 թ. № 5, 637. Եցուն (ոչ լեզուն). 637. և 637. օնծան (ոչ օննան). 639. տուրքերը (ոչ զնդերը). 643. տաճարը (ոչ դասը). 643. վանուց (ոչ վանալ). 650. մինը (ոչ մեզը). 646. ծաւալում (ոչ ծառալում). 647. ոռորն (ոչ սարն). 650. փիտնալ (ոչ գիտնալ). 651. շունքպիք). 651. անիծուկիս (ոչ անիծակիս):

# ՏԵՂԵԿԱՏՈՒ

Անդրկովկասեան երկաթուղի:

Ճամբորդական գնացք № 1. Թիֆլիսից Բաթում, դուրս է գալիս առաւօտեան 9 ժ. 30 ր., հասնում է Բաթում երեկ. 9 ժ. 45 րոպէ:

Ճամբորդական գնացք № 2. Բաթումից Թիֆլիս, դուրս է գնում առաւօտ. 9 ժ. 40 ր., հասնում է Թիֆլիս երեկ. 9 ժ. 55 ր.:

Պոստավին գնացք № 3. Թիֆլիսից Բաթում, դուրս է գալիս երեկոյեան 6 ժ. 50 ր., հասնում է Բաթում առաւ. 8 ժամ 15 րոպէ:

Պոստավին գնացք № 4. Բաթումից Թիֆլիս, դուրս է գնում գիշերւակ 11 ժ. 20 րոպէ, հասնում է Թիֆլիս յերեկուակ 12 ժ. 25 րոպէ:

Պոստավին գնացք № 3. Բաքուց Թիֆլիս, դուրս է գնում գիշերը 11 ժ. 5 ր հասնում է Թիֆլիս երեկոյեան 5 ժ. 50 ր.:

Պոստավին գնացք № 4. Թիֆլիսից Բաքու, դուրս է գնում ցերեկ. 1 ժ. 10 ր. հասնում է Բաքու առաւ. 7 ժ. 30 րոպէ:

Ապրանքա-ճամբորդական գնացք № 24. Թիֆլիսից Գանձակ, դուրս է գնում երեկոյեան 7 ժամ 27 ր., հասնում է Գանձակ առաւ. 7 ժ. 40 ր.:

Ապրանք-ճամբորդական գնացք № 25. Գանձակից Թիֆլիս, դուրս է գնում երեկոյեան 6 ժ., հասնում է Թիֆլիս առաւ. 7 ժ. 35 րոպէին Թիֆլիսից—Բորժոմ գնացքը դուրս է գալիս կէսօրից չետու 3 ժամին, առանց վագրիջնելու Միխալովուսմ՝ հասնում է Բորժոմ. 8 ժամին 36 րոպէին:

Բորժոմից—Թիֆլիս գնացքը գուրս է գալիս գիշերւակ 12 ժամին 5 րոպէին, առանց վագրիջնելու Միխալովուսմ՝ հասնում է Թիֆլիս առաւօտեան 8 ժամին 15 րոպէ:

Թիֆլիս Վլադիկաւկազի տրակտ:

Երթևեկութիւն ց1-ն նոյեմբերի 1895 թ.

ԹիֆլիսիՑ հինգ տեղանի կարետները դուրս են գնում առաւօտեան 7 և 9 ժամերին, վեցտեղանի օմնիքուսները կէսօրից չետու 3 և 5 ժամին. Հասնում են Վլադիկաւկազ հետեւեալ օրերը կէսօրից չետու՝ կարետները 6 ժ. 50 ր., օմնիքուսները 7 և 9 ժ. 50 ր.

ՎԼԱԴԻԿԱԽԱՐԴԻՑ հինգտեղանի կարետները դուրս են գալիս առաւ. 5 և 9 ժամին, վեցտեղանի օմնիքուսները կէսօրից չետու 4 ժամին և 5 ժամին. Հասնում են Թիֆլիս հետեւեալ օրը կէսօրից չետու՝ կարետները 7 ժամ 25 ր. և 9 ժամին, օմնիքուսները 6 ժ. 40 ր. և 8 ժամ 25 րոպէին:

**Բագրած է**  
**„ՀԱՆԴԵՍ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ“**  
**ԺՈՂՈՎԸ ԾՈՒԻՒ**

VII և VIII գրքերի բաժանուրդագրութիւնը

Երկու գիրքը ամփոփւած կը լինի մի հատորում և բաղկացած  
մինչև 600 երեսից։ Ի միջի այլոց նշանաւոր տեղ կը բռնէ հան-  
գուցեալ Միքայէլ Նալբանդեանի ընդարձակ կենսագրութիւնը։  
Գիրքը լոյս կը տեսնէ առաջիկաց նոյեմբերին։ Բաժանորդագինն է  
3 ր., ապագրութիւնից յետոյ—4 ր։ Յանկացողները դիմում՝ են  
հետեւեալ հասցէով։ Մոսква, Մյանցկայ, ճ. Ермакова.

Հրատարակիչ՝ ՄԿՐՏԻՉ ԲԱՐԻՈՒԴԱՐԵԱՆ

**Լոյս տեսաւ**  
**ԻՒԾՆ ՏՈՒՐԴԵՆԵՒԻ**  
**„ԱՐԶԱԿ ԲԱՆԱՍԵԼԾՈՒԹԻՒՆՆԵՐ“**

(Стихотворения въ прозѣ)

ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԸ

Թարգմանեց

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՃԱՏՈՒՐԵԱՆ

Գինն է **50** կ., ծանապարհածառով **60** կ.

Յանկացողները դիմում՝ են Թիֆլիս կենտրոնական գրավաճա-  
ռանոցին կամ թարգմանչին հետեւեալ հասցէով։ Մոսква, Боль-  
шая Басманская Контора М. Л. Шоршорова.

Александру Շատուրյանъ.

# ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ „ՌԱՍԻՑ“ „РОССИЯ“

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏԻՄ 1881 թ.

Ս. Պետերբուրգում, Բոլյայ Մօրսկայ № 37.

ՀԻՄՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՀԵՍՏԻ ԳՐԱՄԱԳԼՈՒԽՆԵՐ 20,500,000 ՐՈՒԲԼԻ  
ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄՈԼՈՍԱԲԵՐ ԹՂԹԵՐԸ պահուամ են պետական բանկում:

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆՈՒՄ է՝

## ԿԵԱՆՖԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱԼՄԻՆՔՆ ՊՐԱՄԱՊԼՈՒԲԻՆԵՐԻ և եկամուտների, ապահովելու ընտանիքը կամ սեփական ծերութիւնը, բաժինքը աղջիկների համար, թոշակները աղա-ների համար և աղն, առանձին շահաւետ պայմաններով և ապահովադրող ների մասնակցութեամբ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ օգուաներին:

1894 թվի լուսւարի 1-ին «Բոստիա» ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ մէջ ապահովագրուած էին 28,246 անձ 75,621,010 բուրլի դրամագլխով:

## ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ ԴԺԲԱԴԴՅԴԵՊԵՐԻՑ

Առանձին անձների, և թէ համագումար ապահովագրութիւններ դործարաններում ծառակողների և բանւորների, —պակասնեցնելով ապա-հովագրական վճարներ՝ զիւգինդի փոխարէն:

## ՀՐԵՇԴԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ամեն տեսակ շարժական և անշարժ կալւածքները (շինութիւնների, մնա-քենաների, ապրանքների, կահկարասիքի և աղն):


## ՏՐԱՆՍՊՈՐՏՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

գետալին, ցամաքալին և ծովակին. ապահովագրութիւն նաւերի:

Ապահովագրութեան մասին լայտարարութիւնները ԸՆԴՈՒՆՈՒՄ են և ամեն տեսակ տեղեկութիւններ հաղորդուամ են Վարչութեանը Ս. Պետեր-բուրգում (Բոլյայ Մօրսկայ, սեփական տուն, № 37). Կոլկասնեան ՀԸՐ-Ջանի համար ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ վարչութեան մէջ:

Թիֆլիսութ, Սերգիւլսկայա փ. տուն № 6. և բոլոր գործակալու-թիւններում կալսրութեան բոլոր քաղաքներում:

Ապահովագրական տոմսակներ՝ ճանապարհորդներին ապահովագրելու համար զժրադդ զէպքերից երկաթուղիններով և շոգենաւերով ճանապար-հորդութեան ժամանակ տրուամ են նունագչս երկաթուղինների կալարաննե-րում և շոգենաւագին նաւահանգիստներում:



# ԱՐԴԻ ԲՆԴ

ՔՈՂՈՔԱԿԱՆ — ՀԱՍՏԱԿԱԿԱԿԱՆ — ԳՐԱԿԱՆ

## ԱՄՍԱԳՐԻ

ԲԱԺՄԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ 1895 ԹԻՍԿԱՆԻ ՀԱՍՏԱ

ՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ է

ԲԱԺՄԱՆՈՐԴԱԳՐԻՆ: «Մուրճ»-ի բաժանորդագինն է **10** ռուբլի: Ուսուցիչները, ուսանողները, որպէս նաև արհեստաւորները վայելում են **2** ռուբլու զիջում, վճարելով **8** ռուբլի: Բաժանորդագինը կարելի է վճարել նաև մաս-մաս, սկզբում **5** (կամ **4**) ռուբլի, մնացեալը լրացնելով առաջին կիսամեակում:

Բաժանորդ գրւում են, զիմելով՝

ԽՄԲԱԴՐԱՑՈՒՆԸ, Թիֆլիս, Վելեամինեան փողոց, տուն № 8:

Տիֆլիս. Въ Редакцію журнала „МОУРЧІ“.

Tiflis. Rédaction de la Revue „MOURTOI“.

և կամ զիմելով հետեւեալ անձերին, կամ հիմնարկութիւններին:  
Թիֆլիս—  
ԲԱՅՈՒՄ—  
ԲԱՐՈՒՄ—պ. Սարգիս Մակարեան, Ծովիանեանի բանկ. գրասենեակ:

ԿԱՐՄ—պ. Աբէլ Ապրեսեան:

ԱԽԱԼՔԱԼԱՔ—պ. Զալալ Տէր-Գրիգորեան:

ՆՈՒԽԻ—պ.պ. Աբրահամ Բունիածեանց և Խաչատուր Խոջամիրեանց:

ԱԳՈՒԼԻՄ—պ. պ. Ստեփան Արասխանեանց և Աւետիս Դաւթեանց:

ՆԱԽԻՋԵԽԱՆ (հին)—Արսէն վարդապետ Ղլուճեանց:

ՂՁԼԱՐ—պ. պ. Հմայեակ Մաժինեան և Կոստ. Գիւլնազարեան:

ԵԿԱՏԵՐԻՆՈՂԱՐ—պ. Արամ Շապովալեան:

ՄՈՍԿՎԱ—պ. Ալեքսանդր Ծատուրեան:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ—պ. Քր. Բաշինջաղեանին (Гостин. дворъ № 7):